

ՓԱՐԱԶՄԱՆՈՎ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

ԱՍԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ

ՄԵՐԳԵՅ
ՓԱՐԱԶՄԱՆՈՎ

ՀՏԴ 7.071.2:791.43:75/76
ԳՄԴ 85.37-8+85.14-8
Փ 220



*Եղբորս՝ քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր և արձակագիր
Արարատ Փաշայանին՝ սիրով և հպարտությամբ*

Խմբագիր՝ արվեստագիտության թեկնածու Սիրանույշ Գալստյան

ԱՄՏՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ

Փ 220 ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ: Ա. Փաշայան: -Եր., ԵՊՀ հրատ., 2018,
160 էջ:

Մենագրությունը նվիրված է համաշխարհային ճանաչման արժանացած արվեստագետ,
կինոռեժիսոր, սցենարիստ, նկարիչ և գեղագետ Սերգեյ Փարաջանովի կյանքին և ստեղծա-
գործությանը:






ՀՏԴ 7.071.2:791.43:75/76
ԳՄԴ 85.37-8+85.14-8

ISBN 978-5-8084-2310-7

© ԵՊՀ հրատ., 2018
© Փաշայան Ա., 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք	7
Ես հայ եմ իմ բջիջներով.....	13
Մեծարանք	27
Ողբերգական Փարաջանովը	35
«Արա Գեղեցիկ» չնկարահանվածը.....	45
Փարաջանովի մասին	51
Ունկնդրենք Փարաջանովին	57
Բանաստեղծություններ և էսսեներ Փարաջանովին	81
Վերջաբան	102
Սերգեյ փարաջանովի և նրա մասին գոյություն ունեցող հրապարակումների մատենագիտական ցանկ	104
Асатур Пашаян, Сергей Параджанов	158
Asatur Pashayan, Sergei Parajanov.....	159





ՓԱՐԱԶԱՆՈՎ



*Եթե Դոստոևսկին համոզված էր, որ
գեղեցկությունը կփրկի աշխարհը, ապա
Փարաջանովը որոշել էր փրկել գեղեցկությունը:*

Իոսիֆ Բրոդսկի



ՄՈՒՏՔ

Մերգեյ Փարաջանովին Նոբելյան մրցանակի դափնեկիր, բանաստեղծ, դրամատուրգ և թարգմանիչ Իոսիֆ Բրոդսկու (1940-1996) տված գնահատականը խիստ ինքնատիպ է և ճշմարտացի: Եթե Բրոդսկուն՝ որպես այլախոհ գործչի, արտաքսեցին ԽՍՀՄ-ից, ապա մեկ այլ այլախոհ արվեստագետ Մերգեյ Փարաջանովը ճակատագրի բերմամբ շարունակեց ապրել և ստեղծագործել Խորհրդային Միությունում:

Մեծանուն կինոռեժիսոր Մերգեյ Փարաջանովը (Սարգիս Հովսեփի Փարաջանյան) ծնվել է 1924 թվականի հունվարի 9-ին Թիֆլիսում (1936-ից՝ Թբիլիսի)՝ հնավաճառի ընտանիքում: Ազգությամբ հայ, բայց և միջազգային համարում ունեցող Ս. Փարաջանովի նրբաճաշակ ու այլաբանական արվեստը, խորապես ազգային լինելով հանդերձ, միաժամանակ համամարդկային է:

Փարաջանովը ապրել և ստեղծագործել է Վրաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում և Հայաստանում: Քանիցս բանտարկվել է կեղծ մեղադրանքներով և երկար տարիներ անցկացրել խորհրդային բռնապետության բանտերում, նսեմացվել ու զրկանքների ենթարկվել: Բազմաթիվ դժվարությունների է բախվել նաև ստեղծագործական գործունեության շրջանում իր նկատմամբ կիրառված սահմանափակումների ու արգելքների պատճառով, բայց ուժ է գտել՝ շարունակելով ապրել և ստեղծագործել:

Մերգեյ Փարաջանովը, իսկապես, զարմանալիորեն դիմացկուն, անկոտրում կամքի տեր մի մարդ էր: Հոգով ըմբոստ և անկախ լինելով՝ արդարության և ազատամտության նվիրյալ էր ու ռաիվիրա: Արդեն ավելի պատկառելի տարիքում Փարաջանովը համոզված էր, որ դժվարությունները մարդու համար են, որոնք պետք է համբերատարությամբ հաղթահարել: 1978 թ. մարտի 16-ին Երևանից Թբիլիսի գործուղված ռադիոլրագրող Վարուժան Ոսկանյանին տված հարցազրույցի ժամանակ բանտից նոր դուրս եկած Փարաջանովն ասել է. «Վերջին տարիները, որոնք անց են կացրել բարդ պայմաններում, ես համարում եմ իմ կյանքի լավագույն և ամենահետաքրքիր, ամենահագեցած տարիները: Որովհետև, ինչպես ոչ մի այլ տեղում, ես մոտիկից զգում էի մարդուն, իսկ մարդը մերօրյա հերոսն է. լինի բացասական թե դրական, նա ռեժիսորի համար հետազոտության,

դիտողականության առարկա է: Այդ պատճառով, գուցե և դա զարմացնի, բայց դրանք իմ լավագույն տարիներն էին...»¹:

Հարցազրույցի ավարտին Փարաջանովը խնդրել էր անջատել ձայնագրիչը և կասկած հայտնել, որ իրենց զրույցը հազիվ թե եթերով հեռարձակվի: Այս հարցում էլ նա մարգարեաբար իրավացի էր, քանի որ ռադիոեթերում հնչել է վեց թույլ տևողությամբ մի հատված ընդամենը և այն էլ տասնվեց տարի անց:

Փարաջանովից առաջ և նրանից հետո էլ շատ հայ մտավորականներ ու արվեստագետներ նույնպիսի դժվարին ճանապարհով են անցել, բայց ամեն մեկը՝ յուրովի ու տարբեր վերապրումներով: Փարաջանովը համոզված էր. «Մարդը պարտավոր է և պետք է ապրի տառապանքի երջանկությամբ, այլ կերպ նա չի կարող մարդ լինել»²: Նա հանգիստ էր նույնիսկ իր դատավճիռները լսելիս և մի անգամ ուղղակի հակադարձել է դատավորին. «Իմ կատարած զանցանքն այն աստիճանի չէր, որ ինձ դատեիր»³: Դա կարծես նման էր դատավորին ուղղված իտալացի աստղագետ Ջորդանո Բրունոյի հայտնի խոսքին. «Դուք ավելի մեծ սարսավով եք ինձ հայտնում իմ դատավճիռը, քան ես լսում եմ այն»⁴:

Կասկածից վեր է, որ Փարաջանովը շատ դեպքերում որպես զավեշտ էր ընդունում խորհրդային մռայլ իրականությունը: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության օրվա՝ նոյեմբերի 7-ի առիթով նա պիտի գրեր. «Հեղափոխության տոնն էր, և ես ուտում էի կարմիր բազուկից պատրաստված կարմիր կոտլետներ»⁵:

Ի վերջո ո՞րն էր հանճարեղ կինոռեժիսորի մեղքը: Հարցի հստակ պատասխանը տվել է հենց ինքը՝ Փարաջանովը. «Իմ մեղքն այն է, հավանաբար, որ ծնվել եմ: Հետո մանկության պատշգամբից տեսել եմ երկինքը, գեղեցիկ մորս, լեռները, տաճարները, ծիածանի փայլը և էլի ու էլի շատ բաներ: Հետո, ավելի ուշ եղել եմ չճանաչված, և ապա հաջորդել է փառքը: Ես երջանիկ եմ եղել, բարի, ապրել եմ ընկերներով շրջապատված: Ինչ-որ բան ստեղծել եմ, շատ բան զգացել և մի ճշմարտության հանգել, որ այդ ամենի համար պետք է վճարել»⁶:

Ափսոս, սակայն, մեծանուն արվեստագետը շատ քանակ գին վճարեց: Նա գուցե ավելի երկար կյանք ունենար, եթե ապրեր ու ստեղծագործեր միանգամայն այլ միջավայրում:

Մարդկության պատմության ընթացքում շատ հաճախ տաղանդավոր ու հանճարեղ մարդկանց գնահատել են շատ ուշ՝ նրանց մահից հետո միայն:

¹ Для будущих поколений, «Литературная Армения», 2004, с. 88.

² «Գրական քերթ», հունվար 31, 1992:

³ «Երրորդ ուժ», հուլիսի 16-23, 2004:

⁴ **Լ. Գրիգորյան**, Ֆիզիկայի պատմության ձեռնարկ, Երևան, 2007, էջ 58:

⁵ «Новое время», 28 октябрь, 1999.

⁶ **Գ. Նուրիջանյան**, Թատրոն, որտեղ չեն սիրում խաղալ, «Հայաստանի Հանրապետություն», օգոստոսի 16, 2006:

Միշտ էլ նորարարներին ոչ միանշանակ են ընդունել, շատ դեպքերում՝ նույնիսկ հետապնդել՝ ձգտելով օտարել մարդու այդ տեսակը: Այս իմաստով Սերգեյ Փարաջանովը բացառություն չէր: Բայց հետաքրքրական է, որ, չնայած բազմաթիվ զրկանքներին և հալածանքներին, Փարաջանովին իր կենդանության օրոք, այնուամենայնիվ, նաև գնահատել են: Նա սիրվել է ու մեծարվել: Նույնիսկ խորհրդային շրջանում, ավելի ճիշտ՝ այդ դարաշրջանի մայրամուտին, արժանացել է պարգևների և կոչումների: Այսպես՝ 1969 թվականին նկարահանված «Նռան գույն»-ի ռեժիսորին 1988 թվականին՝ շուրջ քսան տարի անց միայն արժանացրին ՀԽՍՀ պետական մրցանակի և մահվան տարեթվին՝ 1990 թվականին, ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչում շնորհեցին: Ի դեպ, նույն տարի նրան արժանացրին նաև ՌԻԽՍՀ ժողովրդական արտիստի կոչման:

Վառ տաղանդով օժտված այս անհատականության հետ մտերիմ հարաբերություններ են ունեցել բազմաթիվ հանրաճանաչ արվեստագետներ ու մշակույթի գործիչներ թե՛ ԽՍՀՄ-ից, թե՛ դրա սահմաններից դուրս: Փարաջանովի հայրական տունը Թբիլիսիում յուրահատուկ ուխտատեղի էր դարձել նույնիսկ նրա կենդանության օրոք: Ականավոր արվեստագետ Սանդրո Ջուլիակյանը «Փարաջանովը շարունակվում է» հոդվածում գրում է. «Նույնիսկ այն տարիներին, երբ Փարաջանովի անունն արգելված էր հրապարակել մամուլում, աշխարհի բոլոր ծայրերից արվեստագետների քարավանները ձգվում էին նեղլիկ ու զառիվեր ձգվող փողոցով, ապա ելնում երկար ու ձիգ աստիճաններով, որոնք բակը շուրջբոլորած երկհարկանի տան ճիշտ կենտրոնում էին: Եվ սա նման էր Երուսաղեմ ուղևորված հավատացյալների ծեսին: Առանց տրտնջալու, առանց սրտները բռնելու և շնչահեղձ լինելու՝ քայլում էին նրանք դեպի վեր: Քայլում էին ոգևորված, ինքնամոռաց հիացումով ու սրտի թրթիռով, որովհետև ակնկալում էին հանդիպում մեծ արվեստի ու մեծ մարդու հետ: Եվ չէին սխալվում, որովհետև Փարաջանով-կուռքը հենց առաջին պահից բաց սեղանով, բաց սրտով ու անսահման բարությամբ էր ընդունում բոլորին»⁷:

Սերգեյ Փարաջանովը մի նոր որակ է հաղորդել համաշխարհային և մասնավորապես հայ կինեմատոգրաֆիային: Այլաբանությունների և կերպարանավորումների մեծագույն վարպետի ֆիլմերը միջազգային տարբեր կինոփառատոներում արժանացել են շուրջ երեք տասնյակ մրցանակի: Դրանցով հիացել են այնպիսի մեծանուն ռեժիսորներ, ինչպիսիք են Անդրեյ Տարկովսկին, Ֆեդերիկո Ֆելլինին, Միքելանջելո Անտոնիոնին, Ժան-Լյուկ Գոդարը, Անջել Վալդան, նաև սցենարիստ և գրող Տոնինո Գուերան, դերասան Մարչելլո Մաստրոյանին, երգահան-բանաստեղծ Վլադիմիր Վիսոցկին, նորաձևության արքա Իվ Սեն-Լորանը և ուրիշներ:

Կյանքի վերջին ամիսներին Մարտիրոս Սարյանը գրել է. «Ես հինգ հազար տարեկան եմ: Նույն տարիքն ունի և Արամ Խաչատրյանը...»: Իսկ քանի՞ տարեկան էր Սերգեյ Փարաջանովը:

⁷ «Էկրան», 1990, № 9, էջ 8:

«Գերմանական մի թերթ ոչ առանց զարմանքի գրել է, որ ֆիլմի («Մոռացված նախնիների ստվերները» - Ա. Փ.) գործողությունը տեղի է ունենում ընդամենը մի քանի տասնամյակ առաջ, այնինչ թվում է, թե այն ծավալվում է 1500 թվականից առաջ»⁸: Հետաքրքիր է, իսկ ի՞նչ կգրեր նույն հեղինակը՝ դիտելով Փարաջանովի ուկրաինական «....ստվերներ»-ից (1964) հետո նկարահանված, հանդիսատեսին դեպի հայկական միջնադար տանող «Նռան գույնը» ֆիլմը (1969), եթե, իհարկե, «ԽՍՀՄ Պետկինոն, նախապես «հոգ տանելով» ֆիլմի ճակատագրի մասին, նրան «շնորհած» չլիներ ցածր, երրորդ կատեգորիա՝ դրանով կանխորոշելով կինոնկարի էկրանային ընթացքը և փակելով նրան միջազգային կինոփառատոներ տանող ճանապարհը»⁹: Համարձակվենք պատասխանել մեր հնչեցրած հռետորական հարցին. Փարաջանովն այնքան տարեկան էր, որքան Մարտիրոս Սարյանը, Արամ Խաչատրյանը և մեր մյուս մեծերը: Այսինքն՝ այնքան, որքան հայ ժողովուրդն է ու իր մշակույթը:


Սերգեյ Փարաջանովի վախճանից ամիսներ անց հիմնովին խորտակվեցին Խորհրդային Միության հիմքերը, այն պետության, որի բանտերում մեծանուն արվեստագետն այդքան տառապեց:

1991 թվականին Երևանում բացվեց Սերգեյ Փարաջանովի թանգարանը, որտեղ մինչ օրս էլ չի դադարում մարդկային հոսքը: Ավելին՝ այն դարձել է մայրաքաղաքի այցեքարտերից մեկը: Նշենք, որ 2016 թվականին Եվրոպական կինոակադեմիան Փարաջանովի թանգարանը ներառել է «Եվրոպական կինոմշակույթի գանձ» ցուցակում: Չի դադարում նաև միջազգային հետաքրքրությունը Սերգեյ Փարաջանովի կյանքի ու ստեղծագործության նկատմամբ: Նրա ֆիլմերը շարունակում են ցուցադրվել, կազմակերպվում են նրա գործերի ցուցահանդեսներ, ֆիլմերի մասին հրատարկվում են ուսումնասիրություններ:

Սերգեյ Փարաջանովի կյանքին ու գործունեությանը նվիրված ծավալուն գրականություն կա հայերենով, ռուսերենով, վրացերենով, ուկրաիներենով, անգլերենով, ֆրանսերենով և այլ լեզուներով: Դրանք տարաբնույթ պարբերականներում տպագրված հոդվածներ են, մենագրություններ, հուշեր, էսսեներ, բանաստեղծություններ:

⁸ **К. Калантар**, Очерки о Параджанове, Ереван, 1998, с. 63.

⁹ **Ս. Գալստյան**, Հայացք մեր կինոյին: Պատմությունը և ներկան, Երևան, 2011, էջ 88:





*Ես հայերեն չեմ գրում, բայց աշխարհին նայում
եմ հայերեն:*

Վիլյամ Սարոյան



ԵՍ ՀԱՅ ԵՄ ԻՄ ԲԶԻԶՆԵՐՈՎ

Սերգեյ Փարաջանովի ողբերգական վախճանից մեկ տարի անց՝ 1991 թ., «Արվեստ» ամսագրում լույս է տեսել ծագումով հայ, ծնունդով Թբիլիսիից, բանաստեղծ, թարգմանիչ և արևելագետ Գիվի Շահնազարի՝ Սերգեյ Փարաջանովի հիշատակին նվիրված «Աղամանդը» բավական բնութագրական վերտառությամբ հոդվածը: Ստորև ներկայացնենք մի հատված այդ հոդվածից. «Ես, որ նրա ստեղծագործությունների մեծագույն մասի ոչ վատ գիտական ու բարեկամն եմ, սկսած Վրաստանից, որտեղ նա ծնվել և գործել է, վերջացրած Հայաստանով՝ իր հայրենիքով, որտեղ նա «Սայաթ-Նովա» է ստեղծել և վերջին հանգրվանը գտել, նման մարդու դժբախտությանը մինչև վերջ չեմ կարող հավատալ: Գիտե՞նալով, որ հայրենիքն այժմ քան երբևէ խիստ կարիքի մեջ է, մինչև ողն ու ծուծը հայ մարդ և ստեղծագործող Սերգեյ Փարաջանովն ավելի «հայացավ»»¹⁰:

Ճակատագրերը տարբեր են: Սա անվիճելի է, եթե, իհարկե, *ճակատագիր* բառի ստուգաբանությունը, իսկական և գիտական բացատրությունը որևէ մեկը կարողանա մեկնաբանել: Բացատրական գրեթե բոլոր բառարաններում այն ներկայացված է որպես մարդու համար նախասահմանված բախտ, կենսական պայմանների ամբողջություն, դեպքերի, ապագայի անխուսափելի կանխորոշվածություն: Եթե հավատանք և ապա անվերապահորեն ընդունենք վերը արձանագրվածը, ապա Փարաջանովի պարագայում պիտի հավաստենք, որ նա զարմանալի, ոչ սովորական ու տարուբերական ճակատագրի տեր էր...

Փարաջանովը ծնվել է ուշ միջնադարից մինչև 20-րդ դարի սկիզբը արևելահայ մշակույթի կենտրոն հայաշատ Թիֆլիսում: Մանկության ու պատանեկության տարիներից սկսած՝ ընտանիքի խոսակցական լեզուն ռուսերենն է եղել: Ստացել է ռուսական կրթություն: Հետագայում խոստովանել է, որ

¹⁰ Գ. Շահնազար, Աղամանդը, «Արվեստ», 1991, №1, էջ 23:

դպրոցում լավ չի սովորել: Դպրոցն ավարտելուց հետո ուսումնառությունը շարունակել է Թբիլիսիի երկաթուղային տրանսպորտի ինստիտուտում: 1943-1945 թթ. ուսանել է Թբիլիսիի կոնսերվատորիայի վոկալի ֆակուլտետում և միաժամանակ պարարվեստի ուսումնարանում: 1945 թ. փոխադրվել է Մոսկվայի կոնսերվատորիա, ուսանել Նինա Դորլիակի դասարանում: Վերջնականապես համոզվելով, որ իր կյանքը կինոն է, կինոարվեստը, 1946 թ. ընդունվել է Մոսկվայի կինեմատոգրաֆիայի համամիութենական ինստիտուտի ռեժիսուրայի ֆակուլտետ՝ Իգոր Սավչենկոյի (1906-1950) արվեստանոց: Վերջինիս վաղաժամ մահվանից հետո Փարաջանովն ուսանել է բանաստեղծական կինոյի առաջին դեմքերից մեկի՝ Ալեքսանդր Դոլժենկոյի (1894-1956) մոտ: Ինստիտուտն ավարտել է 27 տարեկանում:

Առաջին կինը՝ Նիգյար Սերաևան, թաթարուհի էր, երկրորդը՝ Սվետլանա Շչերբատյուկը՝ ուկրաինուհի: Փարաջանովը խորհրդային Հայաստան է եկել 1960-ականների երկրորդ կեսին: Շատերի կարծիքով՝ մինչև Հայաստան գալը հայ մշակույթին գրեթե ծանոթ չի եղել և հայերեն չի խոսել: Սակայն հետաքրքրական մի փաստ ներկայացնենք. հայկական ռադիոյի թղթակից Վարուժան Ոսկանյանի հետ վերոհիշյալ գրույցի ժամանակ, երբ վերջինս խնդրել է «Թիֆլիսի հրաշալի բարբառով մի քանի խոսք ասել հայրենակիցներին», Փարաջանովը հրաժարվել է՝ պատասխանելով. «Երբ ես թափառում եմ Հավլաբարում կամ քայլում եմ Մայդանում և հանդիպում իմ հայ ընկերներին, ինձ թվում է, որ ես շատ լավ եմ խոսում հայերեն: Բայց երբ իմ առաջ տեխնիկա է, և ես լսում եմ ձեր խոսքը, ինձ թվում է, որ ես երբեք չեմ համարձակվի անարգել Պարույր Սևակի մեծն լեզուն, հասկանո՞ւմ եք: Ես գիտեմ Հայաստանի պոեզիան, գիտեմ Սիլվա Կապուտիկյանին, Շիրազին... Կարծում եմ՝ իմ ֆիլմը՝ «Նռան գույնը», ավարտվում էր զարմանալի բառով՝ «աշխարհումս». այն դարձավ կյանքիս նշանաբան: Աշխարհումս... Այդ բառի մեջ ես դնում եմ հայի, նրա քարերի, հողի հանդեպ իմ վերաբերմունքի ողջ իմաստը»¹¹:

Փարաջանովը կյանքի բերումով հիմնականում շփվել է ռուս, ուկրաինացի և վրացի գործընկերների հետ: Ստորագրել է Սերգեյ Փարաջանով, հազվադեպ՝ Սարգիս Փարաջանյան... Ասել է՝ ճիշտ է, որ անունը Սարգիս է, բայց այդ անունով միայն մայրն էր իրեն դիմում: Հետագայում շատ խորհրդանշական ձևով բացատրել է, թե ինչու են իրեն անվանակոչել Սարգիս. «Իմ մանկության մարտին քաղաքի վրայով թռչում էր քամիներից պոկված Սուրբ Սարգիս եկեղեցու զմբեթը՝ սրբի, ում պատվին ինձ Սարգիս անվանեցին»¹²:

«Քամիներից պոկված Սուրբ Սարգիս եկեղեցին» ուշ միջնադարում Տփղիսի (Թիֆլիս) 24 հայկական եկեղեցիներից մեկն էր, այն Տփղիսի, որ 17-րդ դարի քսանական թվականներին հիշատակվել է նաև որպես «հայոց

¹¹ Для будущих поколений, «Литературная Армения», 2004/6, с. 89.

¹² «168 ժամ», նոյեմբերի 13-14, 2008, էջ 1:

քաղաք»¹³: Փարաջանովի հիշատակած Սուրբ Սարգիս եկեղեցին հայտնի է XI դարից: 1770 և 1831 թվականներին այն վերակառուցվել է: Ի թիվս հայկական այլ հուշարձանների՝ 1930-ականներին Ստալինի և Բերիայի անմիջական նախաձեռնությամբ այն հողին հավասարեցվեց: Այստեղ գուգահեռաբար վերհիշում են «Նռան գույն»-ի այն կադրը, երբ մեր երկիր ներխուժած նվաճողների արձակած նետը գետին է տապալում հայկական եկեղեցու գմբեթի որմնանկարը, և սուրբ Աստվածածնի պատկերը փշուր-փշուր է լինում:

Հնարավոր է, որ Փարաջանովը հայի հոգեկերտվածք ունենար... Հնարավոր է: Եվ այն էլ ինչպե՞ս: Ջտարյուն հայ էր Սերգեյ Փարաջանովը, ով ուներ ոչ միայն տարբեր ազգերի մշակույթն ու սովորույթները գեղարվեստորեն մեկնաբանելու կարողություն և տաղանդ, այլև հայկական արվեստն ու ոգին օտարին ներկայացնելու ազնիվ մղում: Փարաջանովը, չիրականացած մի քանի այլ մտահղացումներից բացի, «Արա Գեղեցիկ», «Մասունցի Դավիթ», «Խոստովանանք», «Հին աստվածներ» (ըստ Լևոն Շանթի), «Շուշանիկի նահատակությունը» չնկարահանված հանճարեղ կինոսցենարների հեղինակն է:

1969 թվականին Երևանում տված հարցազրույցներից մեկում ահա թե ինչ է ասել Փարաջանովը «Հայֆիլմ»-ի՝ ազգային թեմաներով ստեղծվելիք կինոնկարների բացակայության մասին. «Դժբախտաբար, «Հայֆիլմ» ստուդիայի սցենարական պորտֆելում բացակայում են սցենարներ Մաշտոցի, Նարեկացու, Չարենցի, Թորոս Ռոսլինի, Մասունցի Դավիթի, Գայի, Կոմիտասի, Թումանյանի, Սպանդարյանի մասին: Պատճառն այն է, որ մեր նկարիչները, բանաստեղծները, գիտնականները միայն գոյակցում են Հայաստանի կինեմատոգրաֆիստների հետ և ոչ թե ակտիվորեն ստեղծում կինեմատոգրաֆիա»¹⁴:

Մի առիթով *Թբիլիսի* իր բնակարանում՝ հայկական շրջապատում, ասել է. «Ես որ մեռնեմ, հայերդ ու վրացիներդ կռիվ եք տալու: Դուք ասելու եք, որ ես հայ եմ, վրացիներն ասելու են, որ ես վրացի եմ»¹⁵:

1988 թվականի օգոստոսի վերջին Փարաջանովը Վենետիկում մասնակցել է իր վերջին՝ «Աշուղ Ղարիբ» կինոնկարի ցուցադրություններին¹⁶, որից երկու օր անց նշանավոր հայագետ, փիլիսոփայության դոկտոր, վարդապետ Պողոս-Լևոն Ջեքիյանի ուղեկցությամբ մտել է Մխիթարյան միաբանության Սուրբ Ղազար կղզին: Տպավորությունների մատյանում ռուսերենով

¹³ Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հատոր Բ, Երևան, 1978, էջ 321:

¹⁴ Ջրույց Սերգեյ Փարաջանովի հետ: Հարցազրույցը վարեց Գ. Յանկովսկայա-Միսակյանը, «Էկրան», 1969, № 5, էջ 4:

¹⁵ **Ռ. Մաթոսյան**, Հարդագողի կինոճանապարհով, Երևան, 2007, էջ 43:

¹⁶ Նշենք, որ իտալական մամուլը շատ բարձր է գնահատել ֆիլմը: Առաջին ցուցադրումը կայացել է 1988 թ. օգոստոսի 29-ին:

գրել է. «Այստեղ՝ Սուրբ Ղազարի մեջ, պահվում է հայկականը, այսինքն՝ գեղեցիկը»¹⁷:

Սերգեյ Փարաջանովը միշտ հիացել է հայկական եկեղեցիներով ու պատմական հուշարձաններով: Ասվածի ապացույցն է Բջնիի Աստվածամոր եկեղեցու վերաբերյալ նրա դիտարկումը, որտեղ նկարահանվել են «Նռան գույն»-ից որոշ կադրեր: Փարաջանովը գրել է. «1966 թվականի աշնանը Բջնիում էի, որ գտնվում է Երևանից քառասուն կիլոմետր հեռավորության վրա: Աստվածամոր տաճարը՝ IX դար: Գլուխգործոց...

Ամրոցի պատերն ավերված են: «Հայնախագիծը» մտադրվել է ավերակներին համակցել «Ինտուրիստ» ֆիրմային պատկանող ապակեպատ մի սրճարան:

Ակամայից մտածում ես, որ հայերը մոռացության են մատնել իրենց զորավոր ուժը՝ քարը...

Եվ եթե դուք սիրում եք հնագույն հայ ճարտարվեստը, խուսափեք լինել Բջնիի նոր գերեզմանատանը... Շիրիմներն այնտեղ պատված են մետաղով, մետաղե սպիրալներով, նման այն կիոսկներին, որտեղ ոսկերչական զարդեր են վաճառում, ուստի գիշերով էլ ցերեկային լույս են ցոլացնում ներսում»¹⁸:

Յարդ բազմաթիվ հարցականներ պարունակող «Նռան գույն» ֆիլմը դիտելիս ակամա հարց է առաջանում՝ առանց հայ ժողովրդի պատմության և հայ մշակույթի խորախորհուրդ նրբերանգների իմացության՝ արդյոք հնարավո՞ր էր նման ֆիլմ նկարահանել: Իհարկե՝ ոչ: Վերջիվերջո, կա նաև գեներտիկ իմացություն կամ ինտուիցիա:

Տեղին է այստեղ ներկայացնել մեծ արվեստագետի՝ Հայաստանին տված սեղմ բնութագիրը. «Հայաստանն ինձ համար ճամփորդության վայր չէ: Ես հայ եմ իմ բջիջներով, ուղնուծուծով և ամեն ինչով: Ես իմ պարտքը հայրենիքիս հանդեպ կատարել եմ ինչ-որ չափով: Թեկուզ արդեն այնքանով, որ հայկական կինոյում մի փոքրիկ պատուհան եմ բացել, որից կարելի է գննել Նարեկացու և Սայաթ-Նովայի, Թորոս Ռոսլինի և Սարգիս Պիծակի, Հադ-պատի և Սանահինի գեղարվեստական զարմանահրաշ աշխարհն արդի կինոհայեցողությամբ»¹⁹:

Ամենին պատահական չէ Փարաջանովին որպես մաքրամաքուր հայ կինոռեժիսոր ներկայացնելու հայկական շրջանակների ձգտումը: «Փարաջանովի կինեմատոգրաֆը հայկական կինո է, քանի որ նրա արվեստի մեխանիզմը խիստ բնութագրական է ողջ հայ մշակույթի համար: Վարպետի ստեղծագործության գեներտիկան արմատներով հասնում է հայկական գեղարվեստական մտքի ճշմարիտ սինթեզին, որտեղ չափազանց շատ են ու-

¹⁷ **Կ. Դաքեսյան**, Պարաճանով Սուրբ Ղազարին մեջ, «Յառաջ», Փարիզ, սեպտեմբերի 16, 1988:

¹⁸ «Սովետական արվեստ», 1988, № 5, էջ 17:

¹⁹ **Հ. Թահմիզյան**, Ս. Փարաջանյան. հայկական կինեմատոգրաֆի հպարտությունը, «Համայնապատկեր», 2001, № 4, էջ 5:

նիվերապության օրինակները. Մեսրոպ Մաշտոցից մինչև Արշիլ Գորկի կամ Սայաթ-Նովա ու Մարտիրոս Սարյան»²⁰:

Ի տարբերություն իր շատ ու շատ հայրենակիցների՝ Փարաջանովը խորապես գիտակցում էր, որ իր վերջնական հանգրվանը Հայաստանն է: Ահա թե ինչու, Փարաջանովի արվեստի ջերմ երկրպագու, ժամանակին «Ֆիլմ» թերթի գլխավոր խմբագիր Ռոբերտ Մաթոսյանի բնութագրմամբ, «Փարաջանովը՝ XX դարի այդ մեծագույն կինոբեմադրիչը, ինքն իրեն վերադարձրեց Հայաստանին: Իր բոլոր կոլաժներն ու մասունքները Հայաստանում ցուցահանդես կազմակերպելու պատրվակով բերեց Երևան և թողեց Հայաստանին, իր նոր կառուցվող տուն-թանգարանին, որտեղ չապրեց գեթ մեկ օր անգամ: Եվ որտեղ ապրում է հավիտյան»²¹:

Նշենք, որ Փարաջանովի թանգարանը հիմնադրվել է դեռևս 1988 թվականին՝ Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարանում Փարաջանովի կոլաժների, ինստալյացիաների և գեղարվեստական ինքնատիպ ոճով արարված այլ աշխատանքների առաջին անհատական ցուցահանդեսից հետո: Նույն թվականին Չորագյուղ ազգագրական թաղամասում Փարաջանովին հատկացվել է երկու կից կառույց՝ բնակության և կառուցվելիք թանգարանի համար: Սակայն 1988 թվականի ավերիչ երկրաշարժի պատճառով շինարարական աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են: Ահա թե ինչու թանգարանը բացվել է միայն 1991 թվականին:

Ո՞րն էր Փարաջանովի՝ Հայաստան գալու նպատակը: Ի՞նչ էր փնտրում այդ հանճարեղ ու խենթ արվեստագետը Հայաստանում: Հարցի առավել ընդհանրական պատասխանը ժամանակին տվել է մեկ ուրիշ հանճարեղ արվեստագետ՝ Վահրամ Փափագյանը. «Հանճարը արժվի աչքեր ունի, տեսնում է ավելի հեռուները, քան որևէ ուրիշ տեսանող արարած, և տեսածը իրենն է համարում իրավացիորեն այն պարզ պատճառով, որ բոլորից հեռուն է տեսնում և բոլորից շատ»²²:

«Մոռացված նախնիների ստվերները» ֆիլմի բերած համաշխարհային ճանաչումից հետո դադարեցրին, փակեցին Փարաջանովի հաջորդ՝ «Կիևյան որմնանկարներ» ֆիլմը: 1966 թվականին տեղափոխվելով Երևան՝ Փարաջանովն առաջին իսկ օրվանից մխրճվեց հայ մշակույթի տարաբնույթ օջախների խորխորատների մեջ, գտավ նոր ծանոթներ և գործընկերներ: Սիրեց Հայաստանը, իր համար նոր Հայաստան հայտնաբերեց և մի պայծառ առավոտ բարձրաձայնեց. «Երևանի բոլոր բնակարանների լուսամուտները պետք է նայեն դեպի Արարատները»:

Փարաջանովը դարձավ արվեստագետների հանրության մի մասը: Նա սկսեց այցելել Մինաս Ավետիսյանի արվեստանոց, որը, Հենրիկ Իգիթյանի

²⁰ **Հ. Սիմոնյան**, Սա մեր երկիրն է, Երևան, 2008, էջ 243:

²¹ **Ռ. Մաթոսյան**, Հարդագողի կինոճանապարհով, էջ 44:

²² **Վ. Փափագյան**, Թանձրացումներ (կազմեց և համակարգեց Գ. Աբաջյանը), Երևան, 1988, էջ 76:

բնութագրմամբ, սրբատեղի էր. «Մինասի արվեստանոցը վերածվել էր յուրօրինակ կենտրոնականի: Այստեղ կարելի էր հանդիպել բանաստեղծ Պարույր Սևակին, գրողներ Կոստան Չարյանին, Հրանտ Մաթևոսյանին, Աղասի Ավագյանին, Թելման Չուրաբյանին, գիտնականներ Արտեմ Ալիխանյանին և Արմեն Թախտաշյանին, կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանին, Առնո Բաբաջանյանին, Ավետ Տերտերյանին, Էդգար Հովհաննիսյանին, Տիգրան Մանուրյանին, դաշնակահար Յակով Չարգարյանին, լրագրողներ Յուրի Առաքելյանին և Լևոն Դարբինյանին, կինոռեժիսորներ Սերգեյ Փարաջանովին, Յուրի Երզնկյանին, Մարատ Վարժապետյանին, արվեստաբաններ Ալեքսանդր Կամենսկուն և Կիմ Բակշիին»²³:

Փաստավավերագրական ֆիլմերի երևանյան ստուդիայում 1966 թվականին քիֆլիսահայ տաղանդաշատ նկարիչ Հակոբ Հովնաթանյանին նվիրված ընդամենը ութ րոպե տևողությամբ, սակայն ամբողջական, պոետիկ ֆիլմ-դիմանկարը ստեղծելուց հետո Փարաջանովը ձեռնամուխ եղավ Սայաթ-Նովային նվիրված ֆիլմի նկարահանմանը այս անգամ արդեն «Հայֆիլմ»-ում: Սակայն հանճարեղ կինոռեժիսորը կարծես մարգարեաբար զգում էր, որ Հայաստանում իր նկարահանելիք կինոնկարը լավ չի ընդունվելու: Այդպես էլ եղավ: 1969 թվականին Երևանում «Նռան գույն»-ի առաջին ցուցադրումների ժամանակ և հետագայում էլ կինոդահլիճները գրեթե դատարկ էին: Այս տեսանկյունից հետաքրքրական է ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, դիրիժոր Սուրեն Չարեքյանի (1901-1979) դիտարկումը. «Երբ «Նռան գույնը» դիտեցինք կինո «Նաիրի»-ում, և երբ ցուցադրման կեսից դահլիճը կամաց-կամաց դատարկվում էր, և երբ մեր կոկորդում հասունանում, բայց դուրս չէր թռչում ճիշդ, հասկացանք, որ դահլիճը լքողները մեղավոր չէին: Նրանք, մենք, ապրում էինք մի հասարակարգում, որը կամաց-կամաց քամել էր մեր արյան ազգային գնդիկները, և եթե մի մանկուրտ դեռ չէին դարձել, ապա այդ ճանապարհի վրա էին»²⁴:

Յավալի է, սակայն իրողություն, որ այդ բարձրարժեք ֆիլմը չհասկացան, չընդունեցին անգամ Հայաստանի մտավորականները. «Չարմանալի իրողություն. մայրաքաղաքի մտավորականների սովոր խումբ՝ գիտության անվանի դեմքեր, անգամ արվեստագետներ ու գրողներ, վճռականորեն մերժում էին «Նռան գույնը»»²⁵:

Սերգեյ Փարաջանովի արվեստի մեծ երկրպագու, Փարաջանովի ուսանողական ընկեր, օպերատոր-լուսանկարիչ Գուրգեն Միսակյանի կինը՝ Գալինա Յանկովսկայա-Միսակյանը, վկայում է. «Երևանում ցուցադրվել էր «Նռան գույնը»: Չէին հասկանում: Նամակ գրեցի Փարաջանովին Կիև՝ խնդրելով գալ, բացատրել: Փարաջանովը պատասխանեց. «Ի՞նչը բացատրեմ: Ինչո՞ւ: Դեռ կարող են հասունանալ»»²⁶:

²³ Հ. Իզիբյան, Ջաջուռեցի Մինասը, Երևան, 2000, էջ 31:

²⁴ Ռ. Ջրբաշյան, Խոհերի և ընդվզումների ուղեբեռով, Երևան, 2005, էջ 326:

²⁵ Ռ. Մադոյան, Նռան գույնը և Փարաջանովի լեգենդը, Գլենդել, 2001, էջ 61:

²⁶ Հ. Գուլակյան, Դարը՝ մեր մեջ, մենք՝ դարի, Երևան, 2006, գիրք առաջին, էջ 14:

Հայաստանում, մասնավորապես Երևանում «Նռան գույն»-ի չընդունվելու պատճառները շատ էին: Առաջինը և, ըստ ամենայնի, վճռորոշն այն էր, որ Երևանում 1960 թվականին ռեժիսոր Կիմ Արզումանյանը արդեն նկարահանել էր «Սայաթ-Նովա» հեռուստաֆիլմը: Եվ հիմա Երևան է ժամանել հայերեն չխոսող մի հայ կինոռեժիսոր ու մարդկանց ռուսերենով փորձում է համոզել, որ իր նոր «Սայաթ-Նովա» նկարահանվելիք ֆիլմը նոր խոսք է մեծ պոետի և հանճարեղ սիրերգակի մասին:

Կիմ Արզումանյանը «Սայաթ-Նովա» ֆիլմում լիովին լուծել էր իր առջև դրված խնդիրը: Այդ ֆիլմում Սայաթ-Նովան խեղճ ու կրակ մի սազանդար է, Աննայի սիրուց խենթացած, ռամիկին, ճնշվածին ու աշխատավորին սատարող մի աշուղ: Ոչ ավելին: Ահա թե ինչ է գրել Սերո Խանգադյանը Կիմ Արզումանյանի նկարահանած «Սայաթ-Նովա» հեռուստաֆիլմի մասին. «Սեր հավաքույթները գրեթե միշտ համեմվում էին Սայաթ-Նովայով: Նախ մի բան էր արտասանում Պարույրը, ինձ ստիպում նույնը անել, ապա Հրաչյա Հովհաննիսյանին խնդրում, որ երգի Սայաթ-Նովա: Պարույրը աստվածորեն սիրում էր Սայաթ-Նովային: Մի անգամ ես նրան հարցրի՝ հեռուստացույցով «Սայաթ-Նովա» կինոնկարը տեսե՞լ ես: Նա դառնացավ.

- Բանի նման չէ:

- Ծաղր է Սայաթ-Նովայի հասցեին,- ասացի ես: Սայաթ-Նովային դարձրել են փողոցի աշուղ, ողորմելի խեղճություն: Հոգին խեղել են, բանաստեղծական լույսը մարել»²⁷:

Նշենք, որ մինչև «Նռան գույնը» ֆիլմը նկարահանելը Փարաջանովը դրնեղուռ ընկած կարդում էր իր նոր ֆիլմի սցենարը: Կարդում էր Երևանի պետական համալսարանում, Արվեստի աշխատողների տանը, գրողների միությունում: Միայն թե մարդիկ կարողանան հասկանալ, որ նոր նկարահանվելիք ոչ մի կապ չունի հնի հետ:

Հետաքրքրական է, որ «Սայաթ-Նովա» ֆիլմի նկարահանումների ընթացքում Փարաջանովը Մոսկվա է ուղարկել մի զավեշտական հեռագիր. «Մոսկվա, Կրեմլ, Պոլիտբյուրո: «Սայաթ-Նովա» ֆիլմի նկարահանման համար անհրաժեշտ է Սևանա լճի իշխան ձուկ: Սևանա լճում հնարավոր չեղավ գտնել այդ ձուկը: Վերջին երկու իշխանները կենտկոմի առաջին քարտուղար Քոչինյանի սեղանին են: Խնդրում եմ ձեր կարգադրությունը՝ նրա սեղանից վերցնելու այդ ձկները նկարահանման համար: Փարաջանով»²⁸:

Փարաջանովի՝ վերը հիշատակված զավեշտին անդրադարձել է նաև «Հայֆիլմ»-ի երբեմնի տնօրեն Ռազմիկ Մադոյանը. «Չունենալով վախ ու փոխարենն ունենալով անսպառ հումոր և սրամտություն՝ Փարաջանովը յուրաքանչյուր ղեկավարին օժում էր դիպուկ ածականներով՝ նրանց անվան շուրջ հորինելով նաև ամենաանհավանական ծիծաղելի պատմություններ:

Այսպես, Մոսկվա, ԽՍՀՄ Պետկինոյի կոմիտեի նախագահ Ա. Վ.

²⁷ **Ս. Խանգադյան**, Ինչպես հիշում եմ, Երևան, 1988, էջ 275:

²⁸ **Ք. Загребельный**, Волшебная нитка Параджанова, «Литературная Армения», 1988, № 2, с.107.

Ռոմանովին տված հեռագրում գրել էր, թե Հայաստանի Կուսկենտկոմի առաջին քարտուղար Անտոն Երվանդի Քոչինյանը Սևանա լճի իշխան ձկները լրիվ կերել է, և ինքը գեթ մեկը չի գտնում, որ ֆիլմում նկարահանի: Մեկ ուրիշ հեռագրում փաստում էր, թե Երևանի շուկաներում թարխունն ու կոտեմը աստղաբաշխական գներ ունեն, իսկ իր ստացածը չնչին գրոշներ են»²⁹:

1968 թվականի աշնանը «Հայֆիլմ»-ի գեղարվեստական խորհրդի ընդլայնված նիստում քննարկվել է Սերգեյ Փարաջանովի «Սայաթ-Նովա» ֆիլմը: Քննարկմանը մասնակցել են Մարտիրոս Սարյանը, Բագրատ Հովհաննիսյանը, Մորուս Հասրաթյանը, Լաերտ Վաղարշյանը, Խաչիկ Եսայանը, Սիլվա Կապուտիկյանը, Գրիգոր Խանջյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Սարգիս Մուրադյանը և այլք³⁰: Փարաջանովը քննարկմանը ներկա չի եղել: Քննարկումն անցել է շիկացած մթնոլորտում: Եղել են թեր և դեմ կարծիքներ: Հիմնականում քննարկվել է ֆիլմի վերնագրի հարցը: Պարույր Սևակն այդ քննարկմանը ներկա չի եղել: Սակայն նա մասնակցել է «Սայաթ-Նովա» ֆիլմի սցենարի քննարկմանը: Ահա թե ինչպես է այն ներկայացնում ծնունդով դարձյալ թիֆլիսեցի, սակայն Հայաստանում կայացած տաղանդավոր արձակագիր, սցենարիստ, նկարիչ և կինոռեժիսոր Ադասի Այվազյանը. «Սցենարը նորույթ էր և լավ նորույթ էր... Կարող եմ ասել, որ սցենարը ապագա ֆիլմից ավելի ուժեղ էր... Ինչպես ամեն նոր բան, եթե դա տաղանդավոր է, ստեղծագործողի իրական ներկայությունն է առկայում, և ազդեցությունն անպայման է... Առաջին ընթերցումը տեղի ունեցավ կինոստուդիայի տնօրենի առանձնասենյակում, որտեղ առաջատար մի երկու ռեժիսորի հետ նաև ես էի և Պարույր Սևակը: Սևակի ներկայությունը պայմանավորված էր այն բանով, որ նա ևս սցենար ուներ Սայաթ-Նովայի մասին՝ ստուդիայի կողմից վավերացված պայմանագրով: Վճռվում էր Փարաջանովի սցենարի ճակատագիրը: Իրավիճակը բարդ էր. ի՞նչ վերաբերմունք պիտի դրսևորի Սայաթ-Նովայով զբաղվող հմուտ Սևակը դրսից եկած, հայերենից հեռու «կինոշնիկի» նկատմամբ: Ամեն ինչից երևում էր, որ բանաստեղծը (ակնարկում է Պարույր Սևակին.- Ա. Փ.) կանխապատրաստ մերժողական եռանդով էր լիցքավորված, սակայն, երբ Փարաջանովը սկսեց կարդալ, ոչ խաղալ իր սցենարը, բոլորին ընդգոգեց արվեստի հզոր երևույթը... Ափսո՛ս, այդ ներկայացմանը քչերն էին ներկա, որովհետև, կիսմարձակվեմ ասել, դա ֆիլմի առաջին շունչն էր, չեղծված, ուրիշի ձեռքին դեռ չդիպած, գրաքննության միջանցքները չանցած ոգևորությունը»³¹:

Ի վերջո, Պարույր Սևակը հավանել է սցենարը և ասել. «Դուք ցանկանում եք, թե չէ, կինոնկարը ձեր դուրը գալիս է, թե չէ, միևնույն է, Փարաջանովն աշխատում է հենց այսպես: Փարաջանովի ֆիլմն այլ կերպ լինել չի

²⁹ **Ռ. Մարդյան**, Նշան գույնը և Փարաջանովի լեզունը, էջ 32:

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 117-198:

³¹ **Ա. Այվազյան**, Եղած-չեղածը՝ մի կյանք, Երևան, 2005, էջ 258-259:

կարող: Այն կարող է միայն այսպիսին լինել: Կընդունեք նրա արվեստը, թե չեք ընդունի, ձեր գործն է: Ես այն ընդունում եմ»³²:

Մինչև «Նռան գույնը» ֆիլմի էկրան բարձրանալը առաջարկություն է եղել, որ Փարաջանովը համագործակցի Պարույր Սևակի հետ: Այդ մասին կա Սիլվա Կապուտիկյանի վկայությունը. «Ինձ ասացին, որ Փարաջանովը հրաժարվել է Պարույր Սևակի հետ աշխատելուց: Լավ է արել, որ հրաժարվել է: Որովհետև դա միայն Փարաջանովի աշխարհն է: Պետք է նկարի այնպես, ինչպես ինքը զգացել է: Եվ կարծում եմ, լավ է, որ ինքը մենաշնորհ է ունեցել»³³:

Հատկանշական է, որ Ադասի Այվազյանը խիստ յուրովի է ընկալել ու ներկայացրել «Նռան գույնը» ֆիլմը. «Փարաջանովը Հայոց Մարդակազմության բազմաթիվ պոռթկումներից մեկն էր: Պատահական չէ, որ նրա լավագույն և ժառանգ չունեցող ֆիլմը «Սայաթ-Նովան» է, որի հեղինակը Հայաստանն է, ինչպես և հեղինակն է Փարաջանովի: Հետագայում արված գործերը լոկ «Սայաթ-Նովայի» վիժվածքներն են: Ասեմ, որ սցենարի առաջին ընթերցողներից եմ»³⁴:

Կինոգետ, արվեստագիտության թեկնածու Սուրեն Հասմիկյանի վկայությամբ՝ սկզբում Փարաջանովը նախընտրում էր «Աշխարհում» վերնագիրը, հետո որոշել էր անվանել «Սայաթ-Նովա»: Ֆիլմի շուրջ ծագած վեճերի հետևանքով, որպեսզի այն հանկարծ առհասարակ չկասեցվի, որոշվում է փոխել վերնագիրը: Այդ մասին վկայում է կինոգետ Կարեն Քալանթարը: Վերջինս պատմում է, որ «ո՛չ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և ո՛չ էլ ԽՍՀՄ Պետկինոն չցանկացան իրենց վրա վերցնել պատասխանատվությունը նկարի համար. նրանց կարծիքով ֆիլմը ոչ մի ընդհանուր բան չունեի Սայաթ-Նովայի պատմական կերպարի հետ և անհասկանալի էր: Միութենական Պետկինոյի նախագահ Ա. Ռոմանովը պայման դրեց. ֆիլմը կընդունվի, եթե հավանություն տա հանրապետության ղեկավարությունը: Ստուդիան պետք է փրկել նկարի վրա ծախսված 750 հազար ռուբլին: Ֆիլմի ճակատագիրը վճռվեց Կենտրոնական կոմիտեի քարտուղարության նիստում: Ելքը գտնվեց ԿԿ-ի առաջին քարտուղար Ա. Քոչինյանի ցուցաբերած ճկունության շնորհիվ: Քանի որ մեծամասնությունը համաձայն էր այն հարցում, որ ֆիլմում կոմունիստական գաղափարախոսությանը հակառակ ոչինչ չկա, որոշվեց նկարը թույլ տալ, բայց փոխել անունը»³⁵: Փարաջանովը չի առարկել, և այն օրերին Պետկինոյի նախագահ նշանակված գրող, գրականագետ Գևորգ Հայրյանի (1913-1999) առաջարկությամբ կինոնկարը վերանվանվել է «Նռան գույնը» և էկրաններին հայտնվել հենց այդ խորագրով: Հասկանալի է, թե ինչու է Ադասի Այվազյանը խուսափում այդ վերնագրից՝ նախընտրելով «Սայաթ-Նովա»-ն:

³² **Լ. Վաղարշյան**, Երեք դրվագ Պարույր Սևակի կյանքից, «Հայաստան» օրաթերթ, օգոստոսի 15, 1996:

³³ **Ռ. Մարոյան**, նշվ. աշխ., էջ 182-183:

³⁴ **Ա. Այվազյան**, Եղած-չեղածը՝ մի կյանք, էջ 258:

³⁵ **Կ. Քալանթար**, Ակնարկներ Փարաջանովի մասին, Երևան, 2012, էջ 125-126:

Հիանալի է Այվազյանի այն բնութագրումը, թե «Սայաթ-Նովա» ֆիլմի հեղինակը Հայաստանն է, և այդ Հայաստանն էլ հեղինակն է Փարաջանովի: Սա նշանակում է, որ մենք, Փարաջանով ասելով, նախ և առաջ հասկանում ենք «Սայաթ-Նովա» ֆիլմը: Ի դեպ, ֆիլմի հեղինակային տարբերակը ցուցադրվել է միայն Հայաստանում, իսկ միութենական էկրաններին թույլատրել են ցույց տալ խորհրդային կինոռեժիսոր Սերգեյ Յուտկևիչի վերամոնտաժած տարբերակը: Պատահական չէ, որ 1974-76 թթ. «Հայֆիլմ»-ի տնօրեն եղած տարիներին Կարեն Զալանթարը բազմիցս ստիպված է եղել «բավարարել արտասահմանից և միութենական հանրապետություններից եկած հյուրերի խնդրանքը՝ նրանց ցուցադրելով ստուդիայում պահվող հեղինակային տարբերակի միակ պատճենը: Բայց քանի որ այն ժամանակ Փարաջանովը կալանքի մեջ էր, դա կարելի էր անել միայն գաղտնի»³⁶:

Հատկանշական է, որ Ադասի Այվազյանը «Սայաթ-Նովայ» ֆիլմից՝ իբրև բարձրակետից հետո չի պատկերացնում նոր խոսքի հնարավորություն. «Հետագայում Փարաջանովի արված գործերը լոկ «Սայաթ-Նովայի» վիժվածքներն են», ինչի հետ կարելի է համաձայնել կամ չհամաձայնել:

Փարաջանովն ուզում էր ստեղծագործել Հայաստանում, բայց, ցավոք, նրա շատ ու շատ ծրագրեր իր այդքան սիրած Հայաստանում չիրականացան: Այդուհանդերձ, կարելի է ասել, որ Փարաջանովի կյանքը բռնեմ էր՝ ծնված օրվանից մինչև իր ողբերգական վախճանը:

Ինչպես Մոսկվայում, այնպես էլ Հայաստանում խորհրդային կառավարությունը ոչ մի կերպ չէր հանդուրժում այլախոհությունը, ազատ ստեղծագործելու ձգտումը: Հալածում և ճնշում էր դաժանորեն: Փարաջանովին հատկապես չհաջողվեց դուրս պրծնել այդ «մսաղացից» թե՛ Վրաստանում, թե՛ Ուկրաինայում և Ռուսաստանում, և թե՛ հայրենիքում՝ Հայաստանում:

Այս առթիվ զգալի վկայություններ կան: Բավարարվենք միայն լրագրող Կարեն Թորոսյանի ներկայացրածով. «Վերջերս իմացա, որ Փարաջանովը խնդրանքով դիմել է Կ. Դեմիրճյանին, Հայկական ԽՍՀ այն ժամանակվա ղեկավարին՝ թույլ տալու իրեն նկարահանել «Սասունցի Դավիթ» էպոսը: Փարաջանովը շատ էր ցանկանում աշխատել նաև «Արա Գեղեցիկ» ֆիլմի վրա: Սակայն Դեմիրճյանը մերժեց խնդրանքը: Փարաջանովը խարանդաված էր ԽՍՀ Կենտկոմի և ՊԱԿ-ի նշանով: 1969-ից մինչև 1984 թվականը մեծ ռեժիսորին թույլ չտրվեց ֆիլմ նկարահանել: Իսկ արդյունքում հայ մշակույթը կորցրեց համաշխարհային մակարդակի ևս երկու գլուխգործոց ունենալու հնարավորությունը»³⁷:

Ինչո՞ւ կինոարվեստի բնագավառում Հայաստանում դրվել են բետոնե արգելափակոցներ: Կարծում եմ՝ հարցի սպառնիչ պատասխանը տվել է կինոռեժիսոր Լաերտ Վաղարշյանը (1922-2000)՝ ճանաչված դերասան, դրամատուրգ, ռեժիսոր և հասարակական գործիչ Վաղարշ Վաղարշյան-

³⁶ Նույն տեղում:

³⁷ «Ազատամտություն» օրաթերթ, մարտի 20, 2009:

նի որդին, ով 1967-1969 թթ. «Հայֆիլմ»-ի տնօրենն էր և մեծապես նպաստել է Փարաջանովին իր «Նռան գույներ» ֆիլմը կյանքի կոչելուն: Նա գրում է. «Հետպատերազմյան շրջանում չեղավ հանրապետության մի ղեկավար, ով կինոյի նկատմամբ ցուցաբերեր այնպիսի վերաբերմունք, ինչպիսին պահանջում էր այդ բնագավառն իր սոցիալական էությանը, հասարակական, քաղաքական բնույթով: Իր մասշտաբներով: Կինոն ջին է, որին անկարելի է շշի մեջ պահել: Իսկ մեր հանրապետության ղեկավարությունը միշտ Կինոկոմիտեի նախագահ նշանակել է կինոյից հեռու մարդկանց: Ասես խցանով ամուր փակել է շիշը, որպեսզի ջինը, Աստված մի արասցե, հանկարծ դուրս չգա: Գլխացավանք է»³⁸:

Ամեն ինչ ասված է: Ահա թե ինչու չի կարելի մեղադրել Փարաջանովին, երբ նա հայտարարում էր. «Հայաստանի ղեկավարները սահմանափակ մարդիկ են, արվեստ չեն հասկանում»³⁹:

Իսկապես, Խորհրդային Հայաստանի այն ժամանակվա ղեկավարները մեղավոր են Սերգեյ Փարաջանովի առաջ: Ուկրաինայում հինգ տարվա ազատազրկման դատապարտվելուց և մի բանտից մյուսը տեղափոխվելուց հետո, երբ գտնվում էր Վիննիցայի բանտում, Փարաջանովին օգնեցին ժամկետից մեկ տարի շուտ ազատության մեջ հայտնվել Վլադիմիր Մայակովսկու երբեմնի սերը՝ 80-ամյա Լիլյա Բրիկը, և ֆրանսիացի գրող Լուի Արագոնը: Բանն այն է, որ Լիլյա Բրիկի քույրը՝ Էլզա Տրիտեն, Արագոնի կինն էր, այն Լուի Արագոնի, որ Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության կենտկոմի անդամ էր: Իսկ ի՞նչ է, Հայաստանում 1970-ականներին Կոմկուսի անդամներ չկայի՞ն:

Էդուարդ Շևարդնաձեի հրավերով և ընձեռած հնարավորությամբ Վրաստանում նկարահանված «Սուրամի ամրոցի լեգենդը» (1985) և «Աշուղ Դարիք» (1988) ֆիլմերի փոխարեն կարող էին նկարահանվել «Սասունցի Դավիթ» և «Արա Գեղեցիկ» կինոերկերը, որոնք մեծ պատիվ կարող էին բերել «Հայֆիլմ»-ին:

Եթե հալածանքները միայն արվեստագետների հանդեպ լինեին, միգրացիոն մտածեինք, որ արվեստի բնույթն այնպիսին է, որ գաղափարապես չի բավարարում կենտկոմի պահանջներին: Ի՞նչ իմանար Փարաջանովը, որ Խորհրդային Հայաստանից ինչ-ինչ պատճառներով հեռացել են նաև այլ ոլորտների նշանավոր մարդիկ, ինչպես, օրինակ՝ անվանի քիմիկոս Հովհաննես Դավթյանը, կենսաբաններ Արմեն Թախտաճյանը, Միքայել Չայլախյանը, Խաչատուր Կոշտոյանցը և էլի շատ շատերը:

Եթե Փարաջանովը ծանոթ լիներ հանճարեղ Հակոբ Պարոնյանին, ղեկավարների առնչությամբ չէր գրի միայն «սահմանափակ», «արվեստ չհասկացող» արտահայտությունները: Հակոբ Պարոնյանը, ով ապրել և ստեղծագործել է Սերգեյ Փարաջանովից շուրջ մեկ դար առաջ, մարգարեաբար կանխագուշակել է, թե ինչ փորձանքների է հանդիպում մեր

³⁸ Լ. Վաղարշյան, Ուզում եմ պատմել ձեզ, Երևան, 1993, էջ 111:

³⁹ Նույն տեղում, էջ 108:

իրականության մեջ շնորհալի, տաղանդավոր մարդը: Ահա Հակոբ Պարոնյանի՝ բոլոր հասարակարգերի և բոլոր ժամանակների համար տրված լավագույն և հանրահայտ գնահատականը. «Դժբախտաբար մեր ազգին մեջ շատերու բարձրանալու գաղտնիքը բնական օրենքով միայն կը լուծվի: Ծանրերը միշտ գետնաքարշ կը մնան ու թեթևները վեր կելնեն»:

1988 թվականին Երևանում լույս է տեսել պատմաբան Բագրատ Ուլուբաբյանի «Ջրուցարան»-ի երկրորդ հատորը: Գրքի 518-րդ էջում, խոսելով «Հայֆիլմ»-ի արտադրած ֆիլմերի մասին, չգիտես ինչու, հեղինակն անգամ չի հիշատակել Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմը: Հետաքրքիր է, թե ինչու պետք է այդ հանճարեղ ֆիլմն անտեսվեր:

Այո՛, «ծանր» և միգուցե դժվարըմբռնելի էր Փարաջանովի բերած նոր խոսքը 1960-ականների Հայաստանի մշակութային աշխարհին, քանզի նրա արվեստում գերիշխող էին խորհրդանշանները: Շուրջ հիսուն տարի անց Երևանում լույս տեսած Գագիկ Մանասյանի «Խորհրդանշանների հանրագիտարան» հիմնարար աշխատությունը որոշ չափով ցրեց ամպերը: Հանրագիտարանը սկսվում է հետևյալ տողերով. «Մարդը դե յուրե ապրում է երկու իրականությունների մեջ: Առաջինը իրական աշխարհն է՝ տրված Աստծու կողմից՝ անկախ մեր կամքից, ինչն էր և է, և կա ու կմնա առանց մարդու ներկայության, գետեր, ծովեր, անտառներ, տափաստաններ, լեռներ, այսինքն՝ նյութական աշխարհը: Երկրորդը մարդածին է, որն ընդգրկում է «նշանների իրականությունը»՝ խոսք, կրոն, մոգություն, արվեստ, գիտություն»⁴⁰:

Սերգեյ Փարաջանովի՝ Հայաստան բերած արվեստում, մասնավորապես «Նռան գույնը»-ում ընդգրկված էր վերը հիշատակված «նշանների իրականությունը»: Այդօրինակ մտածողությամբ արվեստագետը Հայաստանում ցանկալի չէր: Նրա արվեստը կչեզոքացներ, կկուրացներ միջակությանը: Ինչպես ժամանակին ասել է Միքայել Նալբանդյանը. «Գիտեինք, որ խավար շրջապատի մեջ բանտարկվածների համար շատ ցավեցուցիչ է ազատ լույսը, թերևս աչքերի նկատմամբ, գիտեինք, որ հին խելքերը երբեք համաձայնելու չէին խաղաղությամբ տեղի տալ նոր գաղափարներին»⁴¹:

Սերգեյ Փարաջանովը, անտարակույս, իր արվեստով ավելի ճանաչելի դարձրեց Հայաստանը: «Տարբեր երկրներում ապրող մարդիկ դժվարությամբ են մտաբերում, թե որտեղ է գտնվում Հայաստանը: Սակայն գրեթե բոլորը լսել են Փարաջանովի անունը, տեսել նրա ֆիլմերը ու կոլաժները: Եվ հենց Փարաջանովի շնորհիվ էլ նրանք իրենց համար բացահայտում են Հայաստանը...»⁴²:

Հայ ժողովրդի մտավոր մշակույթին Փարաջանովի բերած անուրանալի և խոսուն նպաստին անդրադարձել են շատերը: Անդրադարձել են վավերագրական ֆիլմերով, հոդվածներով, մենագրություններով, հարցազրույցներով, ռեժիսորի թանգարանի տպավորությունների գրքում արված գրառումներ-

⁴⁰ Գ. Մանասյան, Խորհրդանշանների հանրագիտարան, Երևան, 2007, էջ 3:

⁴¹ Մ. Նալբանդյան, Երկեր, Երևան, 1985, էջ 432:

⁴² Ն. Հախվերդյան, Աշունը սրտում, «168 ժամ», հուլիսի 18-20, 2009, էջ 7:

րով: Ահա թե ինչ բնութագրում է տվել ռեժիսորին անվանի նկարիչ Գրիգոր Խանջյանը. «Խենթի պես մխրճվեց մարդկային զանգվածների մեջ: Խենթի պես նվաճեց աշխարհի կինեմատոգրաֆի նվիրյալների սիրտը: Նրա կարմիր ձիերը դուփեցին ու թռան շատ երկրների էկրաններով: Նա հռչակավոր դարձավ՝ իր հետ բերելով նաև ճանաչումն այն ազգի, որի արյունն էր հոսում իր երակներում»⁴³:

⁴³ **Ա. Խանջյան**, Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ 167:



*Մի՛ սարսափիր մեծությունից: Ունան՛ք ծնվում են
մեծ, ունան՛ք հասնում են մեծության, իսկ ունան՛ց
վրա էլ մեծությունը շարժում են:*

Շեքսպիր

*Փարաջանով նշանակում է, որ պե՛տ է ծառայել
միայն արվեստին:*

Ալեքսանդր Բոժկո



ՄԵԾԱՐԱՆՔ

Սերգեյ Փարաջանով երևույթը 1960-ականների վերջերից իր ուրույն տեղն ամրագրեց հայ մշակույթի պատմության էջերում: Եվ ոչ միայն հայ: Սերգեյ Փարաջանովը հայերին հավասար, միգուցե և ավելի շատ հպարտանում են ուկրաինացիներն ու վրացիները: Աշխարհահռչակ արվեստագետը մեծարված է և այսօր էլ մեծարվում է մեծավ մասամբ Հայաստանում, Ուկրաինայում և Վրաստանում: Փարաջանովի ֆիլմերում հնչում են Ուկրաինայում բնակվող գուցուլների բարբառը, հայերենը, վրացերենը և թուրքերենը: Թերևս չկա մեկամսյա մի ժամանակահատված, որ Հայաստանի, Ուկրաինայի և Վրաստանի մշակութային հանրությունը չանդրադառնա մեծ արվեստագետին:

Փարաջանովի մասին հրապարակումներ են հայտնվում ամենաանսպասելի տեղերում: Այսպես՝ Ռուսաստանի Դոնի Ռոստով քաղաքում հրատարակվող, «Аэропорт» անունը կրող ամսագրի էջերում լույս է տեսել Նատալյա Ջոհրաբյանի՝ «Սերյոժա կոչվող տոնը»⁴⁴ վերնագրով ուշագրավ հոդվածը՝ պատկերազարդված բարձրորակ գունավոր լուսանկարներով:

Մշակույթի հայ և օտարագլի գործիչներից շատերն են հավուր պատշաճի դրվատել, արժևորել և կարևորել Սերգեյ Փարաջանովի՝ համաշխարհային կինոարվեստին մատուցած վաստակը: Այսպես՝ իտալացի կինոռեժիսոր Սիլվեյանո Վելտուրիոն Անտոնիոնին «Նռան գույնը» ֆիլմի մասին ասել է. «Սեր ժամանակի լավագույն կինոռեժիսորներից մեկի՝ Փարաջանովի «Նռան գույնը» ապշեցնում է գեղեցկության կատարելությամբ»⁴⁵:

⁴⁴ **Н. Зограбян**, Праздник по имени Сережа, «Аэропорт», 2004/5, с. 44-48.

⁴⁵ **Կ. Քալանթար**, Ակնարկներ Փարաջանովի մասին, էջ 175:

Միքելանջելո Անտոնիոնիի հայրենակից, ականավոր գրող և սցենարիստ Տոնինո Գուերան այսպես է բնութագրել Սերգեյ Փարաջանովին. «Ես շատ բան եմ սովորել Սերգեյ Փարաջանովից՝ այդ հայ մեծ ռեժիսորից: Երբեք չեմ աշխատել նրա հետ: Մեր ծանոթության առաջին իսկ պահից ես հասկացա, որ կան մարդիկ, ովքեր վստահություն են վայելում ի վերուստ: Փշե պսակ կրելու վստահություն: Ես խոնարվում եմ նրանց առջև և հույս ունեմ, որ նրանց ջերմ աջը կհպվի իմ ճակատին: Նրա խելահեղ կյանքը իր իսկ պոեզիան է: Նա պատմում էր ինձ մենակյաց բանաստեղծ Սայաթ-Նովային նվիրված իր ֆիլմի մասին»⁴⁶:

1998 թ. Երևանում ռուսերենով լույս է տեսել Փարաջանովի կյանքին և գործունեությանը նվիրված մի արժեքավոր ուսումնասիրություն: Դա ականավոր ռեժիսոր և թատերական գործիչ Լևոն Քալանթարի կրտսեր որդու՝ կինոգետ և լրագրող, արվեստագիտության թեկնածու Կարեն Քալանթարի՝ արդեն մի քանի անգամ մեր կողմից հիշատակված «Ակնարկներ Փարաջանովի մասին» («Очерки о Параджанове») մենագրությունն է: Հիշյալ աշխատությունը 2012 թվականին հրատարակվել է նաև հայերենով:

Տարիներ անց Երևանում դարձյալ ռուսերենով լույս են տեսել Կարեն Քալանթարի «Ակնարկներ հայ կինոյի պատմության» («Очерки истории армянского кино») հիմնարար մենագրության երկու հատորները⁴⁷: Սույն մենագրության երկրորդ հատորի 139-149-րդ էջերը նվիրված են Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմին:

2009 թ. Երևանում լույս է տեսել Սերգեյ Գալոյանի «Թակարդներ» մենագրությունը, որի 264-303-րդ էջերը նվիրված են Սերգեյ Փարաջանովին:

2001 թ. ԱՄՆ-ի Գլենդել քաղաքում հրատարակվել է արվեստագիտության թեկնածու, 1980-ականների սկզբին «Հայֆիլմ»-ի տնօրեն Ռազմիկ Մադոյանի՝ վերոնշյալ «Նռան գույնը և Փարաջանովի լեգենդը» մենագրությունը:

2005 թ. Երևանում լույս է տեսել գրող, թարգմանիչ Սաղաթել Հարությունյանի «Սարյան, Սարոյան, Փարաջանով և ուրիշներ» մենագրությունը:

ԱՄՆ-ի Գլենդել քաղաքում լույս տեսնող «Համայնապատկեր» գրական-մշակութային հանդեսի 2001 թ. չորրորդ համարն ամբողջովին նվիրված է Սերգեյ Փարաջանովին:

1992 թվականին Մոսկվայում լույս է տեսել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի «Вестник» ամսագրի 12-րդ համարը, որում կրճատումներով տպագրվել է ականավոր ֆիզիկոս Գուրգեն Ասկարյանի (1928-1997) «Հանճարները, կարգերը և քաղաքականությունը: Հանճարներին փրկելու հնարավորությունները» հոդվածը: Հիշյալ հոդվածում Գ. Ասկարյանը ներկայացրել է նաև Սերգեյ Փարաջանովին. «Ողբերգական էր մեր ժամանակների համաշխարհային ճանաչման արժանացած կինոռեժիսոր

⁴⁶ Ա. Թորոսյան, Տոնինո Գուերա, «Նոր հանդես», 2007, դեկտեմբեր, էջ 82-92:

⁴⁷ Կ. Կալանթար, Очерки истории армянского кино, Ереван, 2004, т. 1, 306 с., Ереван, 2007, т. 2, 456 с.

Սերգեյ Փարաջանովի ճակատագիրը: Իր ինքնություն, ոչ մեկին չենթարկվող ստեղծագործական վարքի համար նա անարգվեց, կեղծ մեղադրանքների պատճառով 70-ականներին երկար տարիներ բանտերում անցկացրեց: Եվ այս ամենը այն դեպքում, երբ թվում էր, թե անձի պաշտամունքը դատապարտված և քննարկված է հիմնովին, և չկա ետադարձ ճանապարհ: Արտասահմանում ստեղծագործող համաշխարհային մեծության կինոգործիչների բողոքներն ու ընդվզումները ևս չկարողացան բանտից ազատել Փարաջանովին»:

Փարաջանովի մտերիմ ընկեր, ծնունդով դարձյալ Թիֆլիսից, մոսկվաբնակ գրող և կինոռեժիսոր Վասիլի Վասիլիի Քաթանյանի (1924-1999) «Փարաջանով. հավերժական տոնի գինը» արժեքավոր գիրքն առաջին անգամ տպագրվել է 1994 թ. Մոսկվայում, այնուհետև վերահրատարակվել է 2001 թ.⁴⁸:

1996 թվականին Լոս Անջելեսում լույս է տեսել կինոգետ Հակոբ Թահմիզյանի «Համաշխարհային կինոյի հանրագիտարան» ծավալուն աշխատությունը, որի 687-707-րդ էջերում զետեղված են Սերգեյ Փարաջանովի ուշագրավ ասույթները:

2001 թվականին Երևանում լույս է տեսել ականավոր դերասան Սոս Սարգսյանի (1929-2013) «Մենք ու մերոնք» հուշագրությունը, որի 136-139-րդ էջերը նվիրված են Սերգեյ Փարաջանովին:

Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլ քաղաքում 2002 թվականին լույս է տեսել լրագրող և գրականագետ Նիկոլայ Բլոխինի՝ «Փարաջանովի արտաքսումը» («Изгнание Параджанова») 336 էջանոց արժեքավոր մենագրությունը: Ն. Բլոխինի վերոնշյալ ուսումնասիրությունը Փարաջանովին նվիրված մենագրություն է, որն ունի գրականության հարուստ ցանկ՝ շուրջ 300 անուն: Հավելենք նաև, որ Ն. Բլոխինն այն եզակի ռուս մտավորականն է, որ դեռևս 1960-ական թվականներից Սերգեյ Փարաջանովին նվիրված մեծաթիվ ուսումնասիրությունների հեղինակ է: Նա տարբեր առիթներով եղել է Երևանում:

2013 թ. Երևանում տպագրվել է կինոռեժիսոր Ռուբեն Գևորգյանցի (1945-2017) «Փարաջանով... կոլաժ երկուսի համար» մենագրությունը (թարգմանիչ՝ Է. Մանուկյան, խմբագիր՝ Թ. Միջիֆերջյան):

2014 թ. Երևանում հայերենով հրատարակվել է Գարրի Կունցևի «Կարճկար մի Փարաջանով» հուշապատում-վիպակը⁴⁹: Փարաջանովի «Սուրամի ամրոցի լեգենդը», «Աշուղ Ղարիբ» ֆիլմերի և «Խոստովանանք» անավարտ կինոժապավենի հնչյունային ռեժիսոր Գարրի Կունցևի՝ Թբիլիսիում գրված հիանալի վավերագրական վիպակն առաջին անգամ ռուսերեն բնագրով՝ «Жил-был Параджанов», Երևանում տպագրվել էր 2004 թ. «Литературная

⁴⁸ **В. Катанян**, Параджанов. Цена вечного праздника, Нижний Новгород, 2001.

⁴⁹ Ի դեպ, թարգմանության մտահղացումը լրագրող և հրապարակախոս Ա. Մանուկյանինն է: Վիպակը թարգմանել է Հ. Այվազյանը, խմբագիրը Հ. Չարխչյանն է:

Армения» հանդեսի 6-րդ համարում: Իսկ արդեն հայերեն թարգմանված գրքում, վիպակից բացի, տեղ է գտել նաև Փարաջանովի մասին ուկրաինացի կինոօպերատոր Յուրի Գարմաշի հուշագրությունը:

2016 թ. Երևանում ՀՀ մշակույթի նախարարության և ազգային գրադարանի կողմից առցանց տարբերակով լույս է տեսել «Սերգեյ Փարաջանով (Սարգիս Փարաջանյան): Կենսամատենագիտություն» տեղեկատուն (կազմողներ՝ Ա. Ամիրջանյան, Ս. Շիրվանյան, Լ. Վարդանյան), որտեղ ներկայացված են Սերգեյ Փարաջանովի և նրա մասին ՀՀ ազգային գրադարանում պահվող գրքերի, պարբերական մամուլի և ժողովածուների վերաբերյալ մատենագիտական նկարագրությունները՝ հայերեն և օտար լեզուներով:

Շուրջ քսան ֆիլմ է նվիրված հանճարեղ կինոռեժիսորին, որոնցից արժի նշել հետևյալները՝ «Սերգեյ Փարաջանով» (ռեժիսոր՝ Պատրիկ Կազալս, Ֆրանսիա, 1986), «Մատենաբ. Սերգեյ Փարաջանով» (ռեժիսոր՝ Ալեքսանդր Կայդանովսկի, 1989-1992), «Փարաջանով. վերջին գարունը» (ռեժիսոր՝ Միքայել Վարտանով [Վարդանյանց], 1992), «Փարաջանով. վերջին կոլաժը» (ռեժիսոր՝ Ռուբեն Գևորգյանց, 1995), «Փարաջանով. ռեքվիեմ» (ռեժիսոր՝ Ռոն Հոլուեյ, ԱՄՆ-Գերմանիա, 1994), «Գիշերը Սերգեյ Փարաջանովի քանդաքանում» (ռեժիսոր՝ Ռոման Բալայան, 1998), «Բոքո» (ռեժիսորներ՝ Նարինե Սկրոչյան, Արսեն Ազատյան, Հայաստան, 1991), «Փարաջանով. Քրիստոսի պարտիտուր դո մաժոր» (ռեժիսոր՝ Յուրի Իլյենկո, 1996), «Սերգեյ Փարաջանով» (ռեժիսոր՝ Ֆոտոս Լամբրինոս, Հունաստան, 1990), «Փարաջանովի քաղաքներ» (ռեժիսոր՝ Եվգենի Տատարեց, Ռուսաստան, 1990), «Ես մահացա մանուկ հասակում» (ռեժիսոր՝ Գարիկ Փարաջանով, 2004), «Վտանգավոր լինելու չափ ազատ մարդը» (ռեժիսոր՝ Ռոման Շիրման, 2005): Ի դեպ, հիշատակման արժանի է նաև փաստավավերագրական մի կինոէսեն՝ «Հայկական հողի գույնը» (1969), որ նկարահանել է կինոօպերատոր և վավերագրող Միքայել Վարտանովը. այս ֆիլմում հայկական բնապատկերների, տաճարների, որմնանկարների ու խաչքարերի պատկերների կողքին ներկա են երեք մեծանուն հայեր՝ Մարտիրոս Սարյանը, Մինաս Ավետիսյանը և Սերգեյ Փարաջանովը՝ իր գլուխգործոցի՝ «Նռան գույնը» ֆիլմի նկարահանումների ընթացքում արված բացառիկ կադրերով, որտեղ երևում է նրա ռեժիսորական խառնվածքը աշխատանքի պահին:

Նշենք, որ 1979 թվականին Ռուբեն Գևորգյանցը նկարահանել է «Աշխարհումս» ֆիլմը (օպերատոր՝ Յուրի Բարախանյան): 10 րոպե տևողությամբ հիշյալ կինոէսեն Սերգեյ Փարաջանովի՝ բանտից ազատվելուց հետո անցկացրած առաջին օրվա մասին է: Այդ ֆիլմով Ֆեդերիկո Ֆելինին և կինոգետ Հերբեր Մարշալը 1981 թվականին բացեցին Կաննի կինոփառատոնը:

1995 թվականին Ռուբեն Գևորգյանցի մեկ այլ՝ «Փարաջանով. վերջին

կողմը» ֆիլմում ներկայացված են մեծանուն արվեստագետի՝ բանտից վերադարձի ժամանակագրային կադրերը, նրա՝ տարբեր ժամանակներում նկարահանված կամ ձայնագրված հարցազրույցներից հատվածներ, ինչպես նաև կադրեր անավարտ «Խոստովանանք»-ից: Հանճարեղ ռեժիսորի մասին խոսում են Ժան-Լյուկ Գոդարը, Տոնինո Գուերան, Արտավազ Փելեշյանը, Մարինա Վլադին, Ռոբեր Հոսեյնը և այլք: Այս դիտարժան ֆիլմը ցուցադրվել է Կաննի փառատոնում, արժանացել Սանկտ Պետերբուրգի «Ուղերձ մարդուն» կինոփառատոնի ժյուրիի հատուկ մրցանակին:

1993 թվականին ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սարգիս Բաղդասարյանը (1923-2001) կերտել է Սերգեյ Փարաջանովի բրոնզե դիմաքանդակը, որի լուսանկարը գետեղված է Ս. Բաղդասարյանի՝ 1999 թվականին Երևանում լույս տեսած «Պատկերագրքի» 126 -րդ էջում:

Կինոռեժիսոր, պատմաբան, Վիեննայի համալսարանի դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Արտեմ Օհանջանյանը 2001 թ. նկարահանել է «Սերգեյ Փարաջանով. իմն է աշխարհը գեղեցիկ» գեղարվեստավավերագրական ֆիլմը, որը Չիկագոյում (ԱՄՆ) արժանացել է երկրորդ մրցանակի:

Սերգեյ Փարաջանովի քրոջ որդին՝ կինոռեժիսոր Գարիկ Փարաջանովը, նկարահանել է «Ես մահացա մանուկ հասակում» («Я умер в детстве», 2004) վավերագրական ֆիլմը, որում գետեղված է Ս. Փարաջանովի «Խոստովանանք» կինոնկարի համար գրված սցենարից «Վերայի թաղումը» դրվագը: Այդ ֆիլմում ներառված են նաև Փարաջանովի հիշողություններն իր կալանավայրից, աշխարհի հետ բանական կապով ապրող և այդ աշխարհից հալածված արվեստագետի խոստովանությունը: Կաննի կինոփառատոնին ներկայացված այս ժապավենն արժանացել է ութ մրցանակի, որոնց թվում՝ Երևանի ամենամյա «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի մրցանակին:

2006 թվականին Փարիզում լույս է տեսել «Sayat Nova» ժողովածուն, որում գետեղված են Սայաթ-Նովայի 47 խաղերի ֆրանսերեն թարգմանությունները: Հիշյալ ժողովածուն նվիրված է Սերգեյ Փարաջանովի հիշատակին:

2013 թ. Ելենա Ֆետիսովայի և ֆրանսահայ դերասան Սերժ Ավետիսյանի՝ համաշխարհային էկրան բարձրացած «Փարաջանով» կենսագրական գեղարվեստական կինոնկարում մեծ ռեժիսորին մարմնավորեց հենց նույն Սերժ Ավետիսյանը:

Հավելենք նաև հետևյալը: 1996 թ. Գերմանիայում տիկնիկային և խամաճիկների թատրոնում բեմադրված «Փարաջանով» ներկայացման համար կոմպոզիտոր Ստեփան Լուսիկյանի (1956-2001) գրած երաժշտությունը միջազգային մրցանակի արժանացավ:

Բ. Մագուրի քանդակած Սերգեյ Փարաջանովի բրոնզե կիսանդրին տեղադրված է Կիևի կինոստուդիայի տարածքում:

2007 թվականի մայիսի 6-ին Թբիլիսիում բացվել է Սերգեյ Փարաջանովի արձանը: Հեղինակը քանդակագործ Վաժա Միքաբերիձեն է,

ով կոմպոզիցիայի սյուժեն քաղել է քիֆլիսահայ Յուրի Մեչիսլավսկի՝ 1981 թվականի մայիսի 15-ին արված Փարաջանովի լուսանկարից: Արձանը տեղադրված է Թբիլիսիի Մեյդան թաղամասում՝ Վատնի Ռյադ փողոցում:

«Նռան գույնը» ֆիլմի բեմադրող նկարիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, ՀՀ ժողովրդական նկարիչ Ստեփան Անդրանիկյանը 2003 թվականին վրձնել է Սերգեյ Փարաջանովին: Իտալացի հայագետ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Զիանկաշո Բոլոնեյզին (1923-2005) Վենետիկում 1991 թվականին իտալերենով լույս է ընծայել Սերգեյ Փարաջանովի հիշատակին նվիրված մենագրություն⁵⁰:

2011 թ. Երևանում հրատարակվել է հայ կինոյի պատմությանը նվիրված արժեքավոր գիրք՝ կինոգետ Սիրանույշ Գալստյանի «Հայացք մեր կինոյին: Պատմությունը և ներկան» մենագրությունը: Գրքի մի ստվար բաժին՝ 83-111-րդ էջերը, նվիրված է Փարաջանովի կինոարվեստի վերլուծությանը: Քննելով փարաջանովյան գեղագիտությունը, այլաբանությունը, խորամուխ լինելով ռեժիսորի կինոլեզվի յուրահատկությունների մեջ՝ հեղինակը Փարաջանովի կինոարվեստն անվանում է «գեղեցիկի թագավորություն»՝ զուգահեռներ անցկացնելով նրա ժամանակակիցների՝ Ֆելիսիի, Տարկովսկու և Վիսկոնտիի հետ⁵¹:

Երևանյան «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը 2005 թվականին սահմանել է Փարաջանովի անվան մրցանակ՝ «Փարաջանովյան Թալեր», որ շնորհվում է կինոյի մեծություններին՝ համաշխարհային ֆիլմարվեստում ունեցած ներդրումի համար: Աշխարհի մեծանուն մի շարք ռեժիսորների հետ իրենց վաստակի համար այս պատվավոր մրցանակին են արժանացել նաև մեր անվանի հայրենակիցները՝ ՀՀ ժողովրդական արտիստ Արտավազ Փելեշյանը (2006) և Ուկրաինայի ժողովրդական արտիստ Ռոման Բալայանը (2011): Խորհրդանշական է, քանի որ ժամանակին երկուսն էլ Փարաջանովի հետ մտերիմ են եղել: Հայ մտավորականներից շատերը՝ կինոռեժիսորներ, գրողներ, նկարիչներ, կինոգետներ, քննադատներ, լրագրողներ, դերասաններ, թատերագիրներ, գեղագետներ, լուսանկարիչներ, իրենց տպագիր գործերում կամ բանավոր խոսքում կարևորել և բարձր են գնահատել Սերգեյ Փարաջանովին և նրա արվեստը: Հատկապես արժե առանձնացնել հետևյալ անունները՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաքին, ակադեմիկոսներ Մորուս Հասարաթյան և Գրիգոր Գուրգադյան, նկարիչներ Մարտիրոս Սարյան, Սիմաս Ավետիսյան, Գայանե Խաչատրյան, Գրիգոր Խանջյան, Ստեփան Անդրանիկյան, Ֆելիքս Եղիազարյան, բանաստեղծներ Սիլվա Կապուտիկյան, Պարույր Սևակ, Հենրիկ Էդոյան, Անահիտ Պարսամյան, արձակագիրներ Աղասի Այվազյան, Հրանտ Մաթևոսյան, Շահեն Թաթևյան, Պերճ Զեյթունցյան, կոմպոզիտորներ Էդգար Հովհաննիսյան և Տիգրան Մանսուրյան, ռեժիսորներ

⁵⁰ Asik-Kerib. In memoria di Sergio Parajanov, Venezia, 1991, 118 p.

⁵¹ Տե՛ս Ս. Գալստյան, Հայացք մեր կինոյին: Պատմությունը և ներկան, էջ 90:

Լաերտ Վաղարշյան, Հենրիկ Մալյան, Ֆրունզե Դովլաթյան, Արտավազդ Փելեշյան, Ռուբեն Գևորգյանց, կինոօպերատորներ Սուրեն Շահբազյան, Ալբերտ Յավուրյան, Սերգեյ Իսրայելյան, կինոգեոմետր Գրիգոր Չախիրյան, Սուրեն Հասմիկյան, Դավիթ Մուրադյան, Գարեգին Զաքոյան, Տավրոս Դաշտենց, Սիրանույշ Գալստյան, մասնաշաղկապի անհատականություններ, ինչպիսիք են Լևոն Ներսիսյանը, Վաղինա Մելիքսեթյանը, Հենրիկ Իգիթյանը, Յակով Խաչիկյանը, Հովհաննես Փիլիկյանը և ուրիշներ:

MAESTRO



*Քրիստոսի թշնամիները նրան հանգիստ թողեցին
միայն գերեզմանում:*

Բլեզ Պասկալ

*Թշնամիներ չունենալ կարող է միայն լիակա-
սար ոչնչությունը, այնպես որ ես ոչ մեկի խոր-
հուրդ չեմ սա պարծենալ դրանով:*

Ալֆրեդ Բուժար



ՈՂԵՐԳԱԿԱՆ ՓԱՐԱԶԱՆՈՎԸ⁵²

Մահվանից մի քանի օր առաջ՝ 1990 թվականի հուլիսին, հատուկ օդա-
նավով հանճարեղ արվեստագետին անգիտակից վիճակում Փարիզից փո-
խադրեցին Երևան՝ Հանրապետական հիվանդանոցի վերակենդանացման
բաժանմունք:

Վախճանից ամիսներ առաջ հեռավոր Փարիզի «Սեն-Լուի» կլինիկայում
Փարաջանովը դեռ փորձում էր է. Հեմինգուեյի «Ծերունին և ծովը» վիպակի
հերոսի նման իր ջարդուփշուր եղած մավակը մի կերպ ափ հասցնել: Բայց
արդեն շատ ուշ էր... Արվեստագետին հաշված օրեր էին մնացել: Սերգեյ
Փարաջանովի կյանքը նման էր տխրության և վշտի ալեկոծումից պոռթկա-
ցող մի փոթորկոտ ծովի, ինչպես գրել է Արշիլ Գորկին իր ողբերգական վախ-
ճանից մի քանի տարի առաջ. «Բայց փոթորիկները մինչև սփռվիչ ափին
մոտենալը հասնում են որոշակի հանգստության խութերի և արգելքների հետ
բախվելուց հետո...»⁵³: Սերգեյ Փարաջանովի պարագայում այդ «սփռվիչ
ափը» դարձավ Հայաստանը, մասնավորապես մայրաքաղաք Երևանը:

Ժամանակի սլաքները կարծես կանգ էին առել: Կանգ էին առել քա-
ներորդ դարի վերջին: Թքած ամեն ինչի վրա, հիմա ժամանակն է հան-
ճարեղորեն մեռնելու: Փարաջանովի կյանքի վերջին ժամերին Երևանի
Հանրապետական հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում նրա
կողքին էր Փարաջանովի թանգարանի հիմնադիր տնօրեն, Փարաջանովի
մտերիմ ու ջերմ երկրպագու, լուսանկարիչ Զավեն Սարգսյանը: Ահա նրա վկա-
յությունը. «Հուլիսի 20-ի երեկոյան Գ. Դավիթովի և Գ. Ջաքոյանի հետ միասին

⁵² 1990 թ. Երևանում լույս է տեսել գրականագետ, բանասիրության դոկտոր Դավիթ
Գասպարյանի՝ «Ողբերգական Չարենցը» վերնագրով արժեքավոր մենագրու-
թյունը: Թե՛ Չարենցի և թե՛ Փարաջանովի վերապրած դժվարությունների միջև,
կարծում ենք, աղերսներ կան: Ուստի նպատակահարմար գտանք օգտագործել
նշված բնութագրիչը:

⁵³ Արշիլ Գորկի, Նամակներ, Երևան, 2005:

զմացինք հիվանդանոց՝ տեսակցության: Նա պառկած էր աչքերը փակ: Իսկ սարքավորումները ցույց էին տալիս արյան ճնշումը և երակազարկը: Երբ որոշեցինք զնալ, խնամող բուժքույրը մոտեցավ մեզ և, իմանալով, որ մենք Փարաջանովի մտերիմներն ենք, ասաց. «Իմ բազմամյա աշխատանքի ընթացքում առաջին անգամ եմ հանդիպում նման երևույթի: Երբ անգիտակից վիճակում պառկած հիվանդին մոտենում եմ նրա մտերիմները, փոխվում եմ նրա արյան ճնշման և երակազարկի ցուցանիշները»⁵⁴: Բուժքրոջ պատմածից երկու ժամ անց Փարաջանովի սիրտը դադարել է բաբախելուց...

Երևանի Հանրապետական հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում Սերգեյ Փարաջանովի վախճանից հետո մի պայծառ լռություն իջավ... Արվեստագետը, քրիստոնյա աստվածաբան Օգոստինոս Երանելիի (354-430) խոսքերով ասած, դարձավ «անտեսանելի», քանզի «մեռածները անտեսանելի են, բայց նրանք չեն բացակայում»:

Հանճարեղ Վարպետի տանջված ու հոգնած սիրտը չդիմացավ և իր այդքան շատ սիրած, գերհասունացած նռների նման ճաքեց: «Փարաջանովը հեռացավ, որ հանգստություն տա իր մարմնին: Նա մնաց մեզ հետ, քանզի նրա հոգին, նրա միտքը բաց են ու ջահել, և նրանք հուզում են մեզ»⁵⁵:

Սերգեյ Փարաջանովը մահացավ 1990 թվականի հուլիսի 20-ին: Ծագող արևը խաղաղ լռությամբ իր ճառագայթներով բախվեց Փարաջանովի հայրական տան պատուհաններին: Այդ պահին Փարաջանովի՝ Թբիլիսիի Կոտե Մեսխի 7 հասցեում գտնվող տանը ոչ մի կենդանի շունչ չկար: Ծնողները վաղուց չկային: Տարիներ առաջ մահացել էին նաև քույրերը՝ Աննա Փարաջանովա-Խաչատուրովան և Ռուզաննա Փարաջանովա-Աբրահամովան:

Փարաջանովի մահվան բոթը Կոտե Մեսխի փողոց հասավ հուլիսի 23-ի հետկեսօրին: Փարաջանովի հարևանները՝ վրացի, հայ, ռուս, թուրք, քուրդ, լսելով այդ լուրը, մեկ մարդու պես խուժեցին նրա բնակարան: Այն ամենը, որ դեռ կարելի էր օգտագործել, գողացան: Նրանցից յուրաքանչյուրը դիվալին մի սցենար էր մշակել. «Սերգեյը կենդանության օրոք այդ իրերը ինձ էր խոստացել»⁵⁶:

Փաստ է, որ Սերգեյ Փարաջանովի տունը մինչ այդ արդեն թալանված էր: Ահա թե ինչ է գրում լուսանկարիչ Վիկտոր Բաժենովը. «Թբիլիսիում չկա Փարաջանովի թանգարան: Երբ ճակատամարտն ավարտվում է, մարտի դաշտ են դուրս գալիս թալանչի դիակապուտները:Նրա տունը պատրաստի թանգարան էր՝ ճշգրիտ էքսպոզիցիայով: Չարդարված պատերը, լուսամուտների շրջանակները, շերտավարագույրները ձեռակերտ էին: Ամեն ինչում զգացվում էին նրա անտեսանելի ներկայությունն ու ձեռքերի ջերմությունը:Գիշերով, չգիտես որտեղից, եկավ մի բեռնատար մեքենա՝ անհայտ մարդկանցով, և շտապ սկսվեց աշխատանքների ապամոնտաժումը

⁵⁴ Ա. Խանջյան, նշվ. աշխ., էջ 166:

⁵⁵ Հ. Սիմոնյան, Սա մեր երկիրն է, էջ 244:

⁵⁶ В. Максoва, В старом городе в Сололаки вспоминали художника, «Голос Армении», 10 февраля, 2009, с. 6.

(Թբիլիսիում շատ անհանգիստ ժամանակ էր): Չկարողանալով անջատել ամբողջ պատով մեկ ծավալված կոլաժը՝ քանդեցին. այն պահպանվել է միայն իմ արած լուսանկարում: Տունը վերածվեց կողոպտված օջախի՝ կոտրված ապակիներ, ճոճվող փեղկեր, պոկված դռներ, հատակից ու պատից քերթված գորգեր, ճիշտ այնպես, ինչպես քուրքական արշավանքի ժամանակ: Դրանից հետո տունը քանդվում էր աչքի առաջ... Բարերախտաբար, բոլոր աշխատանքները չէ, որ կորան ու ձեռքից ձեռք անցան. ինչ-որ բաներ փրկվեցին ու կազմեցին երևանյան քանդարանի հիմքը»⁵⁷:

Սերգեյ Փարաջանովի հոգեհանգիստը կատարվեց հուլիսի 24-ին Հայաստանի ժողովրդական արվեստի պետական քանդարանում, որտեղ մինչ այդ՝ 1988 թ., բացվել էր Փարաջանովի գործերի անդրանիկ ցուցահանդեսը: Երևանում կառուցվող տուն-քանդարանը դեռ անավարտ էր:

1990 թ. հուլիսի այդ օրը մտերիմ հարազատներից ներկա էին միայն արվեստագետի՝ Ուկրաինայում ապրող, ապահարզան ստացած կինը՝ Սվետլանա Շչերբատյուկը, և միակ որդին՝ Սուրեն Փարաջանովը (ծնված 1958 թվականին):

Երևանում Սերգեյ Փարաջանովի թաղման կառավարական հանձնաժողովը որոշեց արվեստագետին հուղարկավորել Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում: Արձանագրենք, որ հիշյալ պանթեոնում 1936 թվականից մինչև 1957 թվականը, այսինքն՝ շուրջ 20 տարի, արգելվել է թաղման արարողություններ իրականացնելը: Աղասի Խանջյանի «Ինքնասպանությունը» ստվերեց կուսակցական այդ ազնվագույն գործչի բարձր հեղինակությունը: Եվ քանի որ այդ պանթեոնը կյանքի էր կոչվել նրա նախաձեռնությամբ, կարգադրվեց կասեցնել հետագա հուղարկավորությունները: Ստալինի մահվանից հետո՝ 1957 թ., Ավետիք Իսահակյանի՝ հիշյալ պանթեոնում կատարված հուղարկավորությամբ պանթեոնը վերաբացվեց⁵⁸:

Սերգեյ Փարաջանովի թաղման հանդիսավոր արարողությանը մասնակցելու համար հյուրեր էին ժամանել Վրաստանից, Ուկրաինայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից: Հրաժեշտի խոսք են ասել անվանի կինոռեժիսոր, «Հայֆիլմ»-ի գեղարվեստական ղեկավար Ֆրունզե Դովլաթյանը, տաջիկ ականավոր կինոռեժիսոր Բախտիյոր Խուրոյնազարովը, Վրաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահ, կինոռեժիսոր Էլլար Շենգելայան, «Դիասպորա կոմունիկասիոն» կազմակերպության փոխնախագահ Ա. Խաչիկյանը, Մ. Բելիկովը և ուրիշներ:

«Կինոյի աշխարհը մի հրաշագործիչ կորցրեց: Փարաջանովի երևակայությունը հավերժ կոյուրի և ուրախություն կպարզկի աշխարհի ժողովուրդներին»: Սա մի հատված է Ֆեդերիկո Ֆելինիի, Տոնինո Գուերայի, Ջուլիետա Մազինայի, Ալբերտո Մորավիայի, Մարչելո Մաստրոյանիի,

⁵⁷ **В. Баженов**, Параджанов гулял на собственных похоронах, «Московский комсомолец», 11 января, 2016, № 27003.

⁵⁸ Տե՛ս **Ա. Խանջյան**, նշվ. աշխ., էջ 168:

Բեռնարդո Բերտոլուչիի՝ Փարաջանովի մահվան կապակցությամբ Երևան ուղարկած հեռագրից:

Թաղմանը ներկա ծով բազմության մեջ են եղել նաև լուսանկարիչ Յուրի Մեչիտովը, դերասան Ալեքսանդր Կայդանովսկին, Փարաջանովի երբեմնի մուսա Սոֆիկո Չխաուրելին: Մեծ կինոռեժիսորը դագաղում պառկած է եղել իր հյուսած մարգարտակար պարեգոտով: Ինչ-որ մեկը ծնկի է իջել դագաղի առջև, կրծքից պոկել է գորավար Անդրանիկի դիմանկարով կլոր մեղալը և ամրացրել Փարաջանովի զգեստին:

1990 թվականի հուլիսի 25-ին Սերգեյ Փարաջանովի դագաղը Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի ճեմասրահում էր, որտեղից էլ սգո թափորը շարժվեց դեպի պանթեոն:

Տարօրինակ մի գուգաղիպությամբ «դագաղը տանող զրահամեքենան ճանապարհի կեսին խափանվեց... Հուղարկավորության մասնակիցները մեքենան հրելով հասցրին Կոմիտասի անվան զբոսայգի»,- վկայել է Փարաջանովի թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանը⁵⁹: Փաստորեն, ողջ կյանքը դժվարությունների բովով անցած Փարաջանովին դժվարությամբ է տրվում նաև վերջին կացարան հասնելը:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ դեռևս 1984 թվականին Փարաջանովը «բեմադրել» է իր թաղումը Երևանում. «Փարաջանովը կազմակերպեց իր «հուղարկավորությունը» ամենայն մանրամասնությամբ: Դագաղ էր տարվում առանց դիակի, իր լուսանկարը, ողբացող կանայք կային և այլն»⁶⁰: Այդպիսով Փարաջանովն իր բողոքն է հայտնել, ընդվզել իրեն շրջապատող մռայլ ու տխուր իրականության դեմ:

Սերգեյ Փարաջանովի նման հալածական հանճարեղ մի բանաստեղծ էլ՝ Վլադիմիր Մայակովսկին, իր ողբերգական վախճանից քսան օր առաջ գրել է. «Իմ վրա այնքան շներ են կախել և այնքան մեղքերի մեջ են մեղադրել, որոնք ես ունեցել եմ և չեմ ունեցել, որ հաճախ ինձ թվում է՝ լավ է գնալ որևէ տեղ, նստել մի երկու տարի, որպեսզի գոնե հայիոյանք չլսեմ»⁶¹:

Ցավալի է, որ մեծերին շատ դեպքերում գնահատում են միայն մահվանից հետո: Փարաջանովին որոշեցին թաղել Կոմիտասի անվան պանթեոնում: Նրա բախտը կարծես այս անգամ բերել էր. հայ ժողովուրդը, հավատարիմ լինելով իր նախնյաց ավանդույթներին, անթերի տիրապետում է իր նշանավոր զավակների հուղարկավորության հանդիսությունների կազմակերպմանը: Այսպես՝ 1892 թ. Գրիգոր Արծրունու թաղման արարողությանը Թիֆլիսում մասնակցել է շուրջ 50 հազար մարդ: Պսակների թիվը թաղման օրը անցնում էր 300-ից: Ցավակցական հեռագրերը 400-ից ավելին էին: Իրականում, ինչպես նշել է Լեոն. «Այդպիսի փառքով թաղվող Գրիգոր Արծրունին կենդանության ժամանակ երազի պես անիրագործելի մի բան էր համարում մի լավ բնակարան ունենալը»:

⁵⁹ Նույն տեղում, էջ 167:

⁶⁰ Ս. Գալոյան, Թակարդներ, Երևան, 2009, էջ 302:

⁶¹ Հ. Գրիգորյան, Վլադիմիր Մայակովսկի, Երևան, 1970, էջ 431:

Իսկ Փարաջանովը: Արվեստագետ Սանդրո Ջուլիակյանի վկայությամբ՝ «անգամ բանտից դուրս» անգործության էր մատնված: Ո՞վ կհամարձակվեր գործ առաջարկել «շնորհագուրկ» արվեստագետին: Ուստի միանգամայն հասկանալի էր մանկանը հատուկ Փարաջանովի այն հրճվանքը, երբ 800 գրամ կարագի և մեկուկես կիլոգրամ շաքարի կտրոնները գլխից վեր պարզած իր հայ գործընկերներին վկայակոչում էր. «Տեսեք, տեսեք, Փարաջանովը դեռ չի սպառվել, Փարաջանովը շարունակվում է»: Չգիտեմ, ով ինչպես ընդունեց դառը հետևությունների հանգեցնող այս դրվագը, սակայն կոնկրետ ինձ համար սա ողբերգություն էր, ողբերգություն մի պայծառ մարդու»⁶²:

Սերգեյ Փարաջանովը կյանքի վերջին տարիներին շատ էր փոխվել: Բանտերում անցկացրած ծանր պահերը, կրած կտտանքները, ստորացումները իրենցն արել էին: Վերջին տարիներին նա չէր սափրվում, հագնվում էր անփույթ... Հասարակ մի կեպի էր դնում: Եվ եթե մեկը փողոցում հանդիպեր նրան և չիմանար, թե ով է այդ մարդը, անգործ և թշվառ մեկի տեղ կդնեիր... Մտերիմների կարծիքով՝ միայն ֆիզիկապես էր փոխվել: Չարաճնի ժպիտը մատնում էր տառապած հոգու անսպառ կորովն ու հավատը Մարդու նկատմամբ:

Թե՛ իր ապրած ողջ կյանքում, և թե՛ իր կյանքի վերջին տարիներին Սերգեյ Փարաջանովը չկորցրեց հավատացյալ մարդու ու արվեստագետի իր ճշմարիտ էությունը: Ահա թե ինչպես է նկարագրել Ադասի Այվազյանը Փարաջանովին, երբ վերջինիս հանդիպել է Կիևում. «Սիրահարված էր Կիևին՝ ինչպես արվեստագետ և ինչպես հայ: Հայերն են, որ կարող են սիրել աշխարհը, սիրել հանուր մարդկայինը՝ առանց խտրություն դնելու ցեղային տարբերությունների միջև: Մի ամբողջ օր նվիրեց ինձ, տարավ Կիևի օպերային թատրոն, որտեղ նրան անչափ սիրում էին և նրա ստեղծագործական շռայլությունից օգտվում էին լիովին, մտքրեց բոլոր այն փողոցները, որոնք են չէի տեսել, և որոնք նա արվեստի աչքով էր դիտում: Բոհեմային բարոյական շողշողուն անասահմանություններից, կենցաղավարության կեղծափայլ մանրամասներից բիրվիական քայլ դեպի հավատը, դեպի Աստված: Նման կամուրջ քչերն են ընդունակ իրենց ուսերին կրել: Տառապանքը թաքնված է գեղեցկության տակ, և դա ավելի տառապալից է: Չնայած ժամանակն արդեն սեղմում էր, Փարաջանովն անպայման պիտի գնար եկեղեցի, և ես տեսա նրան ուղղափառ եկեղեցում, հոգով լսեցի նրա խոսքը Աստծուն, նրա աղաչանքը առ Աստված, նրա հոգեխառնությունը Բացարձակի հետ: Դա ուրիշ Փարաջանով էր, և ինքը պատկանում էր միմիայն իրեն: Հանդիսություն չկար, հանդիսատես չկար, հանդիսակիր չկար»⁶³:

Այս տողերը մեջբերելիս ուշադիր դիտում են երկու լուսանկար: Դրանցից մեկում Թբիլիսիի իր հայրական տան երկրորդ հարկի պատշգամբում Փարաջանովը կռթնած է պատշգամբի բազրիքին: Փարաջանովի կողքին կանգնած են նրա երկրպագուներից մեկը՝ լուսանկարիչ Սարգիս Դարչին-

⁶² Ս. Ջուլիակյան, Փարաջանովը շարունակվում է, «Էկրան», 1990, № 9:

⁶³ Ա. Այվազյան, Եղած-չեղածը՝ մի կյանք, էջ 263:

յանը, վերջինիս կինը և որդին: Լուսանկարը 1983 թվականի է: Փարաջանովը լուսանկարում ընդամենը 59 տարեկան է, բայց 80-85 տարեկան ծերունու տեսք ունի:

Մյուս լուսանկարում Փարաջանովի թբիլիսյան բնակարանում Ֆրունզե Դովլաթյանն է տանտիրոջ հետ: 1987 թվականի լուսանկար է: Դովլաթյանը 60 տարեկան է, Փարաջանովը՝ 63: Նրանց տարիքային տարբերությունն ընդամենը երեք տարի է, իսկ լուսանկարից կարծես մեզ են մայում հայր և որդի:

Երկու լուսանկարներում էլ Փարաջանովը ժպտում է: Ժպտում է այն տանը, որտեղ ապրել է ծնողների հետ, անշուշտ, իր կյանքի երջանիկ շրջաններից մեկը: Գուցե իր անչափ սիրելի մորն է հիշում, ում մասին երախտապարտ որդին հանճարեղ խոսքեր է ասել. «Բայց իմ մանկությունը ավելի ուժեղ է Ֆելիկսի մանկությունից: Դուք պետք է տեսնեք իմ մորը: 70-անց մադեռ արտիստիկ է»:

Ի դեպ, Փարաջանովը մեծապես գնահատում էր Ֆեդերիկո Ֆելինին: Բազում անգամներ բանավոր թե գրավոր խոստովանել է իր և Ֆելինիի հոգեհարազատությունը. «Մտածողությամբ ես հարազատանում եմ Ֆելինիին»⁶⁴:

Վերադառնալով լուսանկարներին: Դրանք դիտելով՝ վերհիշեցի Էռնեստ Հեմինգուեյի «Ծերունին և ծովը» ստեղծագործության հերոս ծերունի Սանտյագոյի խոստովանությունը. «Ես շատ հեռացա ավից»: Սերգեյ Փարաջանովը ավից անսահմանորեն հեռացել էր այն պահից, երբ 1964 թվականին Էկրան բարձրացնելով «Մոռացված մախնիների սովերները» ֆիլմ-հրաշքը՝ ի լուր աշխարհի բարձրաձայնեց. «Ճանաչե՛ք իմ Մեծությունը: Ես հանճարեղ կինոգործիչ եմ»:

Փարաջանովի անեզր, աննկարագրելի ու անպատմելի ողբերգության նրբերանգները լավագույնս ներկայացրել է ուկրաինացի գրականագետ, քննադատ, ականավոր այլախոհ, Փարաջանովի արվեստի ջերմ երկրպագու Իվան Զյուբան. «Սերգեյ Փարաջանովը մահացավ: Մահացա՞վ: Ո՛չ, նրան սպանեցին: Սպանեցին դանդաղ, պարբերաբար և աննահանջ: Ինչպե՞ս: Ամենաարդյունավետ միջոցներով: Երբ խնդիրն առնչվում է հանճարին, ապա սպանելու մեթոդները հիմարության աստիճանի հասնող պարզ են: Չտալ նրան աշխատանք, չթողնել, որ մա ինքնադրսևորվի: Չտվեցին տարիներով: Աշխարհահռչակ մեծ ռեժիսորը, ում ցանկացած կադրը և միտքը մասնագետների գնահատմամբ ոսկու գին ունեին, անգործ էր, իր ծառայություններն առաջարկելու համար ծեծում էր տարբեր կինոստուդիաների դռները»⁶⁵:

Հիրավի բաց էին Փարաջանովի թե՛ հոգին և թե՛ միտքը: Անկեղծ էր անսահման, դիմակ չուներ և այդպես իր ողջ գիտակցական կյանքում որտեղ էլ որ եղավ, մտքում եղածը լեզվի ծայրին էր, ինչն էլ հետագայում իր դժբախտությունների առիթը դարձավ:

⁶⁴ «Գարուն», 1970, № 1, էջ 81:

⁶⁵ **И. Дзюба**, Он еще вернется в Украину, «Литературная Армения», 1988, апрель-июнь, № 2, с. 93.

Սերգեյ Փարաջանովի կենսագրության էջերում կա մի սահմնեցուցիչ վկայություն: Համաշխարհային հռչակի արժանացած արվեստագետը հուսահատ մի պահի համարձակվել է դիմել ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ալեքսեյ Նիկոլաևիչ Կոսիգինին. «Թախանձագին խնդրում եմ թույլատրել ինձ ամբողջովին մերկ անցնել սովետա-իրանական սահմանը: Այդպիսի մերկ վիճակով, կարծում եմ, կդառնամ իրանական կինոյի հիմնադիրը»⁶⁶:

Խորհրդային Միությունում, ինչպես նշել է Սերգեյ Գալոյանը, «ամեն կերպ փորձեցին սպանել Սերգեյ Փարաջանով անուն-ազգանունով այդ հանճարեղ մարդուն»⁶⁷:

Սերգեյ Փարաջանովի անկեղծ բարեկամներից մեկը՝ ռուս հանրաճանաչ բանաստեղծուհի Բելլա Ախմադուլիան, ի վերջո «կհայտնագործի» մեծ կինոռեժիսորի մեղքը. «Նա մեղավոր էր, որ ազատ մարդ էր»⁶⁸: Իսկ Խորհրդային Միությունը ազատ մարդկանց երկիր չէր: Այստեղ ազատ խոսքն ու մտածողությունը դաժանորեն պատժվում էին, այլախոհությունն ու տարակարծությունը՝ մերժվում ու հալածվում: Բայց աշխարհում շատ ուրիշ երկրներ կային, որտեղ մեծ տեղ էին տալիս նորարարներին ու տաղանդավոր ստեղծագործողներին: Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում մի դեպք, որ տեղի է ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Գերմանացի զավթիչներին Փարիզում գումավոր մետաղ է հարկավոր եղել: Նրանք դիմել են ֆրանսիացիներին, որպեսզի հանձնաժողով կազմեն և ձուլման հանձնեն գեղարվեստական ոչ մնայուն արժեք ներկայացնող արձանները: Եվ Փարիզում որոշել են ազատվել ցածրարժեք ստեղծագործություններից⁶⁹: Իսկ ահա ԽՍՀՄ-ում, առանց որևէ «զավթիչի խնդրանքի», շատ դեպքերում ազատվում էին գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններից՝ մեծ արգելքներ ստեղծելով և խոչընդոտելով մասնաճյուղից հեղինակներին:

Փաստ է, որ Փարաջանովի մեծագույն ֆիլմերը ԽՍՀՄ-ում ստեղծվել և ցուցադրվել են աննկարագրելի տառապանքի գնով, իսկ մտահոգումների մեծ մասը պարզապես չի իրականացվել: Սա հայտնի է բոլորին: Այդ դեպքում հարց է ծագում, թե ինչպես է, որ «Թռչում են կռունկները», «Բալլադ զինվորի մասին» և այլ հանճարեղ ֆիլմեր այդպես հեշտությամբ՝ առանց խոչընդոտների են ծնվել և ցուցադրվել էկրաններին: Պատասխանն ավելի քան պարզ է: Վերոնշյալ արժեքավոր ֆիլմերը, այնուամենայնիվ, կյանքի են կոչվել նախապես ծրագրված պետական պատվերով:

Փարաջանովի նման ճշմարիտ արվեստագետի համար մեծագույն դժբախտությունը նորարար լինելն էր: Այդուհանդերձ, այն, ինչն արգելեցին

⁶⁶ Ս. Գալոյան, նշվ. աշխ., էջ 265:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Բ. Ախմադուլինա, Прощай, свободная стихия, «Литературная газета», 1 августа, 1990.

⁶⁹ Տե՛ս «Կերպարվեստ», 2008, № 1-2, էջ 26:

Փարաջանովին մարմնավորել կինոժապավենով, հետագայում որոշ չափով մարմնավորվեց Փարաջանովի կոլաժներում⁷⁰:

Ժամանակը Փարաջանովի պարագայում ամեն ինչ կարծես իր տեղը գցեց: Ժամանակը ասեղ և անաչառ դատավոր է: «Ժամանակի ցախավելը ո՛չ չոր է, ո՛չ էլ բռի ձեռքերի մեջ: Նա ավելում է զգուշությամբ, բայց անխնա: Ժամանակը կործանում է, բայց նաև ամրացնում անկործանը՝ մաշելով ու հղկելով սրա խորդուբորդություններն ու անկյունները: Եվ մինչ անխակականները կորցնում են իրենց ողջ ունեցվածքը, իսկական մեծերը շահում են ժամանակից»⁷¹: Պարույր Սևակի այս խոսքերը, որ ասված են Սայաթ-Նովայի մասին, նույնքան «Սայաթ-Նովա» ֆիլմի հեղինակ Փարաջանովի մասին կարող են լինել:

Սերգեյ Փարաջանովը վախճանվել է 1990 թ. հուլիսի 20-ին, բայց միայն 1999 թ. է նրա շիրիմին մահարձան դրվել, որի հեղինակը ՀՀ վաստակավոր նկարիչ Արա Շիրազն է (1941-2014), ճարտարապետը՝ Ասլան Մխիթարյանը (ծն. 1947): Դա գուցե պայմանավորված էր նրանով, որ Հայաստանի Հանրապետությունն այդ շրջանում քաղաքական ու տնտեսական վայրիվերումների մեջ էր, և չլուծված բազմաթիվ հարցեր կային, որոնցից ամենագլխավորը դարաբաղյան հիմնահարցն էր: Ինչևէ, 1999 թ. մայիսի 6-ին Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում Սերգեյ Փարաջանովի ծննդյան 75-ամյակի միջոցառումների շրջանակներում հանդիսավոր կերպով բացվել է նրա մահարձանը: Բացման և հոգեհանգստի արարողությունը կատարել են Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը (1941-2003) և Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցու ծխականատար քահանա տեր Կորյունը: Ներկա են եղել Փարաջանովի արվեստի երկրպագուներն ու մտերիմները և այլին՝ Սվետլանա Շչերբատյուկը:

⁷⁰ Տե՛ս **Ֆ. Եղիազարյան**, Յոթերորդ երկինք, «Ազատամտություն», հունվարի 21, 2009:

⁷¹ **Պ. Սևակ**, Սայաթ-Նովա, Երևան, 1969, էջ 359:



Կռվի ժամանակ Արայի զորքը ջարդվում է: Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներին: Հաղթությունից հետո փկինը դիակապուսներ է ուղարկում ճակատամարտի տեղը՝ դիակների մեջ փնտրելու իր ցանկալի սարգիստին: Արային զննում են մեռած ֆաջամարտիկների մեջ: Հրամայում է նրան սանել դնել սպարանքի վերնասանը:

Մովսես Խորենացի

Ես ընկել եմ պագշոս Շամիրամի նեղից...

Հրաչյա Հովհաննիսյան



«ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ» ԶՆԿԱՐԱՀԱՆՎԱԾԸ...

Սերգեյ Փարաջանովի յուրօրինակ ձեռագրով ու վարպետությամբ գրված մեկ տասնյակից ավելի կինոսցենարներն այսօր թրթապանակների մեջ են:

Փարաջանովի «Արա Գեղեցիկ», «Սասունցի Դավիթ», «Խոստովանանք» ֆիլմերի համար գրված սցենարները Հայաստանում այդպես էլ կյանքի չկոչվեցին, չէկրանավորվեցին:

«Արա Գեղեցիկ»-ի սցենարը, ինչպես նաև մյուսներինը Սերգեյ Փարաջանովը գրել է ռուսերենով, հին ռուսերեն բառերի և արտահայտությունների ճոխությամբ:

Նկատենք, որ «Արա Գեղեցիկ և Շամիրամ»-ը հայ ժողովրդական առասպել է: Առաջին անգամ ավանդել է Մովսես Խորենացու մշակմամբ: Հետագայում այլ պատմագիրներ ընդօրինակել են այն: Ըստ Մովսես Խորենացու՝ Ասորեստանի թագուհի Շամիրամը հրապուրվել է հայոց թագավոր Արայի գեղեցկությամբ, փորձել է տիրանալ Արային: Հայոց թագավորին ուղարկված թանկարժեք ընծաները և կրքոտ սիրո խոստովանանքները չեն տվել դրական արդյունք: Շամիրամը վճռել է զենքի ուժով հասնել իր նպատակին: Արան մարտում զոհվել է: Շամիրամը նրա մարմինը դրել է իր ապարանքի վերնատանը՝ հույս ունենալով վերակենդանացնելու նրան: Կարճ ժամանակ անց, սակայն, Արայի դին նեխել է: Շամիրամը դիմել է խորամանկ միջոցի. իր մտերիմներից մեկին հազգրել է Արայի զգեստները և հայտարարել, թե իբրև Արան կենդանացել է:

Սերգեյ Փարաջանովի վախճանից 11 տարի անց՝ 2001-ին, Սանկտ Պետերբուրգում լույս տեսավ «Խոստովանանք» («Исповедь») վերտառությամբ գիրքը: Դրանում ընդգրկված են Փարաջանովի հետև-

յալ գործերը՝ «Կիւսյան որմնանկարներ», «Սայաթ-Նովա», «Խոստովանանք», «Ննջող ապարանքը», «Ինտերմեցցո», «Դեր», «Հրաշքը Օդեսսում», «Շուշանիկի նահատակությունը», «Արա Գեղեցիկ», «Կարապի լիճը», «Զոնա», «Նովելներ»: Ի դեպ, գրքում տեղ են գտել նաև Սերգեյ Փարաջանովի՝ բանտից գրված մամակները, Կորա Ծերեթելու «Օրփեոսը դժոխքում» («Օրфей в аду») հոդվածը, ինչպես նաև Փարաջանովի մամակներում հիշատակված անձանց մասին կենսագրական տվյալներ:

Ինչպես տեղեկանում ենք գրքի առաջաբանից, «Արա Գեղեցիկ» ֆիլմի սցենարն առաջին անգամ ամբողջական տեսքով տպագրվել է սույն ժողովածուում: Պատումի գուսպ, հուզական, սակայն հաղթական սլացքը շատ տպավորիչ է հայոց պատմության խոր իմացությամբ: Հատկապես էպիկական է «Արա Գեղեցիկ»-ի վերջաբանը.⁷²

«Ռազմի դաշտում դեմ առ դեմ ասորեստանցիներն են, հայ ռազմիկները և քարերով զինված հայ աշխարհագորայիները...

Մռնչում էին առյուծները...

Վրնջում էին ձիերը...

Մոխրագույն փղերը, մերկացնելով իրենց ժանիքները, ետ-ետ էին քաշվում:

Այրվում էին աշտարակ-բաստիոնների սեղանները...

Այրվում էին մերկ մարմինները...

Այրվում էին մարտակառքերը՝ արձակելով գարշահոտություն և ժանտահոտ...

Ասորեստանցի ռազմիկները փախչում էին՝ հանելով իրենց ժանգոտ օղազրահները, կորցնելով սրերը և վահանները...

Ժանգագույն երկնքից բոսորագույն արևը շիկացնում էր ճակատամարտը...

Սլանում էր ոսկով և արծաթով պատված սպիտակաթույր ձիուն մստած հեծյալը...

Նրան ուղեկցում էր սև հովատակին մստած և մուգ գույնի քողը ուսերին գցած Մայր-Թագուհին...

Հայ մայրերը հեծկլտում էին...

Մուրհանդակը ծնկել էր Շամիրամի առաջ...

- Անօգուտ է ամեն ինչ, թագուհի՛... Դու շրջապատված ես, հանձնվի՛ր... Ավարտված է պատերազմը...

Սպիտակ ձիուն մստած արքայազնը բլրի գագաթին է՝ Շամիրամի կողքին...

Շամիրամը ցատկում է հովատակի թամբին...

Ռազմի դաշտում մերկացված սրեր...

Արքայազնը կռվում է Շամիրամի հետ...

Արծաթով և ոսկով պատված արքայազնը կտրատում է Շամիրամի գրահը և կարգադրում.

⁷² Թարգմանությունը ըստ Ա. Փաշայանի:

- Դադարեցրո՛ւ կռիվը, Շամիրա՛մ...

Պատասխանի՛ր ինձ՝ ուր է Արան: Նրա հոգին արևի մման անմահ է... Եվ ինչպես արևը, լուսավորում է մեզ... Մարմինը, սակայն, վերադարձրո՛ւ, որպեսզի ժողովուրդը կատարի իր սրբազան ծեսը: Կատարի՛ր այնպիսի նվիրումով, որը թելադրված է ցավի զգացողության ըմբռնումով:

Մայր-Թագուհին աղաղակում էր կռվող հեծյալներին.

- Վերադարձրե՛ք ինձ թագավոր որդու մարմինը...

Շամիրամը ետ-ետ է քաշվում...

- Ո՛չ, չեմ վերադարձնի, նրա տոչորվող վերքերը կլիզեն արալեզ-աստվածները... Նա կապրի՝ սիրելով միայն ինձ... Ես նրան հարություն կտամ...

Արքայագնը.

- Անիծվե՛ք և՛ դու, և՛ քո ժողովուրդը: Դուք մեր բարին վերադարձրի՛ք չարով, հավատարմությունը՝ նենգությամբ: Ու հենց դրա համար էլ քո թագավորությունը թող չքվի երկրի երեսից: Թող այն փոշի դառնա, որ ապագայում չհիշվի... Եվ այլևս մարդիկ գալիք դարերում չանդրադառնան դրան... Եվ թող «Շամիրամ» բառը հետայսու հնչի որպես «վավաշոտ» բառի հոմանիշ...

Արքայագնը ընկնում է թամբից: Նրա աչքերը մշուշապատ էին: Ձեռքով պոկում է Նուարդի կրծքազրահը, մերկացնում ճերմակ կուրծքը, ոտքերը... Արքայագնի դեմքից ընկնում է սաղավարտը, և ոսկեգօծ մազավուռը ծածկում է Նուարդի՝ երկունքի ցավերից աղավաղված դեմքը:

Նուարդը ծննդաբերում է Շամիրամի ներկայությամբ...

Մայր-Թագուհին իր սև թիկնոցով ջանում է Շամիրամին հեռու պահել Նուարդից: Էգ վագրը համրաքայլ նահանջում է... Ջինվորները շրջվում և նահանջում են օրհնված բլրաթմբից...

Մայր-Թագուհին ոսկեվետ վահանի վրա հանդիսավորությամբ տանում է Արայի պատկերի նմանությամբ Արամի թռռանը և Արայի որդուն...

Ժողովուրդն ու զորքը արտասվում և հրճվում էին...

Ահա այսպես ավարտվեց հայերի ալ կարմիր արյունով ներծծված հողում այս թախծատոչոր, բայց հերոսական պատմությունը»:

* * *

Ստորև ներկայացնում ենք ԽՍՀՄ ժողովրդական արտիստ *Սոս Սարգսյանի* պատմածը.

«Թիֆլիսում Սերգեյ Փարաջանովի տանն էի: Շատ հյուրեր ուներ՝ ուկրաինացիների մի խումբ՝ տղա-աղջիկ, ռուսներ, մի քուրդ, Մոսկվայից եկած մի քանի հրեա, հետո՝ կեսգիշերն անցած, ներս մտան աղմկոտ վրացիներ:

Սերգեյ Փարաջանովը մեկ էլ ոգևորված սկսեց խոսել «Արա Գեղեցիկ»-ի մասին: «Երագում եմ,- ասաց,- նկարահանել»: Ու սկսեց պատմել, թե ինչպես է տեսնում ֆիլմը:

Հիշողությանս մեջ տպավորվել է ֆիլմի ավարտը: Ուրեմն, պարտված Շամիրամին բերում են Նվարդի մոտ ու հարցնում՝ ինչ պատիժ ընտրեն նրա համար: Նվարդը պատասխանում է. «Ես ինքս կպատժեմ նրան»: Իջնում է ձիուց ու, հայոց փոշոտ դռերում պառկելով, սկսում է ծննդաբերել. ծնում

է: «Էս է,- ասում է Նվարդը Շամիրամին: Ցույց է տալիս մանուկին,- էս է իմ վրեժը... Իմ զավակը իմ ցեղի շարունակությունը... Իսկ դու կմնաս ստերջ...»:

Վերջում Սերգեյը բաժակ բարձրացրեց.

- Բոլորս խմենք վրացիների կենացը: Շատ լավ ժողովուրդ են, թող ինձ ներեն հայերը, ուկրաինացիները, ռուսները: Հրեաները նույնպես թող ներեն, քրդերն ու ասորիներն էլ, բայց ամենից շատ ինձ սիրում և գնահատում են վրացիները...

Ներկաները տրտնջացին: Չէ, ինչո՞ւ, Սերգեյ, էդպես չի, մենք էլ...

- Իհարկե: Գիտե՞ք, որ ամեն ամիս վրացիները ինձ տալիս են քսանհինգ հազար ռուբլի...

Տիրեց մի տեսակ մեղավոր լռություն...

Ռուսներից մեկն ասաց.

- Դե՛, վրացիները հարուստ են...

- Ձեզնից հարուստ չեն,- վրա բերեց Սերգեյը՝ չարաճճի ժպտալով: Էլ չեմ խոսում բուրժուա հրեաների մասին:

Հենց էդ պահին էլ ներս խուժեցին մի խումբ վրացիներ: Ողջույններ, ծանոթություններ, համբույրներ, գրկախառնություն...

- Հա,- ասաց Սերգեյը,- ճիշտ ժամանակին եկաք, ես հենց պատրաստվում էի մի քանկ կենացի.

Վրացիները մուգ գինին լցրին թասերը, հարգանքով պատրաստվեցին: Սերգեյը շատ հանդիսավոր սկսեց.

- Ուզում եմ բաժակ բարձրացնել հայերի համար...

- Վա՛, Գացո՛, էս գիշերվա կեսին ի՞նչ հիշեցիր...

- Ես նրանց միշտ եմ հիշում: Որովհետև, թող ինձ ներեն ռուսները, ուկրաինացիները, հրեաներն ու քրդերը ու նաև վրացիները, բայց ամենից շատ նրանք են ինձ սիրում և գնահատում...

- Վա՛, ի՞նչ ես ասում, տո՛ւ, բա մե՞նք,- բողոքեցին վրացիները:

- Իհարկե,- շարունակեց Սերգեյը,- գիտե՞ք, որ ամեն ամիս հայերը քսանհինգ հազար ռուբլի են ուղարկում ինձ...

Վրացիները լուրջ ընդունեցին նրա ասածը: Ամոթից գլուխները կախեցին, նրանցից մեկը քթի տակ ասաց՝ դե՛, հայերը հարուստ են...

Իսկ Փարաջանովը... Փարաջանովը թաղվեց արցունքախառը ծիծաղի մեջ: Կամաց-կամաց հերթով բոլոր ներկաները վարակվեցին նրանից, ու մի ընդհանուր «ինտերնացիոնալ» ծիծաղ թնդաց»⁷³:

⁷³ Ս. Սարգսյան, Մենք ու մերոնք, Երևան, 2001, էջ 138-139:





ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՄԱՍԻՆ

* * *

Փարաջանովը ամեն ինչից արվեստ է ստեղծում: Եվ այդ արվեստի հրապույրը անմիջականության մեջ է: Ինչ-որ բան մտածելով՝ նա չի ծրագրում, կառուցում, հաշվարկում. մտահղացման և իրագործման միջև տարբերություն չկա: Հուզականությունն առանց կորուստների, իր մաքուր, նախաստեղծ վիճակում հասնում է ստեղծագործության վերջնական արդյունքին: Այդպիսին է «Նռան գույնը»: Մենք այդպես չենք կարող:

Անդրեյ Տարկովսկի

* * *

Կան ֆիլմեր, որոնք ես այդպես էլ չհասկացա մինչև վերջ: Կարող եմ միայն ասել՝ դրանք ինձ գրավում են իրենց գեղեցկությամբ: Չէ՞ որ գեղեցկությունը և պարզությունը հաճախ նույն բանը չեն: Օրինակ՝ Փարաջանովի, իմ կարծիքով, մեր ժամանակի լավագույն ռեժիսորներից մեկի «Նռան գույնը» ապշեցնում է գեղեցկության կատարելությամբ: Բայց այս ֆիլմի գեղեցկությունը, ֆիլմ, որ հափշտակում է ձեզ, կլանում ամբողջովին, ամեննին էլ պարզություն չէ:

Միքելանջելո Աստուիոնի

* * *

Ես հավատում եմ այն գաղափարին, որ առաջին տեղում կանգնած է արվեստագետի ստեղծագործությունը, այլ ոչ թե նրա անձը: Այդ իսկ պատճառով ես կարծում եմ, որ ոչ թե մենք ենք ստեղծում մեր արվեստի լեզուն, այլ լեզուն է ստեղծում արվեստագետին: Սերգեյ Փարաջանովն ինքնին կինեմատոգրաֆիկ լեզվի մեծ երկ է, ստեղծագործություն: Կինոյի լեզուն ինքնին գոյություն ունի, իսկ կինոհեղինակները նրա ծառաներն են: Փարաջանովն այդ լեզվի խոնարհ և տաղանդավոր ծառան էր: Ավելի լավ, քան ուրիշները: Կինոյի տաճարում առկա են պատկերը, լույսը և իրականությունը: Փարաջանովն այդ տաճարի վարպետն էր ու տիրակալը:

Ճան-Լյուկ Գոդար

* * *

Ինչո՞ւ թույլ չեն տալիս, որ Փարաջանովը հանգիստ աշխատի: Ինչո՞ւ են ուզում անպայման թաղել տաղանդավոր աշխատանքը:

Պարույր Մևակ

* * *

Ինչո՞ւ քիչ շփվեցի հանճարեղ Փարաջանովի հետ. չէ՞ որ ամեն բոլորն նրա կողքին ոսկյա պահ էր, մի աշխարհ էր՝ թանկարժեք ապարների ծալքերով: Ու չգիտեիր՝ որ ծալքից, որ շերտից ինչ դուրս կբերի հանկարծակի, ինչ իմաստություն, ինչ ճշմարտություն ինչ գույներով կշողշողացնի: Նրա մտքերը ասույզներ էին շատրվանող:

Սոս Սարգսյան

* * *

Սերգեյ Փարաջանովը մենակ էր: Մենավոր առյուծ անապատի գորշ ավազների վրա, և անապատի գորշ ավազների պես անձրև էր երագում, արևից տոչորվում:

Շահեն Թաթևյան

* * *

Այն կարճ ժամկետը, որ տրված էր Փարաջանովին սցենար գրելու համար, հերիք էր, որ Հայաստանը իր գործն անի՝ վերադարձնի իրենից հեռացած որբին սեփական կազմախոսությանը, մխրճի գեղագիտական հարազատ միջավայրը:

Աղասի Այվազյան

* * *

Փարաջանովը մեծ արվեստագետ էր և մեծ երեխա: Ինչ էլ բաժին ընկավ ճակատագրին, կենսական ինչ ցնցումներ էլ եղան նրա ճանապարհին, ինչպիսի անբարյացակամության և չարիքի էլ հանդիպեց, միևնույն է, Փարաջանովը մնաց բացառիկ բարի մարդ, հոգում չարություն չպահեց, իսկ արվեստում երբեք չէր դավաճանում իր բարոյական և ստեղծագործական սկզբունքներին... Նա աշխարհ էր եկել մարդկանց գեղեցկություն պարզևեղու համար:

Մերգեյ Իսրայելյան

* * *

Փարաջանովի հետ քայլելիս և զրուցելիս իզուր, որ նրա ասածները չեն գրառել: Ափսո՛ս, հազար ափսո՛ս: Ցավում եմ, որ դա ոչ մեկի մտքով չի անցել: Այնինչ մենք պարտավոր էինք անել դա:

Ալեքսանդր Անիդեան

* * *

Փարաջանովի բարության, մարդկանց նկատմամբ սիրո մասին էլ չեմ խոսում: Նա բոլորին ներում էր, անգամ նրանց, ովքեր դատարանում իր դեմ կեղծ ցուցմունք էին տվել: Նրանից եմ սովորել, որ մանրութները կյանքում շատ կարևոր են: Մեր ղեկավարները դա չգիտեն:

Զավեն Սարգսյան

* * *

Փարաջանովի շնորհիվ կինոարվեստը ճանաչեց իր իսկ գաղտնագրված լեզուն: «Նռան գույնը» ֆիլմով նա վերադարձ կատարեց դեպի մեր միջնադարյան արվեստն ու նկարահանեց ֆիլմ՝ որպես հոգևոր գործողություն: Փարաջանովն արտահայտել է մեր քրիստոնեական մշակույթի, եթե կուգեք քրիստոնեական Արևելքի խորհուրդը, ինչպես նաև ստեղծագործելու և գեղեցիկի արարման խորհուրդը՝ սուզվելով բանաստեղծի ենթագիտակցության մեջ:

Դավիթ Մուրադյան

* * *

Իր ստեղծագործության մեջ Սերգեյ Փարաջանովը երբեք չէր մոռանում բոլոր ժամանակների ու ժողովուրդների մեծագույն վարպետների ավանդույթները, լավ էր տիրապետում վրձնին, գեղեցիկ նկար կարող էր լույս աշխարհի հանել ջարդված ամանեղենի, գունավոր ապակու ու զանազան երկաթեղենի կտորտանքներից: Սիրում էր պատրաստել լայնեզր գլխարկներ, կոստյումներ, կոլաժներ, խճանկարային պաննոներ, զարմանահրաշ կահույք, այլազան բաներ, բայց, այս ամենով հանդերձ, մնում էր հայ ազգային արվեստագետ՝ գուցե դա չգիտակցելով ու դրան չձգտելով:

Վլադիմիր Ստուդիչին

* * *

Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմը Հայաստանի սահմաններից դուրս չի ցուցադրվում: Շատ տաղանդավոր ֆիլմ է: Եվ շատ հայկական: Գուցե նույնիսկ տեղ-տեղ չափազանց հայկական: Նա այնպիսի համառությամբ է պնդում իր ազգային ինքնատիպությունը, որ ինչ-որ մի տեղ մեկ-մեկ սայթաքում է դեպի համամարդկայինը տանող ճանապարհից: Սակայն չէ՞ որ արվեստի մեջ համամարդկայինը հենց այն է, ինչն իսկապես ազգային է: Այլապես այն դիմում է գալառայնության գիրկն ընկելու, այսինքն՝ նեղ ու աննշան մնալու ռիսկին:

«Նռան գույնը» իր ամբողջ տևողության ընթացքում շարունակ ապշեցնում է: Հիանում ես ռեժիսորական մանրազնին աշխատանքով, նրա անսպառ հմարամտությամբ:

Լև Մլավին

* * *

Երբ Երևանում թաղում էին ռեժիսոր Փարաջանովին, մոտ քառասուն աստիճան շոգ էր: Քաղաքը կանգ էր առել, որպեսզի պատվի իր մեծ արվեստագետին: Արևը կանգնած էր գեմիթում, և ստվերները մարդկանց ոտքերի ու տների տակից չէին հեռանում: Օդը եռում էր բերանում, և ցայտաղբյուրները չոր էին:

Երկու ժամվա ընթացքում Երևանի փողոցներով շարժվում էր ցավից ու ծարավից սևացած մարդկանց մռայլ ստվերը, մինչև որ մեկը դիմեց իրենց տների զովուքյան մեջ մնացած ծերունիներին, և այդժամ բացվեցին պատուհաններն ու առաջին հարկի դռները, և ջրով լի բաժակներով ձեռքեր հայտնվեցին, որ ձգվում էին դեպի թաղման թափորը:

Մարդկանց վիթխարի, ձգվող շղթան բաց դագաղի ետևում, որում մնջում էր Փարաջանովը, հալչող սառույցի կտորներով պատված, սկսեց ցրվել: Մարդիկ վազեցին դեպի այդ բաժակները: Աղոթքի կոծերը թաղվեցին ջրի համար վիճող ձայների աղմուկում, և այդպես շարունակվեց մինչև գերեզմանոց, որտեղ գիշերով ձեռքերով փոս էր փորվել, ինչպես ընդունված է անել պաշտելի մարդկանց համար: Լուսանկարիչը, ում բախտ չէր վիճակվել լուսանկարել Փարաջանովին ողջ, կարող էր այժմ պատկերել նրան անշարժ դագաղի մեջ:

Ցավոք, ողջ ժապավենը լույս էր տեսել, հնարավոր է, որ դա ռեժիսորի վերջին կատակն էր: Երբ մարմինը շիրիմ իջեցրին, մարդիկ ծնկի եկան ու սկսեցին դագաղի վրա բռնելով հող լցնել, մինչև որ դատարկությունը լցվեր:

Տոնինո Գուերա





ՈՒՆԿՆԴՐԵՆՔ ՓԱՐԱՋԱՆՈՎԻՆ⁷⁴

Հին կտակարանի գլուխներից մեկում՝ «Ժողովող»-ում, կան այսպիսի տողեր. «Սրտիս մեջ ինքս ինձ ասացի, թե՛ ահա ես ավելի մեծ եղա, քան բոլոր նրանք, որ ինձնից առաջ եղել են Երուսաղեմում, և ես իմ սիրտը տվի ճանաչելու իմաստությունը և գիտությունը և ավելի շատ իմաստություն ստացա, քան բոլոր նրանք, որ ինձնից առաջ եղել են Երուսաղեմում:

Եվ իմ սիրտը ճանաչեց բազում իմաստություն և գիտություն, առականեր և խորհուրդներ: Ես հասկացա, սակայն, որ դա ևս հոգու տանջանք է:

Քանզի շատ իմաստության մեջ շատ գիտություն կա, և իր գիտությունն ավելացնողը իր ցավն է ավելացնում» (գլուխ Ա, 16, 17, 18):

Եթե վերը շարադրվածից հանենք *Երուսաղեմ* բառը և մեկին հրամցենք որպես Սերգեյ Փարաջանովի ասույթներից մեկը, ապա լսողը, եթե, իհարկե, ծանոթ է Փարաջանովի խորախորհուրդ «գաղտնիքներին», կասկածելու առիթ չի ունենա...

Հատկապես վերջին՝ «Իր գիտությունն ավելացնողը իր ցավն է ավելացնում» տողը կարծես հենց հանճարեղ արվեստագետի մասին է:

Փարաջանովը միշտ, անկեղծ էր: Անկեղծ է եղել ոսումնառության տարիներին, ստեղծագործելիս, բանտում, տանը, ամենուր:

Փարաջանով կինոռեժիսորին, կինեմատոգրաֆիայի գյուտարարին, գեղագետին, պատկերային դրամատուրգին և ինքնատիպ ստեղծագործողին խիստ յուրովի է ներկայացրել կինոգետ, արվեստագիտության թեկնածու Սիրանույշ Գալստյանը. «Փարաջանովի կինեմատոգրաֆի մեծագույն գյու-

⁷⁴ Ս. Փարաջանովի ասույթները, էսսեներն ու գրառումները հիմնականում քաղել ենք հետևյալ պարբերականներից՝ «Օրեր», 2000, թ. 11-12, «Գրական թերթ», 1992, հունվարի 31, «Ակտուալ արվեստ», 2004, № 1, էջ 106-111, «168 ժամ», 2008, նոյեմբերի 6, 11-13, «Արմեդիա», 2008, մարտի 8, «Արվեստ», 1990, № 11-12, ինչպես նաև վերջերս Երևանում լույս տեսած իր «Պատմվածքներ, սցենարներ» (Երևան, 2016, 200 էջ) գրքից: Մեծապես օգտվել ենք Հակոբ Թահմիզյանի՝ ԱՄՆ-ի Լոս Անջելեսում 1996 թվականին լույս տեսած «Համաշխարհային կինոյի հանրագիտարան»-ից:

տերից ու հրաշալիքներից մեկը անհամատեղելի, անհամադրելի առարկաները, իրերը միմյանց հետ հաշտեցնելն է, դրանց միջև հաղորդակցման տեսանկյունի լեզու ստեղծելը: Դա պատկերի ներքին երաժշտության ճեղքումն է: Կադրերում տեղ գտած առարկաների ամենաանհավանական զուգակցումները պատկերային դրամատուրգիայի և պլաստիկայի յուրօրինակ տրամաբանությամբ հայտնաբերում են բնական, մի ինչ-որ նախաստեղծ վիճակից բխող ներդաշնակություն: Անգամ արտաքուստ անհրապույր, վանող առարկաները փարաջանովյան կոմպոզիցիայում (ինչպես կոլաժի, այնպես էլ կադրի) ձեռք են բերում կամ վերագտնում իրենց գեղեցկությունը: Տպավորություն է ստեղծվում, թե միմյանց կորցնելուց կամ երկար փնտրելուց հետո նրանք վերջապես գտել են միմյանց, կանացի մերկ կուրծքն ու խխունջը, չոր փշեփունջն ու վարդը, լավաշն ու հողը, իրենց հովվին կորցրած ոչխարների հոտը և վանքի պատերը, հնձվորներն ու եկեղեցու տանիքին աճած խոտը»⁷⁵:

Սերգեյ Փարաջանովի ֆիլմերը յուրօրինակ «դասագրքեր» են, որոնց ամեն մի էջը, ամեն մի տողը մի ասույթ է: Արվեստագետ Մարտին Միքայելյանն այս առումով բավական հետաքրքիր դիտարկում է արել. «Օտար մշակույթի ապրանքների փայլն ու շքեղությունը մեզ չե՞ն խանգարի արդյոք կռահելու համար, որ Ֆելիմիի ու Փարաջանովի շարժանկարների մեկ վայրկյանը շատ ավելի թանկ ու կարևոր է «աստղերով» լեցուն տեսաֆիլմերի ժամերից»⁷⁶:

Փարաջանովի արտահայտած մտքերը, ինչպես և ինքը, վերապաց են: Ահա թե ինչու ամենևին էլ պատահական չէ 1994 թվականին Կիևում ուկրաիններենով լույս տեսած «Սերգեյ Փարաջանով: Թռիչք: Ողբերգություն: Հավերժություն» (կազմողներ՝ Ռոման Կորոզոդսկի, Սվետլանա Շչերբատյուկ) գրքի խորախորհուրդ և բազմիմաստ վերնագիրը:

Մեծ արվեստագետին հավուր պատշաճի գնահատած տաղանդաշատ դերասան և արձակագիր Սոս Սարգսյանը գրել է. «Փարաջանովի մտքերը շատրվանող ասույթներ էին: Նրա տրամադրությունը՝ զարմանային փոփոխվող երկինք ու մարդկային, ու բարի, ու ընկերական, ու շատ ջերմ, ու շատ խոցելի, ու շատ շռայլ»⁷⁷:

Մի առիթով Վիլյամ Սարոյանն ասել է. «Ես գրում եմ, որ ձեզ հիշեցնեմ, իսկ դուք կարդում եք, որ չմոռանաք»:

Սերգեյ Փարաջանովն էլ, Վիլյամ Սարոյանի օրինակով, իր կինոնկարներով, կոլաժներով, նկարներով, նովելներով, մանրապատումներով, ինքնաբնութագրումներով, չնկարահանված կինոսցենարներով, բանտից գրած բազում նամակներով, տարբեր առիթներով և տարբեր վայրերում տված հարցուպատասխաններով խոսք ու գրույցի է բռնվում մեզ հետ և ապա պատվիրում, որ չմոռանաք իր՝ այնքան տարաբնույթ, խիստ ինքնատիպ, սրտի անհանգիստ տրոփով կյանքի կոչված ասույթներն ու պերճաշուք աֆորիզմները...

⁷⁵ «Արվեստ և ժամանակ: Հայացք Գյումրուց», 2007, № 2-3, էջ 28:

⁷⁶ Մ. Միքայելյան, Գույն, նշան, գիր, Երևան, 2002, էջ 136:

⁷⁷ Ս. Սարգսյան, Մենք ու մերոնք, էջ 135:

* * *

Երևանի բոլոր բնակարանների լուսամուտները պետք է նայեն դեպի Արարատները:

* * *

Հայաստանը մեծ երկիր է՝ ապշեցնող մշակույթով, և իմ հայրենիքն է: Ես առաջին անգամ եղա իմ երկրում: Շունչս ուղղակի կտրվեց՝ իմ ժողովրդի պոեզիան և գեղեցկությունը տեսնելով, որովհետև ես վրացական կոփվածքի քիֆլիսեցիի հայ եմ: Ծնվել եմ Թբիլիսիում: Առաջին անգամ տեսա Հայաստանը: Դա խենթացնող անտիկ մշակույթ է, մաքրություն, մեծություն: Խնդրում եմ ջազով չդատել, որ հիմա ելույթ է ունենում այստեղ՝ Բելառուսիայում: Նվագախումբը Օրբելյանինն է, և հարավի տղաները հեղեղել են քաղաքը:

* * *

Տարիների ընթացքում ես ավելի ու ավելի մեծ քնքշանք եմ տածում հայրենիքի նկատմամբ, որտեղ, ցավոք, առայժմ չեմ ապրում: Ինձ համար Հայաստանը արվեստ է և պատմություն: Հայաստանը իմ ընկերներն են, իմ ուրախությունները, մեր ստեղծագործական կորուստները:

* * *

Խորհրդային Միությունում ավելի անտիկ տարածք չկա, քան Հայաստանը: Առաջին դարի և պալեոլիթի հուշարձաններն այստեղ գոյատևում են 10-18-րդ դարերի անօրինակ հուշարձանների հարևանությամբ...

* * *

Երջանիկ եմ, որ Հայաստանն ինձ վստահում է կապվել Մայաթ-Նովայի թեմային:

* * *

Ժողովուրդը սպասում, փափագում էր հաճույք ստանալ իր Մայաթ-Նովայից, նրա երգերից: Ես մաքրված, «գտված» ներկայացրի նրան այն միջավայրը, այն ամենը, ինչը ազդել կամ կարող էր ազդել բանաստեղծի հոգու ձևավորման վրա:

* * *

Հայաստանում ես միշտ ասել եմ. «Դուք ի՞նչ եք ուզում: Դուք այնպիսի ֆիլմ եք ուզում, ինչպիսին «Սպարտաֆ»-ն է, որ տոմսարկղերը տրաքեն վաճառված տոմսերի բերած փողերից, թե՞ ցանկանում եք Կաննում ոսկե մեդալ շահել: «Մենք,- ասում են,- ուզում ենք և՛ այս, և՛ այն»: Դա անհնար է:

* * *

Իմ ֆիլմը պատին ամրացված գորգ է, որի վրա ոսկեթել ասեղնագործված է մեղեդին:

* * *

Ես փնտրում եմ կյանքի որմնանկարները և ջանում գտնել դրանք:

* * *

Ինձ հարցնում են, թե ինչու իմ ֆիլմերում մարդիկ միմյանց հետ չեն խոսում: Ճիշտ է՝ նրանք խոլուսիամբերի տպավորություն են թողնում: Բայց դուք գիտեք, որ գեղանկարչության մեջ էլ մարդիկ նայում են և ոչ թե գրուցում: Կրոնական որմնանկարներում կույս Մարիամը չի խոսում Քրիստոսի և ոչ էլ հրեշտակների հետ: Գեղանկարչությունը համր է, իմ ֆիլմերը՝ նույնպես: Կինոն առանձնահատուկ լեզու է, որն ունի իր գեղեցկությունը, քնքշանքը և ամենից առաջ իր պաթոլոգիան:

* * *

Ինձ առաջարկում են «Անուշ» նկարահանել: Դա հիշեցնում է իմ նախորդ աշխատանքը՝ «Նախնիներ»-ը, հիշեցնում է ծիսական պոեզիա: Բայց եթե անգամ նկարեի, չէի գրի «Անուշ»-ի սցենարը, դիալոգներ և այլն:

* * *

Եթե պահանջեք, որ վերժանեմ «Նռան գույն»-ի այս կամ այն կադրը, իսկապես չեմ կարող: Ով ինչպես կարող է, թող հասկանա ու մեկնաբանի: Նկարահանել եմ՝ ինքս էլ չիմանալով՝ ինչ...

* * *

Մի անգամ հիանալի դրվագ կարդացի Դելակրուայի կյանքից: Ոմն տիկին նրան նկարի սյուժե է առաջարկել. հերցոգ Ուելինգթոնը իշխան Մեթենիխի հետ առանձնացած խոսում է: Տիկինը այդ տեսարանի ականատեսն էր եղել դեսպանատանը: Դելակրուան գլուխ տալով առարկել է. «Իսկական նկարիչի համար դա կլինի մի կապույտ բիծ կարմիրի վրա»: Նույն Դելակրուան, երբ նրան հարցրել են, թե ինչ կնկարեր ռազմիկի ձեռքին, պատասխանել է. «Ես կուզենայի նկարել նրա թրի փայլը»: Ոչ թե թուրը, այլ թրի փայլը...

* * *

Ես ոչնչի կարիք չունեմ: Կաշվե պիջակ չեմ հագնում, նույնիսկ փողկապ չեմ կապում: Կարող եմ ինձ զրկել ուտելիքից հանուն յուրօրինակ մակագրություն ունեցող մի հին հունական սկահակի, որն ինձ հաջողվեց գնել Ամստերդամում: Ահա իրերի իմ ըմբռնումը, թող միշտ մաքուր օդ լինի, թող արդարություն տիրի: Այն բոլոր տանջանքներից, որոնցով անցել եմ և որոնք բնավ էլ չեմ համարում անկում կամ ողբերգություն, ես դուրս եկա էլ ավելի արարչագործ դարձած, քան նախկինում, մի առաքելությամբ, որ նման է Քրիստոսի առաքելությանը:

* * *

Ես պատկանում եմ հանպատրաստից ստեղծագործող ռեժիսորների թվին: Մի բան, որն այսօր արդեն կարող է հնացած հնչել:

* * *

Այն օրը, երբ ինձ արգելեցին կինեմատոգրաֆիստ լինել, ես դարձա նկարիչ:

* * *

Բանտից 800 նկար և 100 պատմվածք բերեցի: Կալանավայրից ազատվեցի այնպես, ինչպես ուրիշները Օբսֆորդն են ավարտում: Մի անգամ Անդրեյ Տարկովսկու հետ զրուցելիս ասացի. «Դու իմ մեծ բարեկամն ես, բայց քո արվեստում ինչ-որ բան պակաս է: Դու գոնե մի տարի պիտի բանտ նստես: Եթե զգացել ես, թե ինչ են խավարը, քաղցը, լվերը, չես կարող արևը, կյանքը այլ կերպ չընկալել»:

* * *

Նամակ որդուն՝ գրված բանտից
Թանկագին որդիս, Սուրեն

Մոտենում է 1975 թվականը: Ինչպե՞ս ես, ի՞նչ նորություններ կան: Առանց քեզ շատ եմ տխրում: Պյոտրի արած լուսանկարները, ցավոք, չեմ ստացել: Ինչպե՞ս ես հասցնում սովորել նկարել, գծագրել: Ծանրաբեռնվածությունը մեծ է: Տեսնենք՝ կղիմանա՞ս, թե՞ ոչ:

Թանկագին որդիս, չեմ նեղանում, որ ինձ չես գրում: Մի՛ շեղվիր, լարի՛ր ուժերդ և միտքդ, որպեսզի հասնես նպատակիդ: Քեզ կոլաժներ եմ ուղարկել, քանի որ ոչինչ չէի կարող նվիրել: Դաժան պայմաններում եմ գտնվում: Ուշադիր նայիր կոլաժներին, դրանցում ես արտահայտել եմ այն ամենը, ինչ զգում եմ քո հանդեպ: Շարքը կոչել եմ «Լույս ու ստվեր»: Լավ պահիր դրանք: Տոնածառ ունենալո՞ւ ես, թե՞ արդեն մեծ ես ու չես ունենա: Շատ եմ սիրում քեզ ու շատ եմ կարոտում: Շատ լավ կլիներ, եթե դուք էքսկուրսիա գայիր Կիևյան բանտ: Շատ կուզեի, որ տեսնեիր «Թութանհամոնի դամբարանը»: Մայրիկն ինձ ուղարկել է մի հետաքրքիր կատալոգ, բայց լավ կլիներ, եթե դա քեզ մոտ լիներ: Ցավում եմ, որ չկարողացանք միասին գնալ Լենինգրադ: Այնքան եմ ափսոսում, լացս գալիս է:

Համբուրում եմ:

Բարևի՛ր բոլորին:

Պահպանի՛ր քեզ, դա գլխավորն է:

Եվ բարի եղի՛ր:

25.12.1974 թ.

Գուրնիկ

* * *

Դեռ ողջ եմ: Փոշուց եմ միայն շնչահեղձ լինում... Շունչս կտրվում է, ու նեղսրտում եմ, որ չգտա մարդու փնտրած գեղեցիկի խորհուրդն ու իսկությունը: Եվ իբրև արձագանք այդ նգովքի ու դառնության՝ ցրվում է փոշին, և նշմարվում են գերեզմանատան տավիղները. ճիշտ և ճիշտ իմ փնտրածը: Ես նույնպես կարող եմ մեռնել երիցս, առանց գոշումի ու... մեռնում եմ: Սի՞թե մեռնում եմ: Դա չէ կարևորը... Ես մեռնելով ժպտում եմ: Երջանիկ եմ, որ խաբեցի ինքս ինձ...

* * *

Ոչ մի գրական պատկեր զգայական նյութ չէ: Քեզ չեն հասնում խոտի տամկությունը, բորբոսի հոտը անտառում... Դեռ բերանիս է այն ջրի համը, որ քչքչալով հորդում էր սոճու արմատների տակից: Ամեն կումն անելիս սոճու փշերը ծակծկում էին շուրթերս... Լեռները, որ առաջ տեսնում էի կարծես հորիզոնին մի գեղեցիկ ու սառնաշունչ «ընդհանուր պլանով», հանկարծ հայտնվեցին իրենց ամբողջ նախաստեղծ մերձությանը... Սպիտակ ոչխարները դուրս են գալիս կարմիր թփուտներից թավուտի լի և սև հապալասով: Անտառապատ բլրալանջերին կգտնես մոռացված զանգեր, փամփուշտի պարկուճներ, վառ փետուրներ, տեսակ-տեսակ հետքեր: Լեռների խոնավ բնահողին հետքերը երկար են մնում:

* * *

Արվեստագետը պետք է իմանա, թե երբ է մահանալու:

* * *

Այսօր ես համարում եմ, որ կինոն պետք է լինի «սկզբունքի արվեստ»:

* * *

Ցավոք սրտի, ես չհասցրի անել այն ամենի մեկ հարյուրերորդական մասնիկն անգամ, ինչ որ ծրագրել էի իրագործել...

* * *

Ես ինձ համար չեմ ողբում: Դաժան ճշմարտությունը խփում է իմ գործընկերներին՝ նկարիչ-կինեմատոգրաֆիստներին: Այս իմաստով Հայաստանն առաջին տեղում է: Այն մարդը, ով կարծիք է հայտնել իմ «Նռան գույն» ֆիլմի մասին, մշակույթի գծով կենտկոմի քարտուղարներից մեկն էր: Նախկինում հավաքարար է եղել և դեկավար աշխատանքի է նշանակվել որոշակի տաղանդի շնորհիվ: Նայելով ֆիլմը՝ նա ասաց, որ զարմանալի ֆիլմ է, բայց նրանում անչափ շատ է մաստիկան: Երկար ժամանակ փորձում էի պարզել, թե ինչու մաստիկա: Հետո նրա թարգմանիչները, որ ողջ ժամանակ ուղեկցում էին նրան և խմբագրում խոսքը, ինձ ասացին, որ նա նկատի ունի միստիկան...

* * *

Ցավում եմ, որ հայ ռեժիսորների հանդեպ պատշաճ ուշադրություն չկա: Քանի-քանիսը թռչունի պես անցան կամ... քաղվեցին... Հիշենք թեկուզ Համո Բեկնազարյանին: Անտարբերություն կար և իմ հանդեպ տասնհինգ տարի-ներ ի վեր: Սա ոչ ոք, ոչ մի սերունդ չի ների:

* * *

Հայերը հիմա ինձ ֆիլմ նկարելու հնարավորություն չեն տալիս, բայց երբ մեռնեմ, շքեղ թաղում եմ կազմակերպելու...

* * *

Վերջին ընթրիք... անձայն ներս են գալիս երեք տղամարդ՝ սև դրապե կե-պիներով և շագանակագույն ճարպոտ կոստյումներով: Տղամարդիկ առանց հրավերի վերցնում են օղիով լեցուն երեք թեյի բաժակ ու պատրաստվում կենաց ասելու... Ինչպե՞ս տարբերել նրանց: Գուցե ձեռքի ավերո՞վ: Մեկի-նը երկնագույն է, մյուսինը՝ ճերմակ, երրորդինը՝ արծաթագույն: Եվ երեքն էլ էմալաներկ իրենց թաթերով երկարում են դեպի ինձ օդու բաժակները, իսկ ես օդու դատարկ շշով զարկում եմ նրանց բաժակներին և ստիպված ոտքի կանգնում, որ լսեմ իրենց... Ովքե՞ր են սրանք: Որտեղի՞ց են եկել ներկված թաթերով այս մարդիկ: Գուցե եկել են իմ հետևից: Այո՛, իմ հետևի՞ց, ես գլխի եմ ընկնում... Սրանք գերեզմանափորներ են...

* * *

Բոլորը գիտեն, որ ես երեք հայրենիք ունեմ: Ծնվել եմ Վրաստանում, աշ-խատել Ուկրաինայում և պատրաստվում եմ մեռնել Հայաստանում:

* * *

Մեր հարազատ Թբիլիսին՝ նախկին Թիֆլիսը, տարբերվում է ուրիշ քա-ղաքներից նաև իր նախապաշարումներով: Եթե հավը կանչում է աքլորի նման, մահվան բոթ է: Եթե ձմռանը իր սպիտակությամբ ծաղկում է բալենին, դարձյալ մահվան բոթ է...

* * *

Հռչակավոր դերասանուհի Նաթա Վաչնաձեն⁷⁸ հայտնի է: Ծնունդով Թե-լավ քաղաքից է: Ահա նրա հայ ծնողների նկարները: Ահա և նրա հայ տա-տի ու պապի նկարները: Այս բոլոր փաստաթղթերը Թելավիի արխիվներից եմ գողացել: Այս բոլորը ես վրացիներին ցույց եմ տվել: Չարմանում եմ, չեն

⁷⁸ Նատալյա Վաչնաձեն Վրացական ԽՍՀ ժողովրդական արտիստուհի էր, խաղացել է բազում ֆիլմերում: Նրան հայտնաբերել և իր առաջին համր ֆիլմերում նկարահանել է Համո Բեկնազարյանը: 1941-ին արժանացել է Ստալինյան մրցանակի: Մահացել է 1953-ին (Ա. Փ.):

հավատում: Մենք միշտ ծառայել ենք վրացիներին: Բերիան սպանեց Նաթային...

* * *

Քանի՜-քանի՜ ազգութաց հայեր վրացացել են, ի՜նչ նշանավոր դեմքեր են դարձել վրացական մշակութային կյանքում:

* * *

Մանկությունս...

Ինչպիսի՞ն էր, ինչո՞ւ այդպես կարճ տևեց:

Եվ ինչո՞ւ եմ ես կշտամբում դրա համար բոլորին, անգամ մեջեջյալներին:

* * *

Իմ կենսագրությունը... Ես այնքան էլ լավ չեմ հիշում իմ կենսագրությունը: Դարդ՝ ահա նրա հավերժական ձևը:

* * *

Երբ որևէ ներկայացումից կամ հանդեսից մերոնք տուն էին գալիս, մայրս հանում էր կեղծ աղամանդե խոշոր զարդերը, հագնում տնային զգեստը, զարդարվում «չար աչքից» հեռու պահած տոհմական ականջօղերով ու ակնեղենով: Հայրս փակում էր պատուհանի փեղկերը, վառում սեղանատան մեծ լուսամփոփը, նայում մայրիկիս ու գինի խմում...

Անգին քարերը փայփում էին, արտացոլվում հայելու մեջ: Մայրիկս հագնում էր ծովաշան մորթու մուշտակը, ձեռքն առնում սադափե իր փոքրիկ հեռադիտակը և ծիծաղում, ջուր կտրում ծիծաղից՝ մերթ ընդ մերթ ականջ դնելով դրսից լավող ձայներին:

Այդ տարիներին ամենուր ձերբակալություններ ու խուզարկություններ էին կատարվում...

* * *

1926-ին հորս գնած ֆրանսիական թանկարժեք մուշտակը մայրս երկու անգամ հագավ: Մի անգամ, երբ սովորականից շատ ձյուն էր եկել Թիֆլիսում, և հաջորդ անգամ, երբ հորս էինք հողին հանձնում:

Իսկ մնացած ժամանակներում այդ մուշտակը մերոնք շարունակ թաքցնում էին հարևանների մոտ՝ զգուշանալով խուզարկություններից...

* * *

Տան փոշոտ պատուհանի ասեղնագործ վարագույրի ետևից նայում էր Վերան՝ դերձակի կրտսեր դուստրը: Նրան արդեն քանիցս տարել էին Աբասթուման՝ բուժվելու: Դպրոցում հազվադեպ էր լինում: Բարձրահասակ ու սիրուն աղջիկ էր: Եվ երբ ցածրակրունկ լաքած կոշիկներով ու մեջքին զգած պայուսակով տանից դուրս էր գալիս, Անիչկա մորաքրոջ աչքերը ջուր էին

կտրում՝ նրա ետևից նայելով: Դասարանում Վերան նստում էր միայնակ վերջին շարքում: Մազերի սև ռիպսի (*ռիպսը* ֆրանսերեն բառ է և նշանակում է «կտոր», որ գործածվում է իբրև պաստառ, վարագույր – Ա. Փ.) ժապավենն ընդգծում էր դեմքի դալկությունն ու գեղեցկությունը:

* * *

12 տարեկան էի, երբ ծանր հիվանդացա: Մայրս տրամադրությունս բարձրացնելու համար պատմում էր գունագեղ հեքիաթներ: Ահա այդ ժամանակ մորիցս լսեցի «Աշուղ Դարիբ» հեքիաթը:

* * *

Ծննդյանս օրվա կապակցությամբ հարևաններս մեր բակի յոթ տարեկան մի տղայի խնդրել էին, որ տորթ բերի ինձ: Տորթը վերցրի այդ տղայի ձեռքից: Լավ գիտեմ այդ տղային: Շատերը կարծում էին, որ նա յոթ-ութ տարեկան է: Այդքան էլ երևում էր: Բայց ես գիտեմ ողջ պատմությունը: Անտեր, որք տղա էր: Իրականում նա 22 տարեկան էր: Դեռ փոքրուց նրան հատուկ դեղահաբեր են տվել, որ չաճի, մնա փոքրամարմին: Ո՞րն էր այդ ճիվաղների նպատակը: Այդ փոքրիկին տան լուսամուտիկից ներս էին մտցնում: Խեղդում էր տունը հսկող շանը և գողերի առաջ բացում տան դուռը:

* * *

Նախանձեցի գեղեցիկներին, դարձա հրաշագեղ, նախանձեցի տաղանդավորներին, հանճարեղ դարձա:

* * *

Անջեյ Վայդան, դիմելով ինձ, գրում է. «Մաեստրո՛, Դուք ուսուցիչ եք»: Ես ցնցված եմ Վայդայի արվեստից և կյանքում երբեք չեմ մտածել, որ կարող եմ լինել նրա ուսուցիչը: Այնպես, ինչպես իմ ուսուցիչն եմ համարում բոլորովին երիտասարդ և համոզիչ ռեժիսոր Տարկովսկուն, ով մույնպես հասկացված չէ: Նա որքան հանճարեղ է «Իվանի մանկությունը» ֆիլմում և ինչպիսի ժառանգություն է ստեղծել, որպեսզի իրեն թալանեն, կրկնեն...

* * *

Ես միշտ հակված եմ եղել գեղանկարչության կողմը և արդեն վաղուց եմ հաշտվել այն մտքի հետ, որ կադրն ընկալում եմ իբրև գեղանկարչական կտավ: Գիտեմ՝ իմ ռեժիսուրան դրսևորվում է գեղանկարչության միջոցով, և դա երևի նրա առաջին թուլությունն է ու առաջին ուժը: Նկարահանելիս ես ավելի ու ավելի հաճախ դիմում եմ գեղանկարչական, քան թե գրական լուծումների: Եվ, իմ կարծիքով, ամենամատչելին այն գրականությունն է, որն իր էությամբ կերպարանափոխված գեղանկարչություն է:

* * *

Մենք ֆիլմեր ենք նկարում ամենքին հասկանալի կրքերի մասին և փորձում այդ կրքերը ներդնել խոսքերի, երաժշտության, ամեն մի շոշափելի բանի և, իհարկե, գույնի մեջ: Հենց այստեղ է, որ ես իրոր հենվում եմ գեղանկարչության վրա, որովհետև գեղանկարչությունը վաղուց և այն էլ կատարելապես յուրացրել է գույնի դրամատուրգիան, նրա յուրահատկությունների ամբողջականությունը, արտահայտչական հնարավորությունները: Ինձ թվում է, որ գույնից հրաժարվելն այսօր նույնն է, թե ընդունես սեփական թուլությունը: Ուղղակի անգունությունը որոշ իմաստով նշանակում է նաև փոխաբերական անգունություն: Մենք այսօր պետք է դասեր քաղենք այնպիսի վարպետներից, ինչպիսիք են Բրեյգելը, Արխիպովը, Նեստերովը:

* * *

Իմ ֆիլմերը կրքերի կարողիտգրամաներ են: Կինոն ոչ այլ ինչ է, քան կիրք:

* * *

Կինոյում իմ ուսուցիչը Իգոր Սավչենկոն է: Նա վախճանվեց 44 տարեկանում: Ավելի ճիշտ կլինի ասել՝ նրան սպանեցին: Սավչենկոն ինձ համարում էր իր ամենատաղանդավոր աշակերտը: Մահվանից առաջ նա պատվիրել էր, որ ինձ լավ նայեն...

* * *

Կինեմատոգրաֆը նուրբ, զարմանալի նուրբ արվեստ է՝ զարմանալի կուսական և զարմանալի առնական ու չափազանց բարդ: Ուստի իսկական ռեժիսորին կարելի է, նույնիսկ անհրաժեշտ է փայփայել, շոյել: Լավ ռեժիսորը, որին շոյում են, սատարում, շատ ավելի լավ ֆիլմ է անում: Իսկ եթե հալածվում է...

* * *

Ռեալիզմը շատ հզոր գենը է: Սակայն այն պետք է կիրառել կարողանալ:

* * *

Ես կարծում եմ, որ եթե 40 տարեկանում քեզ չեն վստահում որպես ստեղծագործողի, ապա այնտեղ՝ այն աշխարհում էլ չեն վստահի: Հաստատ այդպես է:

* * *

Այսօր ո՞ւմ է հետաքրքրում Տոլստոյի «Պատերազմ և խաղաղությունը»: Հավանաբար այն հանրապետություններին, նրանց՝ ուզբեկներին, թուրքմեններին, որոնք դեռևս չունեն «Պատերազմ և խաղաղության» թարգմանությունը: Ահա նրանք էլ հավանաբար նայում են այս ֆիլմը, ուսումնասիրում միջնակարգ դպրոցում:

* * *

Սերգեյ Իոսիֆովիչ Յուսկևիչը ինձ ասում է. «Տարօրինակ էր ձեր կաթողիկոսի մահը «Նռան գույնը» ֆիլմում: Կաթողիկոսը մահացել է, իսկ նրա աչքերը բաց են, և նա շնչում է: Ահա թե երբ են ամպերը երգում, երբ կաթողիկոսն անմահ է»: Նա բառացիորեն է ընդունում մահը: Նշանակում է՝ պետք է փակել աչքերը և ծնոտը կապել:

* * *

Ինչո՞ւ եմ ես նույն սիրում: Դե՛, հենց այն բանի համար, որ այն բնության երբևէ ստեղծած բոլոր պտուղներից ամենամերդաշունակն է: Այն իր մեջ զուգակցում է միասնությունն ու բազմազանությունը: Ծեղքելով այն՝ դուք տեսնում եք հատիկը հատիկին զուգորդելու նրբագեղությունը: Ընդ որում՝ յուրաքանչյուր հատիկ առանձին կյանք է բովանդակում: Հանրագումարում նրանց զուգակցումը խենթանալիորեն գեղեցիկ է: Նուրբ հասել է մեզ՝ պահպանելով իր անտիկ գեղեցկությունը, առանց Միչուրինի մասնակցության: Կար մեկը... Միչուրին: Նա ձմերուկից դդում էր սարքում, իսկ դդումից՝ խաղող: Նա ասում էր. «Պետք չէ բնությունից ողորմածություն սպասել: Պետք է այն վերցնել»: Սենք ամենքս վերցրինք, վերցրինք... և ահա թե ինչ ունենք այսօր:

* * *

Նռան մեջ սուտ չկա, յուրաքանչյուր հատիկ լցված է կյանքով:

* * *

1915 թվականին՝ Մեծ եղեռնի ժամանակ, Մարտիրոս Սարյանը ծաղիկներ էր նկարում՝ իբրև սիրո խորհրդանշան: Ես՝ հայ կինոռեժիսորս, այստեղ՝ Ադրբեջանում, 1988 թվականին սիրո մասին «Աշուղ Ղարիբն» եմ նկարահանում:

* * *

Զինվորական սաղավարտն իմ աչքում իմաստ էր ձեռք բերում, երբ տեսնում էի, թե ինչպես են նրա մեջ ծաղիկներ աճեցնում...

* * *

Բանտում ինձ սկսեցին հարգել, հենց որ մամակներ եկան Նիկոլինից, Վիտցկուց, Ալլա Պուգաչովայից, Ալլա Դեմիդովայից՝ իրենց լուսանկարներով:

* * *

Կալանավայրում թեյը խմում էինք ուր-տասը կտոր շաքարով: Ամբողջ օրը պահում էր: Պիտի այնտեղ լինեք, որ իմանաք՝ ինչ է կյանքը: Դա ուրիշ կյանք է՝ առանց Հեգելի ու Արիստոտելի: Բայց ռեժիսորին պետք է դա: Ես Տարկովսկուն գրել եմ. «Դու պիտի մի որոշ ժամանակ բանտում մստես»:

* * *

Խորհրդային բանտում շրջապատված էի շուրջ 3000 կալանավորներով, ովքեր, կարող եմ ասել, բոլորն էլ գալիս էին ինձ մոտ՝ խոստովանվելու: Դա ինձ համար խոշոր հաղթանակ էր: Նրանց սովորեցնում էի, թե ինչ է արվեստը, այն մասին, թե ինչպես կարելի է գծագրել թղթի վրա, այլ ոչ թե կրծքերի: Բանտում գրած իմ սցենարների մի մասը՝ թվով յոթ, ամփոփվեց մի գրքույկում, որը կոչվում է «Ոջիլները լքում են մարմինը»: Չէ՞ որ բանտում հանցագործի մահը հաստատում են, երբ ոջիլները լքում են նրա մարմինը:

* * *

Սաբուրթալոյի քամիները... Դրանք ոչ միայն գլխարկներ են թոցնում, այլև վերականգնում մոռացվածը: Ահա, խնդրեմ, Մետեխի բանտի երկարուկ միջանցքը և տեսակցությունը դատապարտված հորս հետ: Երկաթացանցի այն կողմում կանգնած է նա, ում ես կշտամբում էի:

Բայց ինչո՞ւ, ինչի՞ համար...

* * *

Նյու Յորքում ինձ հարցրին՝ ով է այդ Դոդոն: Ես Լինկոլնի անվան կենտրոնի բեմից լեփ-լեցուն դահլիճին հայտնեցի հետևյալը. «Դոդո Աբաշիձեի մայրը մահվան շեմին դիմեց ինձ և ասաց, որ ես՝ իբրև իր որդու ավագ ընկերն ու նրանից առավել աչքաբացը, եղբոր պես պիտի հովանավորեմ իրեն մինչև մահ: Եվ ահա ես էլ, քանի դեռ ողջ եմ, կատարում եմ այդ պատվիրանը: Մանավանդ որ Դոդո Աբաշիձեն իր հերթին շատ էր օգնել ինձ «Սուրամի ամրոցը» նկարահանելիս՝ գրահամեքենայի պես իմ առջևից ընթանալով և ամեն պատվար ու խոչընդոտ խորտակելով:

* * *

Ո՞ր եմ անհետացել Ամետյան քարե խաչերն ու թախծոտ հրեշտակները, որ ի հավերժ հիշատակ խոնարհված էին իմ նախնիների շիրիմներին: Նրանք առհավետ մնացին քաղաքի խուլ գերեզմանատներում, որոնց մասին հիշատակում են բռնության կամ գողության հետ կապված դեպքերում, որ տեղի են ունենում նրանց տարածքում, կամ էլ տխրում են մեկ օրով, մինչև քաղաքից կհասնի հրահանգը առ այն, որ գերեզմանատունը վերափոխվում է... հանգստի վայրի և զբոսայգու: Իսկ արժեքավոր գերեզմանաքարերով երեսապատում են քաղաքի մայթերը, փողոցները, ցանկապատերը:

* * *

Նորից Կիևում եմ: Շագանակենիների պղնձագույն տերևները ոտքերիս տակ էլ չեն խշխշում տաղտուկ ու ձանձրալի, ինչպես մի ժամանակ: Մանր անձրև է մաղում:

Հոգիս ալեկոծ՝ թափառում եմ դատարկ գազամանոցի թաց ծառուղիներում:

Թերևս այդ ես ու դու ենք մեղավոր, որ նրա բնակիչները մութացկան դարձան:

Նրանք, մետաղյա ճաղերին սեղմված, հայացքով ինձ ճանապարհում են հուսալով ինչ-որ բան ստանալ, իսկ ես ոչինչ չունեմ նրանց տալու...

Վանդակներից մեկի մոտ, չգիտես ինչու, աղմկալից ու մարդաշատ էր:

Կանգնեցի:

Գետածին՝ խելագար գետածին, ճաղերի ետևում անում էր այն, ինչը որ չէր կարողացել անել երկու տարի առաջ կրկեսի խաղահրապարակում:

* * *

Մաղամ Ժերմեն... Ծնվել է Ֆրանսիայի հարավում: Այժմ նա իննսուն տարեկան է:

Սոցիալական ի՞նչ փլուզումներ տեղի ունեցան այդ իննսուն տարվա ընթացքում, որոնց հետևանքով մաղամ Ժերմենն ու իր քույրը, մանուկ հասկում Կիսլովոդսկի առողջարաններից մեկում ապաքինվելով, չկարողացան վերադառնալ հայրենի Թուլուզ: Եվ ինչպե՞ս դրանք դրդեցին, որ մաղամ Ժերմենի հայրական ժառանգության արժեքնուշները դառնային ուրիշների սեփականություն. հյուսիսային ճենապակին, դեֆյան հախճապակին, հովհարները, ժանյակները, մարգարիտները, ֆաբերժեի սպասքները հայտնվեցին վարսավիրների, ատամնաբույժների, արտելավորների, ակադեմիկոսների, կինոռեժիսորների և սոսկ կոմիսիոներների անձնական հավաքածուներում: «Օնորեյի սխալը» ֆիլմին, օրինակ, նա անհատույց տրամադրեց «Տիտանիկ» շոգենավին տարեկից իր տոհմական սնդուկների պարունակությունը, թեկուզ վաղեմացած բոլոր այն ցիլինդրները, ցեցահան եղած ֆրակներն ու սյուրտուկները, տյուլե սփռոցներն ու ջահերը, որ պիտի հավատարժան դարձնեին Բալզակին նվիրված ֆիլմի հերոսների տարազն ու կերպարները:

* * *

Ես չեմ կարողացել Ֆելինիի մասին գիրքը, ինչ-որ չեմ ուզում կարդալ, թե նա ինչ է մտածում, ինչ է ասում: Ես այնքան եմ ցնցված նրա մտածողությամբ: Ես մտածողությամբ հարազատանում եմ նրան: Բայց իմ մանկությունը ավելի ուժեղ է նրանից: Պետք է տեսնել իմ տունը: Դա զարմանալի տուն է: Պետք է տեսնել իմ մորը: Այսօր, 73 տարեկան, նա արտիստիկ է...

* * *

Այս թիկնոցը ես կարել եմ բանտում Ֆեդերիկո Ֆելինիի համար: Հույս ունեմ՝ օրերից մի օր այս երկիրը ինձ թույլ կտա հանդիպելու նրան և նվերը հանձնելու:

* * *

Ամերիկյան այսօրվա կինեմատոգրաֆը զվարճալից և գիզանտից այն կողմ չի անցնում (իմ տպավորությամբ), նա չի կարող ստեղծել վառ

հոգեբանական մտածելակերպ: Այդ անում են Ֆրանսիան, Իտալիան, Անգլիան...

* * *

Կինեմատոգրաֆը բռնկումների արվեստ է, յուրահատուկ էքստազ: Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետը»... Ոչ որ չէր կարող լսել Ռոմեոյի տառապանքը: Բոլորի մեջ հակակրանքն էր խոսում: Մեռավ հանճարը...

* * *

Արվեստն անբացատրելի է. հոգու աշխատանքն ինպե՞ս բացատրել:

* * *

Կարողացե՛ք ստեղծել տոնախմբություններ: Մի՛ սպասեք, որ այն անեն ուրիշները:

* * *

Իմ նշանավոր «Մոռացված նախնիների ստվերները» հարկ չհամարեցի ռուսերենով կրկնօրինակել: Ինձ համարեցին ազգայնամոլ: «Աշուղ Ղարիբը» կրկնօրինակեցի ադրբեջաներեն: Այս անգամ էլ հորջորջվեցի ազգայնամոլ:

* * *

Եթե տվյալ տեսարանը, երկու դրվագների հնարավոր պլաստիկ շաղկապումը չտեսնեմ երազում, ընդհանրապես ձեռնամուխ չեմ լինի սցենարը գրելուն: Ես համակարգիչի եմ մնան: Ամբարում եմ թեմային վերաբերող տեղեկատվությունը: Եթե, օրինակ, այսօր պետք է ինչ-որ տեսարան պատկերացնեմ, շուռ եմ գալիս ու... քնում: Առավոտյան արդեն կարող եմ գրել: Վերջին ժամանակներս ավելորդ ժամանակ քիչ եմ ունենում և որևէ բան գրելու համար ինձ անհրաժեշտ է ցերեկը գոնե կարճ ժամանակով ննջել: Գուցե դա իսկական քուն չէ: Բայց ամեն դեպքում մաս խաբկանք չէ: Դժբախտաբար, այն բոլոր տեսարանները, որ պատվիրում եմ ինքս ինձ, հայտնվում են սև-սպիտակ գույներով:

* * *

Ինձ համար դժվար է բացատրել, թե ինչպես են հղանում գույներն իմ ֆիլմերում: Դա ավելի շատ կարծես հուզական հիմք ունի: Պայմանավորված է կոնկրետ գաղափարով, որն ինձ գրավում է, հուշերով, որոնք հետապնդում են ինձ: Կարծում եմ՝ այս պահին մենք կինոյի զարգացման այն շրջանում ենք, երբ գունավոր պատկերը կարող է ընկալվել իբրև սև-սպիտակ: Ես, օրինակ, ձգտում եմ հենց այդ եղանակով համադրել գույները, որպեսզի դրանք սև-սպիտակ պատկերներ թվան: Բայց, մյուս կողմից, սա էլ է հնարավոր այնպես հրամցնել, որ գունավոր կինոյի ազդեցություն գործի: Չեզ չի՞ թվում, թե Պիկասոյի, Դյուրերի, Պիեռո Դելլա Ֆրանչեսկայի չքնաղ փորագրություն-

ները և հատկապես Պիրանեզիի Հռոմի ավերակները ասես գունավոր լինեն: Գույներն ընկալվում են ոչ թե որպես շարան, այլ իբրև պաթոլոգիա: Խոսքն ինչ-որ ախտաբանության մասին չէ, այլ լիովին ուրիշ բանի, որը բացակայում է մեր ֆիլմերում: Դա պաթոլոգիա չէ բառի բուն իմաստով, ո՛չ սեռական շեղում է, ո՛չ էլ հոգեկան հիվանդի խանգարում: Դա անբացատրելի բան է, ինչպես անբացատրելի է որևէ քաղաքի ճարտարապետությունը: Օրինակ՝ Ռոտերդամը պաթոլոգիա է՝ հնի և նորի իր ապշեցուցիչ համակցությամբ:

* * *

Մի անգամ՝ 1981-ին, լսարաններից մեկում կատակով ասացի. «Ահա քանի տարի է, չեմ աշխատում, ու սովից չեմ մեռնում, քանի որ Հռոմի պապը ինձ աղամանդներ է ուղարկում: Ես էլ դրանք վաճառում և ապրում եմ»: Դաիլի՜ճում եղածները դա լուրջ ընդունեցին: Հետո որոտացին ծափահարությունները...

* * *

Կիևի իշխանները իրենց գահաթոռները պատրաստել են թանկարժեք փայտից: Նույն ձևով են վարվել նաև, ի դեպ, հայ թագավորները: Ոսկյա գահաթոռը իրոք որ շռայլություն է: Հիմա պատկերացնենք փղոսկրից պատրաստված գահաթոռ: Ահավոր է դա պատկերացնելն անգամ: Ինչպե՞ս կարող է դրա վրա նստած թագավորը իր երկիրը ղեկավարել: Չէ՞ որ այդ գահաթոռից միշտ լսելի կլինեն փղերի հառաչանքները...

* * *

Բանտի ղեկավարությունը կասկածել է, որ ես այդ դժոխքի մասին գրում եմ իմ օրագրում, որ հետո՝ ազատագրկվելուց հետո, հրապարակեմ: Որոշեցին վրեժ լուծել ինձանից: Այդ ժամանակ ես հավաքարար էի բանտում... Այդ ճիվաղները ջուր լցրին այն արտադրամասում, որի հավաքարարն էի ես: Մոտավորապես 60 սանտիմետր կլինե՞ր ջրի շերտի բարձրությունը: Իսկ արտադրամասի մակերեսը հավանաբար կլինե՞ր 500 քառակուսի մետր: Ես պարտավոր էի դուլերով ջուրը դուրս թափել այդտեղից: Եվ դա գիշերով՝ մինչև լույս, որպեսզի առավոտյան կալանավորները կարողանային աշխատել: Սկսեցի աշխատել: Ցուրտ էր, սառնամանիք... Ջուրը աստիճանաբար սառեց: Սապոգներով կիսասառած ջրի մեջ չգիտեի ինչ անել... Լինգով ջարդում էի սառույցը... Հենց այդ օրն էլ թոքերս շարքից դուրս եկան...

* * *

Ո՞վ է ռեժիսորը: Զարոգիչ է նա: Իր ֆիլմերով քարոզում է սերը...

* * *

Ամենասարսափելին այն է, որ քեզ գիշերով ոտքի են հանում: Դա նշանակում է, որ տանում են նոր գոնա...

* * *

Բանտի բժիշկներից մեկը՝ ծնունդով Արևմտյան Ուկրաինայից, հիացած էր իմ «Մոռացված նախնիների ստվերներ»-ով: Սակայն նա հիւ-հնազանդ ենթարկվում էր վերևից եկող հրահանգներին: Եվ այդ բժիշկը ինձ նիտրոգլիցերինի փոխարեն ներարկեց գիպսի նոսր լուծույթ...

* * *

Ինչո՞ւ Ֆեդերիկո Ֆելինին կարող է ազատ ու անկախ խոսել այն ամենի մասին, ինչը նրան հուզում է, անհանգստացնում է, իսկ ես՝ Փարաջանովս, զրկված եմ այդ իրավունքից...

* * *

Ես խուսափում եմ հարմարավետ կենցաղից: Չունեմ մագնիտոֆոն, մմա-նատիպ այլ սարքավորումներ: Չունեմ կապույտ վաննա: Ինչպես տեսնում եք, ոչինչ չունեմ: Խոհանոցումս միայն սովորական լազան կա...

* * *

Իմ նովելները ես ինքս եմ ձևավորում: Նկարում եմ, կոլաժային իմպրովիզացիաներ եմ անում չարչարանաց մասին: Երբ ես ինչ-որ պատմություն եմ պատմում, ասենք, դպրոցականին կամ ընկերներիցս մեկին, վերջում հարցնում եմ. «Դու ի՞նչ ես կարծում, դա իրո՞ք տեղի է ունեցել, թե՞ ես եմ հորինել»: Ամենից հաճախ պատասխանում եմ, որ դա հորինված պատմություն է, որ դա իմ հիվանդ երևակայությունն է, ֆանտազիա: Հետո ես ապացուցում եմ, որ դա կյանքն է: Բայց այդ կյանքին հավելվում են արվեստագետի աչքերն ու սիրտը, և դրանից այն զարմանալի է դառնում... Ջարմանալի...

Վերջերս մի երիտասարդ գրողի ես պատմեցի, որ տեսել եմ թզուկի թաղում: Թզուկը մահացել էր, և նրա վերջին կտակն այն էր, որ իրեն թաղեն մեծ դագաղում:

Ես ինչ-որ մի անգամ էլ մասնակցել էի մի թաղման, որտեղ թզուկները թաղում էին կրկեսում ելույթ ունեցող մի գաճաճի: Նա մեծ սաքսաֆոն էր նվագում: Ես այդ գրողին հարցրի, թե ինչ է նա կարծում, արդյոք այդ պատմությունը հորինված է: Նա ասաց. «Դա, իհարկե, հորինված պատմություն է»: «Ո՛չ», - պատասխանեցի ես, - դա իրոք եղել է: Դա պատահել է իրականության մեջ: Դա իրականությունն է այն կրքոտ տենչի, որ մյուս աշխարհում մեծ աճի:

* * *

Ինձ 63 տարեկանում առավոտյան արթնացնում էր կա՛մ պարտապանը, կա՛մ որևէ այլ՝ ինձ անպետք մարդ: Իսկ այսօր ինձ արթնացրեց քաղաքապետարանը: Խփում էին աշտարակի ժամացույցի զանգերը: Ես տեսա պատուհանը: Այն կուրացրեց ինձ: Ես մտածեցի՝ այդ ինչ է այնտեղ կատարվում, այդ ինչն էր այդպես խլթխլթում, տարուբերվում: Մի՞թե օվկիանոսը: Պարզվեց՝ ճայերն են: Նրանք չվել եկել էին պերճաշուք

«Հիլթոն» հոթելի մոտ ու ճշալով պտտվում էին իմ պատուհանի շուրջը: Բայց ճիչերը չէի լսում: Պատուհանները փակ էին: Ես տեսնում էի, թե ինչպես էին նրանք քերծում ապակին իրենց վարդագույն տոտիկներով, ընկնում ու վեր էին թռչում: Ինչ-որ բան էին պահանջում: Բյուր, հազարավոր ճայեր: Այս ի՞նչ միտիկա է: Ինչո՞ւ հենց իմ պատուհանի մոտ:

Ես լրիվ մոռացել էի: Չէ՞ որ դա պանիրն է, որ կախված է իմ պատուհանից: Չորս կիլոգրամ պանիրը չտեղավորվեց իմ մինի բարում, և ես այն պատուհանից դուրս կախեցի: Ես կովկասյան թանկ պանիր էի բերել՝ հյուրասիրելու: Թիֆլիսում բոլորն ինձ վրա ծիծաղում էին: Ասում էին՝ ռոտերդամցիներն ուրիշի պանիրը չեն ուտում: Նրանք հպարտանում են իրենցով: Բայց ճայերը քերծում էին պարկը, որով այն կախված էր: Մեր սովետական նեյլոնե պարկը՝ ամրակազմ, պինդ, օդ ներս չթողնող և ջուրը արձակող, դիմացավ: Այն ավելի ուժեղ գտնվեց, քան կապիտալիստական պարկերը: Թռչունները չկարողացան իրենց կտուցներով պատռել այն: Պարկը հաղթեց:

Իմ ճակատագրին հետևող հոլանդացիների համար, եթե մի քանի տարի անց Ռոտերդամում որևէ մեկը տեսնի ճայ, որը գրոհում է «Հիլթոն»-ի վեցերորդ հարկի պատուհանի վրա, կնշանակի՝ կա՛մ ես աղոթում եմ ձեզ համար, կա՛մ ես արդեն մահացել եմ:

* * *

Միակ ռեժիսորն եմ աշխարհում, որ երեք անգամ բանտարկված լինի և այն էլ չափազանց խիստ պայմաններում: Այդ ընթացքում գրել եմ 23 սցենար, որոնք չեմ կարող հրատարակել և չեմ էլ հավատում, թե կկարողանամ երբևիցե դրանք նկարահանել: Կբավարարվեմ, եթե ի վիճակի լինեմ թեկուզ երկու ֆիլմ ևս նկարահանելու: Եվ եթե, իրոք, խորին սեր չունենայի արվեստի, իմ երկրի նկատմամբ, ինչպես ունենում եմ Քրիստոսի նման մի կուռքի հանդեպ, ինչպե՞ս կկարողանայի ինձ վերագտնել մեկուսացման այդ երեք ժամանակահատվածից հետո:

* * *

Ոմանք շուտ, ոմանք ավելի ուշ, իսկ ես արդեն վաղուց ցնդել եմ՝ ժողովրդական խեցեգործությամբ հափշտակված:

Ինձ կլանում է միայն Օպոշնյան (բնակավայր Ուկրաինայում, հայտնի է իր խեցեգործական արվեստով – Ա. Փ.) և իր հանրահայտ կավը: Տասնյակ հազարավոր իրերից ընտրում եմ ժողովրդական վարպետների գլուխգործոցները: Հրապուրում են առանձնապես Պոշիվայլոն և Կարյաչոկը: Դրանք ժանրային տեսարաններ են, ֆեերիաներ...

Երեկոյան գրավում է բնանկարը... Դիտում եմ Օպոշնյայի բլրակի վրայի եկեղեցին: Դա Ռոմանովների վերջին ժամանակների կլասիցիզմի փայտյա հնգագնդեք կառույց է: Հայրենական պատերազմում հրետանու արկը վայր էր գցել անկյունային գմբեթը, ինչով էլ խախտել էր համաչափությունը և եկեղեցուն ինչ-որ տազնապ էր հաղորդել:

Եկեղեցին գործող է: Վանականը, պարզվեց, անցյալում Կարմիր բանակի սպա է եղել: Հրաժեշտ տալիս նա խաչակնքեց ինձ... ձախ ձեռքով: Աջը անդամահատվել էր 1943 թվականին բուժսանձրատում՝ Ստալինգրադի (այժմ՝ Վոլգոգրադ) մատույցներում:

* * *

1938 թվականին VI^ր դասարանում ինը աշակերտ մատեցին նույն օրը: Բոլորն իրար կողքի նստարաններին: Հետո եկավ դպրոցի տնօրենությունը և տեղավորեց աշակերտներին՝ ըստ իր հայեցողության: Չորս տարի անց մեզ տեղադրեցին ավարտական լուսանկարներում: Այսպիսով մենք 36-ն էինք:

Հետո ինչ-որ մեկն ասաց, որ 36-րդը դավաճան է... Եվ ես՝ կոմերիտական, խնամքով մանուշակագույն քառակուսով ջնջեցի նրան լուսանկարից...

Շատ տարիներ անց... ես դեգերում եմ հարազատ քաղաքով՝ բոլորին անճանաչ, ոչ մեկին չճանաչելով... Բայց ինչ-որ մեկը կտրուկ կանգ է առնում, ամաչելով հայացքով ինձ է ուղեկցում... Եվ վերջ...

Եվ միայն մեկ տարի անց թանաքե քառակուսին ջնջվում է, և ինձ է նայում մանկությանս ընկերը... Բայց նայում է ոչ թե ինձ, այլ ապարատին...

* * *

Ջագսի վարիչը մատնահատվածի լայնության նշանդրերի մատանիով լրացնում էր ընկերներիս ամուսնության փաստաթղթերը...

Ես սպասում էի արարողության վերջին... Շնչով ջերմացած՝ դռան ետևում թխկթխկում էր զագսի կնիքը... Շրշում էր պետական թուղթը, իսկ ես նայում էի պատուհանից, պատշգամբն աղոտտել էին աղավմիները... Կրծքիս վրա նշանդրերի երկու մատանիներ էին, որ ծոցագրպանումս էին դրել նորապսակները...

Ես ոչ մի բանի մասին չէի մտածում և ոչ մեկին չէի նախանձում... Իմ առջև հայտնվում էր Նոտր-Դամ-դը-Պարին Մոնեի կտավից: Բայց փոշեկուլի ձայները վերադարձնում էին ինձ պատշգամբ: Թվում էր, թե հիմա-հիմա բորշի հոտ կընկնի...

Ես սրտիս վրա շոշափեցի ուրիշի մատանիները... Մեկը... Երկրորդը չկար... Ես նորից ստուգեցի: Մեկն է, և միայն մեկը: Ես փնտրում էի գորգի վրա: Թոթվում էի վրայիս շորերը: Մատանին չկար: Ես մեղավոր նայում էի արդեն ամուսնացածներին և նրանց երկաթեցի... իմ մատանին:

Մատանին շրխկաց, և փոքրը մեծի միջից դուրս ընկավ: Գվվացող փոշեկուլով հավաքարարուհին հավատացնում էր մեզ, որ դա երջանկության նշան է...

Նրան տուփից կոնֆետներ էին հյուրասիրում, որի ծածկի վրա պատկերված էր ծառս եղած կազակական զորքերի ընդհանուր հրամանատարը՝ հետմանը:

Ես հիշեցի այդ փոշեկուլի գվվոցն այն պատճառով, որ այսօր պատահա-

բար շրջանային թերթում հայտարարություն կարդացի նրանց բաժանութ-
յան մասին:

* * *

«Հրեշտակի թևերը» կոլաժի թևերից մեկն ինձ տվել է փառք, մեծություն
ու ճանաչում, իսկ մյուսը՝ նսեմացում, նվաստացում և արժանապատվության
ոտնահարում: Ահա այդ հրեշտակի թևերն են, որ խոնարհված են:

* * *

Խեղճ գնչուհի... Իր բախտը կորցրել է, ուրիշներինն է փորձում գտնել...

* * *

1965 թվականին Մոսկվայի Կարմիր հրապարակում ես գնում եմ դեպի
թնդանոթը... Այսօր այն շաքարապատ է... Եվ ինչ-որ մեկը թնդանոթի տակ
կորցրել է իր ձեռնոցը, և այն սևացել ու կարծրացել է... Եվ զանգն էլ է շաքա-
րապատ... Եվ թաղիքից պատրաստված նրա տաք ոտնամանները նույնպես
շաքարապատ են: Նրա աչքերը փակ են... Կրծքին՝ շինելի տակ, տրանզիս-
տորն է՝ կուրանտները աշտարակի և կրծքի վրա... Եկե՛ք իմ ետևից, եկե՛ք...

Ճերմակ ձյունամրրիկը՝ սև ասֆալտի վրայով վազող, մեկ սահելով, մեկ
պոկվելով նրա սևությունից, ինչ-որ մեկի ձեռնոցը Ցար-Պուշկայի տակ,
«Շաքարապատ լոռամրգին» ձեռքիս և եկեղեցիների նախշազարդը և ձյու-
նածածկ սոխեզլուխները: Կրեմլյան աշտարակի վրա և շինելի տակ կրծքին
թաքցրած տրանզիստորի խփող կուրանտները... Լսատեսողական տպավո-
րությունների գերսուր թանձրուկը փոխանցվում է ողջի և անշարժի, սևի և
սպիտակի, անսահման մեծի և անսահման փոքրի հարաբերակցությամբ:

Տափաստան: Դաշտ: Տոթակեզ օր: Ձիեր... Շատ ձիեր...

Մեկը խոտ է փրցնում, մյուսը հոգնել է ծամելուց և սահում կողից կող է
թավալվում... Երրորդը ալարկոտ հետևում է նրան: Անդորր, լռություն...

Ձին մոտքը ցցեց և լարված սևեռեց ինչ-որ մի կողմի վրա: Նրա ետևից
մյուսը, երրորդը... Ձին տեղից վեր թռավ...

Ռունգեր: Լայնացած ռունգեր: Եվ դարձյալ միևնույն լռությունն է, միայն
հեռվից լսվում է անիվների չխկչխկոցը:

Հանկարծ սմբակների հատու հարված փայտին և հովատակի խրխնջոց:
Չայնն արագ ահագնանում է և արձագանքի է վերածվում, բազմանում է...

Արձանների պես քարացած ձիերի կողքով, անիվներով համաչափ
թխկթխկացնելով, անցնում է հովատակներին տանող գնացքը:

Գնացքը շրջադարձին անհետանում է, և այդժամ ձիերը տեղից պոկվում
են և նետվում են նրա ետևից:

Կառամատույցը: Ուղևորները կառամատույցում: Նրանց կողքով ծիկրա-
կում են խրխնջացող, մոլեգին հովատակներով վազո՞նները:

Կառամատույց են նետվում փրփրակալած ձիերը...

Մարդկանց չդիպչելով՝ նրանք անցնում են մարդկանց արանքներով:

Կառամատույցը կտրուկ հատվում է:

Դրա ծայրին ասես մեխված կանգնել են ձիերը:

Իսկ գնացքը խրխնջացող հովատակներով վազոնները տանում ու տանում էր հեռու:

Բոտիչելլի, Լուկաս Կռամախ, Դոմենիկո Վենեցիանո:

Մազեր քամո տակ... Ոսկի ռապիդի վրա...

Նրանք սիրահարեցնում են ինձ, և ես կարոտում եմ նրանց...

...Հետո մազերը բարձիս վրա... Նրանք անաղմուկ հոսում են, ինչպես ավազները:

Նրանք խճճվում են, և իրենք էլ հենց ռապիդի վրա արձակվում են...

Նրանք շատ են, և բոլորը իմն են:

Հետո նրանք դավաճանորեն դանդաղ սահում և սողում են ինձանից հավետ:

Տաք տարի անց ես բերանումս մազ շոշափեցի:

Ես վեր եմ կենում: Դատարկ պատի վրա մեխ եմ փնտրում: Ես փրկում եմ մազը... Ես այնպես եմ վախենում նրան կորցնել:

Փաթաթում եմ... Փաթաթում եմ... Քնում եմ...

Առավոտ, մերկ պատը: Տնկված է ժանգոտած մեխը... Մերկ...

ՀՈՒՆ-ԴԱԿԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ ԶՈՒԳԱՐԱՆԸ

Երբ ինձ հարցնում են. «Ինչի՞ մասին ես երագում դու այս կյանքում», ես պատասխանում եմ. «Որ իմ տանը զուգարան լինի...»: Անձրևոտ օրերին իմ զուգարանի կտուրից կաթում է՝ չնայած առաստաղին արված թիթեղյա կարկատաններին, իսկ ձմռանը սառը քամին թափանցում է տախտակե պատերի բազում անցքերից: Իմ թիֆլիսյան բնակարանի զուգարանը բաց պատշգամբի ծայրին է: Անհարմարավետ, տախտակներով մեխված՝ այն երկար նիստի չի տրամադրում, երբ կարելի է երագել ինչ-որ գաղտնաթաթում բանի մասին և անջատվել աշխարհիկ ունայնությունից, օրինակ՝ սիրված օպերաներից արիաներ երգել (պատանության տարիներին դա իմ սիրած զբաղմունքն էր): Երբ ես երգում էի, տախտակե պատերից կախված պղնձե լազանները անդրադարձնում էին իմ «բեկկանտո»-ն: Նվագակցման պես մի բան էր ստացվում:

Հոլանդիայում մեզ բերեցին արքայական պալատ, որպեսզի ինձ փաստաթուղթ հանձնեն, որ ես, իսկապես, «21-րդ դարի մանեստրո» եմ: Երկայն սեղան էին գցել, սպասքով լցրել էին: Սերի ճենապակի և դելիյան հախճապակի: Նստում էին թագուհու մոտ, իսկ այն երկուսը, որոնց հանձնարարել էին հսկել ինձ, Մոսկվայից սկսած, այդպես էլ կանգնած էին իմ արքայի թիկնակի հետևում:

– Նստե՛ք,– ասացի,– ուտելիքը բոլորին կբավի:

Դրանք մույնիսկ աչքերը չթարթեցին: Իսկ իմ փորը հենց առաջին ճաշատեսակից հետո սկսեց դողալ: Մտածեցի՝ լավ պատճառ է ստուգելու համար, թե ինչպիսին են թագուհիների զուգարանները. մնա՞ն են իմին, թե՞

ոչ: Վեր թռա... Վազեցի, ուր որ ցույց տվին... Իսկ այն երկուսն իմ հետևից: Հարցնում եմ.

– Դուք ի՞նչ է, պատրաստվում եք հետույքս սրբելո՞ւ:

Խիղճները բավեց, մնացին շեմին: Մտնում եմ, իսկ այնտեղ վիթխարի մանուշակագույն դահլիճ... ամբողջովին մարմարից... և հայելապատ: Ամեն հայելու դիմաց լվացարանակոնքեր ու բացառիկ ձևերի միզարաններ՝ ջրի համար նախատեսված ոսկե բռնակներով և զանազան բուրավետ նյութերով... Թուղթը՝ բարակագույն, ամենամուրր հետույքների համար... Սրբիչները՝ պետանշաններով... Եվ կարևորն ի՞նչ է, տաք է: Եվ լուռ... Միայն ինչ-որ տեղ երաժշտություն է... ջութակներ... մեմուետներ... Մոցարտ...

Նստում եմ Նապոլեոնի ժամանակների ամենայուրօրինակ գուգարանակոնքի վրա:

Այնքան տաք է: Ջգում եմ, որ այն նույն ճենապակուց է, ինչից և թագուհու սեղանի սպասքը: Նստած եմ, շուրջբոլորս եմ նայում... Լրիվ մոռացել եմ, թե ինչի էի եկել... Տեսնեմ՝ կողքիս պատի վրա կոճակներ են, ինչ-որ անջատիչներ: Ամեն մեկի կողքին ինչ-որ բան է գրված: Բայց ես հոլանդերեն չեմ հասկանում:

Համենայն դեպս, սեղմեցի առաջինը, մտածեցի սուրճ կրերեն, ինչպես ինքնաթիռում: Իսկ այնտեղ ինչ-որ բան շխկաց ու դռռաց... Ինչ-որ պոմպ միացավ: Եվ այնքան հուժկու, որ ինձ ամբողջովին սկսեց ներքաշել նապոլեոնյան գուգարանակոնքի մեջ: Փորձում եմ պոկվել, ինչ-որ բանի հենվել: Ոտքերս սահում են մարմարի վրա: Ես արդեն ամբողջովին երկատվել եմ: Լավ է, փորս մեծ է, չանցավ: Ճշալն ամոթ է, չեմ ուզում պակականների առաջ այս տեսքով... Դե՛, մտածում եմ. «21-րդ դարի Փարաջանով: Բանտում չկարողացան քեզ փտեցնել, իսկ ինչ-որ արքայական գուգարանակոնքում քաքի մեջ կխեղդվես: Դե՛, չէ ու չէ... Ողջ ուժով ձգվում եմ դեպի երկրորդ կոճակը... Ինչ-որ հակառակ մի բան աշխատեց... Մյունխաուզենի ռմբագնդի պես կոնքից դուրս թռա, ճակատով դուռը բացեցի... Ձեռքերս զբաղված էին. շավարս էի պահել, չէի հասցրել բարձրացնել... Մերկ հետույքով թռչում եմ պահնորդների մոտով, կանգնել չեմ կարողանում. նրանց հատակն արքայական մաստիկայով է պատված: Չմշկասահորդի պես սահում եմ դահլիճով մեկ: Պակականները խելակորույս ձեռքներն արդեն ատրճանակներին են տանում, իսկ ես գոռում եմ:

– Դե՛, դուք մի՛ վախեցեք: «21-րդ դարի մաեստրո»-ները տաք գուգարաններից չեն փախչում:

ԻՆՉՊԵՍ ԷՒ ԵՍ ԲԵՆԼ ՍՏԱԼԻՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԻ ՎՐԱ

Ինձ վստահել էին տանել ցույցի ժամանակ Ստալինի դիմանկարը այն բանի համար, որ ես ՎԳԻԿ-ում գերազանցիկ էի:

Ես հպարտ տանում էի Ստալինին Կարմիր հրապարակով հույսով, որ նա ինձ կտեսնի, և հորս բանտից ազատ կարձակեն: Եվ ահա մենք տանում ենք Ստալինի մեծ դիմանկարը՝ ես և իմ ՎԳԻԿ-յան վրացի ընկերները, և հանկարծ քամի... քամի:

Մենք վազքով անցնում ենք ամբիոնի մոտով... Հետո ինչ-որ տեղ Քարե կամրջի մոտ բոլորը ցրվում են, և ես դիմանկարով մենակ եմ մնում:

Իմ Ստալինը խոժոռվում, կնճռոտվում է և ինձ առազաստի պես տանում է:

Ես հիշում եմ՝ «Ճերմակին է տալիս առազաստը մենավոր... Եվ կայմը ծովում ու ճարճատում է»: Եվ ես ծովում ու ճարճատում եմ...

Վերջապես ես թռա դեպի դարպասատակը, շրջանակը կոտրեցի, հանեցի Ստալինով գործվածքը և խնամքով ծալեցի:

Հետո մտա փոստ, կտավը հեռագրով ուղարկեցի մորս հասցեով՝ Թիֆլիս, Կոտե Մեսխի 7, Բեժանովա Սիրան Դավիթովնային: Հեռագրին կից նամակ դրեցի.

«Մայրիկ: Մեր փողոցի սկզբում հաշմանդամների արտելն է, կոչվում է «Չմորա» (Եղբայրություն):

Նրանց մոտ այսպիսի խորհրդանիշ է, ձախ ձեռքով են բարևում: Այնտեղ աշխատում է քեռի Կոտեն: Նա շատ էր ուզում Ստալինի դիմանկարը ունենալ, որպեսզի տոներին այն ցուցադրեր: Խնդրում եմ, տո՛ւր նրան և շատ չէժանացնես»:

Անցավ մեկ ամսից ավելի: Ես մորս հիշեցրի, թե որտեղ են փողերը դիմանկարի համար:

Չէ՞ որ դրա վրա Ստալինն է:

Նկարիչ Գանտմանի աշխատանքը (Մոխեյ Գանտման՝ ծնված 1922 թ., նկարիչ: Ավարտել է ՎԳԻԿ-ի գեղարվեստի ֆակուլտետը): Եվ ահա մայրս գրում է ինձ.

«Ես վաղուց լվացել եմ քո քաթանը, կեղտոտ ջուրը թափել և սավանը քեզ եմ ուղարկել: Դու դրա վրա ես քնում»:

ԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՑՈՒՑԱՆՄՈՒՑ ԵՄ

Ես երկար ժամանակ բանտում էի, երեք հնգամյակ ֆիլմ չեմ նկարահանել, բայց կառավարությանը վերակառուցման ակնառու ցուցադրանմուշներ պետք եկան, և վեց տարվա ընթացքում այն ինձ չորս կապիտալիստական երկիր պարզեց՝ Հոլանդիա, Մյունխեն, Փարիզ, և ահա հիմա ես Նյու Յորքում եմ... Կարճ ասած... «արքունիքն ինձ շոյում է...»: Ինձ մի ամբողջ 22 դոլար են հատկացրել: Ի՞նչ պիտի անեն: Ամերիկայում ինձ ձրի են կերակրում... Երբ

ես Ռոտերդամում էի, ինձ հարցրին, թե կարո՞ղ եմ ես արդյոք ժամանակակից ֆիլմեր նկարահանել:

– Իհարկե կարող եմ...

– Իսկ «Համլետ»-ը:

– Կուզեմայի բեմադրել...

– Հնարանություն,- գոչեցին դահլիճից:

Այդժամ ես ասացի.

– Համլետը Գորբաչովն է, Կրեմլը՝ Էլսինորը...

Դադար... Հետո բոլորը գոչեցին.

– Մոդեռն: Ավանգարդ:

– Երբ Գորբաչովը դուրս կթռչի Կրեմլից՝ ճչալով՝ «Կա՛ռք ինձ, կա՛ռք», ես նրան կառաջարկեմ այդ դերը: Ես նրան կսպասեմ ԳՈԻՄ-ի շենքի մոտ: Ձեռքը կբռնեմ և կտանեմ նկարահանվելու իմ «Համլետ»-ում:

– Գորբաչովը՝ Համլետ, Ռախսան՝ Օֆելյա՞,– հարցրին տեղից:

– Ո՛չ,– պատասխանեցի ես,– Ռախսա Մաքսիմովնան այլ պիեսից է: Նա հրավիրված դերասանուհի է և տետրակը շփոթել է: Տեքստը կարդում է մի այլ պիեսից: Ընթանում է «Համլետ»-ը, իսկ նա եռանդուն կարդում է «Արքա Լիր»-ից:



*Եթե մեր դարում մարդը մեռնելուց առաջ չի
կանգնեցնում իր սեփական հուշարձանը, նրա
հիշատակն ավելի երկար չի ապրի, քան թաղման
զանգերի դողանքը և որբայրի կնոջ լացը:*

Շեքսպիր



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԷՍՍԵՆՆԵՐ ՓԱՐԱԶԱՆՈՎԻՆ

Սերգեյ Փարաջանովի ողբերգական վախճանից շուրջ երեք տասնամյակ է հոսել: Ինչպես նշել ենք, նրան նվիրված տպագիր աշխատանքների քանակն անցնում է հազարից: Դրանց մեջ կան քնարական շնչով և բարձր վարպետությամբ գրված բանաստեղծություններ, որոնցում ցոլանում է Փարաջանով արվեստագետի ճշմարիտ նկարագիրը:

1999 թվականին «Նաիրի» հրատարակչությունը Երևանում լույս է ընծայել բանաստեղծուհի Լիլիթի⁷⁹ «Հոգի և մարմին» խորագիրը կրող բանաստեղծությունների ժողովածուն, որի մեջ գետեղված է «Նռան գույնը» բանաստեղծությունը:

⁷⁹ Բանաստեղծուհի, քարգմանչուհի և հրապարակախոս Մետաքսեի դուստրն է:

ՆՈԱՆ ԳՈՒՅՆԸ⁸⁰

ՍԵՐՎԵՅ ՓԱՐԱԶԱՆՅԱՆԻՆ

Սիրտ՝
Կյանքի եղինջածածկ
Մացառուտում...
Ես ճանաչում եմ
Քո արյան փոթորկուն
խրխիմը,
Որի ձայնից
Մարդիկ գայլերի նման
Ռռնում էին,
Եվ ինչպես կատուներ՝
Մանկան պես լալիս,-
Դու քայլում էիր
Չյունոտ լռության
Տափաստանով...
Հիմա քո ոտնահետքերով
Ես եմ քայլում.
Մի հարցրո՝
Դժվա՞ր է, թե՞ հեշտ,
Պարզապես օգնիր
Չկան ապակե աչքերում
Գտնել նռան գույնը,
Ու քեզ պես թռչել
Մարդկանց գլխավերևում...
Ես բացում եմ
Քո տան դուռը,
Անտեսանելի ձեռքդ
Ինձ ներս է հրավիրում,
Նռան արբեցնող գույնը
Թափվում է կրծքիս,
Ներխուժում իմ մեջ...
Ես արդեն
Թռչում եմ՝
Հեռու մարդկանցից ու երկրից...

Ի դեպ, բանաստեղծությունը 33 տող ունի, ոչ ավել, ոչ պակաս 33 տող: Լիլիթը իր այդ 33 տողով, անկախ իր ցանկությունից, մեկ անգամ ևս ընդհանուր եզրեր գտավ Քրիստոսի և Փարաջանովի անցած տատասկոտ ճանապարհների միջև:

⁸⁰ Բանաստեղծությունը լույս է տեսել նաև ԱՄՆ-ի Լոս-Անջելես (Գլենդեյ) քաղաքում Մարո Գյոդակյանի բժախնդիր խմբագրությամբ հրատարակվող «Համայնապատկեր» շքեղաշուք ամսագրի 2001 թվականի չորրորդ համարում, որը, ինչպես նշել ենք, նվիրված է Սերգեյ Փարաջանովին:

ՓԱՐԱՋԱՆՈՎԻՆ

այս ի՞նչ
նոր թխած
գաթայի հոտ է
դանդաղ
տարածվում
կանաչ տարածքում
մա՞յրս է
թեքված թեյնիկի վրա
աղոթք քլքլում
թե՞
թեյնիկն ինքն է
Բուրլայի նման
կլոր բառերով
խոսում մորս հետ
բոլոր դեպքերում
նավթի
գաթայի
մորս մատների
գումարելին է
հոտն այս տարածքի
սհա
սևագործ
երկու հրեշտակ
գրասեղանս
տեղավորեցին
գազօջախի մոտ
ու...
անհետացան
շարժվող ամպի մեջ
այս ո՞ւր եմ ընկել
ինչ է
գաթայի
հո՞տ ունի մահը
այստեղ վերևում
Աստված
չլինի՞
մեռել եմ արդեն
ու... ուզածիս պես
դրախտի տեղը՝
ընկել
խոհանոց
Աստված...
դեմք ես դու

2003 թ. Երևանում լույս է տեսել բանաստեղծուհի, հրապարակախոս Սոնա Վանի՝ «Ես անուն չունեմ» վերնագրով բանաստեղծությունների ժողովածուն: Գրքի 81-82-րդ էջերում գետեղված է հեղինակի «Փարաջանովին» բանաստեղծությունը:

ՓԱՐԱՁԱՆՈՎ

2004 թվականին
Երևանում լույս
է տեսել բանաս-
տեղծ, լրագրող,
սցենարիստ Դովիկ
Դովեյանի «Բա-
նաստեղծություն-
ներ» ժողովածուն:
Գրքի 190-րդ էջում
գետեղված է Սեր-
գեյ Փարաջանովին
նվիրված ինքնա-
տիպ մի բանաս-
տեղծություն:

Փշրանքն ապակու փյունիկ է կապույտ,
Փշրանքը բախտն է քիֆիսցի հայի,
Ճախրող ապակին՝ չնաշխարհիկ գյուտ,
Նուռը՝ հենց իրեն, Սայաթ-Նովային:
Ֆանտոմն անցավ Մեսիսի փողոցով,
Որդին Հովսեփի ճամփորդ է տխուր,
Մեղր է ուղարկել մայրը քթոցով,
Հայրը՝ նշխարի սրբազան ալյուր:
Փշրանքն ապակու ձուկ է խաչգլուխ,
Ձուկը լողում է գորգերի ծովում,
Ո՞վ է նվագում առավոտ կանուխ,
Ճամփորդը տխուր ո՞ւմ է որոնում:
Իմաստունն իջավ հայտնության ծառից,
Պատերազմի դեմ մի տիկնիկ ճչա՛ց,
Աքաղաղ-արքան կանչեց իր թառից,
Չարը վերևից գահավիժեց ցած:
Ֆանտոմն անցավ Մեսիսի փողոցով,
Փշրանքն ապակու սիրտ է փշրված,
Իր նախնիների ծաղկած հետքերով
Որդին Հովսեփի Գեթսեման գնաց:

ՓԱՐԱՁԱՆՈՎ

2006-ին դարձյալ
Երևանում լույս է
տեսել Դովիկ Դո-
վեյանի «Կեսգիշե-
րային լիբրետո»
բանաստեղծու-
թյունների ժողովա-
ծուն: Այստեղ ևս
հեղինակը Փարա-
ջանովին նվիրված
բանաստեղծու-
թյուն ունի:

Սուգումներ առաջ ես ձուկ էի թևավոր,
Եվ վարդաթերթեր էին թեփուկներն իմ որդուն,
Աղի հանք է հիմա օվկիանոսն իմ անցյալ,
Եվ մատաղացու գառների լեզուներն են
Կենվորները հոգուս...
Հուզումներ առաջ ես փոթորիկ էի կավի,
Եվ ծակփոր կարասներ էին օրերս զնգուն,
Կիսապեղված տարածք եմ ես
Վաղ բրոնզեդարի,
Եվ կարասի մի փշրված կտոր է
Սիրտն իմ պոետական...
Փլուզումներ առաջ ես աշտարակ էի կանգուն,
Եվ խրխինջներ էին լուսաբացներս կայտառ,
Ավտոկանգառ է հիմա քիկունքն իմ թեփուկե,
Եվ բեռով այդ բարձուն
Ես օվկիանոս եմ փնտրում...

ՄԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻՆ

Երկնային աստղի պես
Յուլացիր արվեստում,
Սիրտդ բոց էր հրկեզ,
Թռիչքդ՝ իմաստում:
Դու եզակի անհատ,
Նռան պես ճաք տվիր,
Երկնեցի աղամանդ,
Մարգարիտներ ընտիր:
Կորած նախնիների
Ստվերները գտար,
Ինքդ բերդի գերի,
Բերդ դարձար լեզենդար:
Ուր մատներդ դիպան,
Հրաշքներ գործեցին,
Քեզ Աստծու դեսպան
Ու կախարդ օծեցին:
Երբ կենդանի էիր,
Քո ստվերից անգամ
Ոմանք փախչում էին՝
Ինչպես օտարական:
Երբ հեռացար կյանքից,
Ոմանք ստվերի պես
Կախվեցին քո փառքից՝
Ճանճի պես աներես:
Միշտ սպասում է քեզ
Քուռկիկ Ջալալին քաջ,
Որ հեծնես Դավթի պես
Ու սլանաս առաջ:
Չեմ հանդիպել ես քեզ,
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս,
Ինձ համար տեսիլք ես.
Հեքիաթային հերոս:
Դու բարություն անաչար,
Հպարտ եմ քեզանով,
Դու անավարտ հանճար,
Մերգեյ Փարաջանով:

Բանաստեղծ և
թարգմանիչ Սուրեն
Մուրադյանի՝ «Աշ-
նանային զանգեր»
խորագիրը կրող
բանաստեղծու-
թյունների ժողո-
վածուում (էջ 271)
տեղ է գտել Մերգեյ
Փարաջանովին
նվիրված բանաս-
տեղծություն:

ԹՈՉՈՂ ՁԻԵՐ

2006 թվականին
Երևանում
լույս է տեսել
բանասիրության
դոկտոր, բանաս-
տեղծ Յենրիկ
Էդոյանի՝ «Փողոցի
բաժանվող մա-
սուն» վերնագրով
բանաստեղծու-
թյունների ժողովա-
ծուն: Գրքի 69-րդ
էջում գետեղված է
հեղինակի «Թռչող
ծիերը» բանաս-
տեղծությունը:

Դեպի երկինք փախչող
ծիերի հոգիները
Փարաջանովի,
կարմիր լույսի մեջ թռիչքը նրանց
դեպի սահմանը մի ուրիշ
տիեզերքի, որ նրա աչքերից
դուրս է նայում չափազանց
պարզ ու իրական:
«Լույսը ճիշտ պահիր,-
գոռում է բարձրաձայն,-
պատկերը մթնում է»:
Իսկ կեսօրն աննկատ
հոսում է, քափվում
հանճարի սպիտակ
մորուքին:

ՓԱՐԱՋԱՆՈՎԻՆ

Փիրուզե միջանցք, դռների ճռինչ,
Արքա՛ն, հրե՛շք, թագուհի՛ն, ճո՛րտը...
Եվ մատներն ահա մեռնող հանճարի
Ոսկե ոստայնից փորձում են կառչել:

Հետո ծաղրածուն այն միաչքանի
Ծամածռվում է սրինգը շուրթին:
Եվ հավերժական ինչ-որ նինջ, քնի՛ր,
Անդին նույն խա՛ղն է, խաբկա՛նքը հուռթի...

Կյա՛նք՝ խեղված թռչուն, խաբարված օրեր.
Եվ այնուհանդերձ Գործը արված է:
Հրեշտակի ափ, ափի մեջ՝ ցորեն.
Եվ, սի՛րտ, ընդունիր վերջին հարվածը:

Բանաստեղծ Ար-
տաշես Ղազար-
յանն ունի Փարա-
ջանովին նվիրված
բանաստեղծու-
թյուն («Համայնա-
պատկեր» ամսա-
գիր, 2008, 6, էջ 25)
և էսսե («Հայացք
Երևանից», 2009,
փետրվար):

ՄԵՐԳԵՅ ՓԱՐԱԶԱՆՈՎ

Կրկին Փարաջանով: Փարաջանով, այսինքն՝ հավերժական գիշերների մեջ անթեղված, անակնկալ տվայտող լույս: Մաքառումով ու լավատեսությամբ պսակված մարտիրոսություն: Ծաղկող-գրչի առասպելներն առողջ, բեղուն բնագոյ: Հեթանոսորեն անընտել գութ: Գաղտնատեսի հեռահար աչք և ասպետի շռայլող ձեռք: Նռնենու կարկտահարված և վերընձռնողված ճյուղ...

Թիֆլիսյան փոքրիկ, արևոտ բակ և սև, խոշոր աչքերը աշխարհին խաչած մի մանչ: Վերջալույսի ֆոնին հրեղեն-կապտաբաշ ձիերի երամակ, ահեղ անկման պահին կախարդված-քարացած ջրվեժներ, և անափ հուզմունքից մանչուկի շունչը կտրվում է: Խայտերանգ ծփում են Անհայտի վարագույրները: Ի սկզբանե Լույսն էր: Հետո տիրական ձայնը հորդորում էր՝ քայլ արա՛: Լույսին խառնվեց գույնը: Գույնի մեջ տարրալուծվեց ձայնը: Իսկ ձայնը ընդամենը խոստում չէր: Անգոյության ակունքներում ծլարձակում էր այն, ինչը տարիներ անց աշխարհը պիտի կոչեր փարաջանովյան: Նա եկել էր իր Պարտքը կատարելու և պիտի սպասեր իր ժամին: Այդ երանելի, ըղձալի պահը կարծես թե չեկավ: Ու թե եկավ էլ, տեղ հասավ պատուհասված, բռնության, երեսպաշտության, քսության նետերով խոցոտված, արնաքամ թռչնի պես: Չայնը հավաքվում էր, որ տիտանական ճիգով փոխարկվեր ճիչի: Մինչդեռ պետականորեն ամեն ինչ արվեց, որ արարվելիքը չարարվեր: Ժամանակի տերերը, միջոցների մեջ խտրություն չդնելով, դուրս էին եկել Մեծի դեմ: Լույսը ջղաձգվում էր, շնչասպառվում, ինչպես Ապոլոն տաճարի բուրմը վիշապների քնջություն: Փարաջանովը գիտեր, որ անհնար է միաժամանակ հարմարվել և արդարացի լինել: Փարաջանովը նախագգում էր նաև, թե ճանապարհն իրեն դեպի ուր է տանելու, թե այդ ճանապարհին իրեն հանդիպողները ինչ կերպարանք, ինչ քիմք ու ճաշակ են ունենալու, և ստոիկյան համբերատարությամբ նախապատրաստվում էր: Միակ անառարկելին Միումն էր, արմատների եռքը: Արարողը ունկերը լարել էր խլանալու աստիճան: Կանչում էին բազում կողմերից, բայց մեկ շրթունքով: Եվ կանչողը Լույսն էր: «Մի՞թե լույսից զատ ուրիշ բան էլ գոյություն ունի», - կասեր ֆրանսիացի բանաստեղծը:

Մարդու կերպարանքով ստեղծումի ոգին փարվել էր հավերժության սերմերին, և արյան հիշողության խավոտ դիպակներին ուրվանկարվում էին ապագա ֆիլմերի պերճաշուք կադրերը:

Թիֆլիսը գույնի խաղ էր, ձևի խրախճանք: Հալ ընկած արև էր և մրգաշխարհի գույներն ու բույրերը ներծծած անձրև: Նաղարայի կտկտոցներով շուրջառված արևագալ և նեղսրտած մամիկների աղոթք-մրմունջով պսակված արևմուտք: Հրճվանք էր ու ողբ: Արյան խենթություն էր և արմատների խտիտ: Իրիկվա ժամերգություն էր և մատաղի արարողություն: Քռի ափն ի վեր արծաթե թեփուկներ թափող ձուկ և դարդիման դուդուկի լաց: Շոգից թե ներքին կրակներից կաս-կարմիր կտրած աղջկերքի փսփսոց և ծերանալուց համառորեն հրաժարվող տատի՝ աղջկականի խփող քելք: Կիրակնօրյա շուկայում իրացվող ասեկոսե-գրույց և իրողության ցնցոտիներ հազած տխուր առասպել: Հարսանիք էր ու մնջախաղ: Նկարչություն էր ու կինո: Կի-

նո՛: Մտերմության չափ բաց, մտերմիկ, առտնին և հրաշքի պես արտառոց: Եվ վերջապես, Թիֆլիսը շարժում էր՝ դադար չսկսկալող շարժում: Շարժում դեպի իրականության, ժամանակի խորքերը, բնավորությունների ներքին, թաքուն ծալքերը...

Թիֆլիսը պատանություն էր, անցյալ: Ետևում էին մնացել մոսկովյան ուսումնառության տքնանքով հագեցած տարիները, և Վարպետն իր ներկայով հայտնվում էր կիևյան կինոարտադրության հորձանուտում: «Մոռացված նախնիներ»-ը, մեծ ռեֆորմատորի երախայրիքը չլինելով (մինչ այդ Փարաջանովը նկարահանել էր յոթ ֆիլմ), իրականում ասելիքի թարմությամբ և նյութի մեկնաբանման սրությամբ հենց այդպես էլ ընկալվում է: Այդպես եղջերավորի պռունկներից նավասարդյան հանդիսությամբ հարության, վերադարձի մեղեդին է ծործորում: Այդպես բրուտի ձեռքում ձև, կերպարանք է առնում անշունչ կավը, տիրոջ արարյալ աջի տակ՝ կենդանանում, փթթում գոսացած-չորացած բնությունը: Այդպես անմերձանալի եզերքներում տիրական անշտապությամբ խմբվում, մեմախոսում են սուրբ նահատակաց ոգիները: Եվ դիցապատմական համրության շղարշ-մեզը ետ հրելով՝ ճերմակ-նրբենագույն թուղթն է ի ցույց դնում Գոյության առեղծվածի հակառակ երեսը: Փարաջանովը փակ տարածության մեջ հայտնաբերում է ժամանակների անքակտելի կապը, ի բաց վանում անհատին կաշկանդող ներքին, արտաքին պայմանականությունները: Թվում է՝ վաղնջական դեմքերը, երևույթները մի պահ դուրս են լողում անհայտից և, քիպլինգյան թափառող կատվի պես հայացքի մի շող, ժպիտի մի ծվեն թողնելով, կրկին անէանում, տարրալուծվում են անհունում: Փարաջանովյան «Սովերներ»-ը հուշում են. ո՞վ գիտե, գուցե Փարաջանովին և Ջեն ճգնավորներին առնչակցող ինչ-որ թաքուն, ցայծմ չբացահայտված թելեր կան: Փաստն այն է, որ «Մոռացված նախնիների սովերներ»-ում առկա է Ջեն նկարիչների պատմելաձևի ահագնացող ցոլանքը: Նկարիչներ, որոնք կոչ էին անում ներսուզվել սեփական Ես-ի խոր-խորատներում, պեղել ներաշխարհի թաքուն, մոռացված շերտերը, գտնել դեպի բնական վեհակեցության տաճար տանող ուղիները: Բայց...

Փարաջանովը Փարաջանով չէր լինի, եթե, անցյալի ավանդները ոգեկոչելով, չառաջնորդվեր գեղարվեստական պատկերի կառուցման սեփական օրենքներով: Այստեղ է, որ Հայտնատեսության սրահը լքում են մնացյալը, և Վարպետի երկխոսության հասցեատերը դառնում են հայ մանրանկարը, Ռուսինը, Հովնաթանյանները, Սուրենյանցը, Կոջոյանը, Սարյանը, նաև «հանկարծակի հեթանոսացած» Վարուժանն ու Սիամանթոն: Եթե նախորդների հետ կապն անուղղակի էր, ապա վերջիններիս դեպքում անվրեպ գործում էր արյան հիշողության սնուցող զարկերակը.

*«Մսկայն քիքերս ծարավ գույն ու մարմնո գեղաճն՝
Մարգարեի մ'աղոթող քիքերուն պես սեպագած՝
Անհունորեն սուզվե ես հորհանմին մեջ ճախրապագ
Այն թխաշվի աղջկան, Չերեգուիվոյն համպարե,
Որ իմ առջև կըպարե, միշտ կըպարե, կըպարե...»*

Փարաջանովի յուրաքանչյուր կադրը ժամանակի, տարածության մեջ դիտվում է իբրև գոյաբանական առեղծվածին մերձենալու վսեմագույն ակնթարթ: Արարող միտքն այստեղ վճռել էր կատարելության հասնել թռիչքի պահին: Վարպետը ձեռք էր մեկնել գուցուլական լեզենդին և փորձեց վերապատմել այն: Սատարողը արտակարգ օժտվածությունն էր, միջոցը՝ ժամանակակից կինեմատոգրաֆի լեզուն, և ներկայի հատույթում մարմնավորվում էր ոգեղեն անհնարինը: Հրաշքի կամոք ոգեկոչվել էր անցյալ կորուսյալը, և ներկան լցվել էր վաղնջական ժամանակների այլաշխարհային տիպաժ-գոյություններով: Ազատության, երևակայության տիրույթներում նույնանում էին դեմք ու դիմակ, իրողություն ու տեսիլք: Կոցյուրինսկու հեղինակած գուցուլական լեզենդը իր բարի ու չար ոգիներով, անտառահարսներով, ծննդյան ու նոր տարվա ծեսերով ընդլայնում է իր տարածքները, թիզ առ թիզ նվաճում... Էկրանը: Չկային ճակատագիր և պատահականություն: Համենայն դեպս, հովիվն անհաղորդ է այդ ամենին, զի կենաց ժամանակը ելևէջում էր, ինչպես երագում: Հովիվն այնքան ամուր էր խաբսխված իր ժամանակին, որ դա ոչ թե զարմացնում է, այլ սոսկ առիներում: Հովիվն իր գոյը հավաստելիս ապավինում էր ավելի շատ բնագոյին, քան բանականությանը, որը մի այլ չափման մեջ հենց ինքը բանականությունն է: Հովիվի և նրա շրջապատի համար գալիք քաղաքակրթությունների բարոյական կողերքը կարող էր ընկալվել իբրև ցուցք, զավեշտ: Մերը պսակագերծված էր և խաղարկվում էր առանց ծեքծեքուն ածանցյալների:

Փարաջանովը փորձում է փրկել դիմագրկվող մարդուն և նատուրալիստորեն ունայն ու վանող մարմնականին հակադրում է անկորնչելի-ոգեղենը: Վախճանն այստեղ ոչ թե վերջն է, այլ ակնթարթային անցումը մի ձևից մեկ այլի: Ընդհատվածը տեղափոխվում է շարունակական ռիթմի մեջ: Գուցուլները մենամարտում են: Իրարանցման մեջ շողարձակում է կացինը, Էկրանը ողողվում է շառագույնով, և Իվանի սպանված հոր մարդու տեսադաշտում վարգում են հրեղեն նժույգները (ֆիլմը Արևմուտքում ցուցադրվել է հենց «Հրեղեն նժույգներ» վերտառությամբ):

Հեթանոսորեն անադարտ, անկաշկանդ երևակայության մեջ Փարաջանովը բնակեցնում է փրկվող, ազատագրված մարդուն: Իսկ փրկությունը մահվան ու կործանումի հետ անվերապահորեն չհաշտվելն է: Իր «Սովերներով» Փարաջանովը հաստատում է մեծ ամերիկացու այն ճշմարտությունը, թե մարդուն հնարավոր է ոչնչացնել, բայց սպանել՝ երբեք:

Ոտից գլուխ քրիստոնյա Փարաջանովը, ոգեկոչելով վաղնջականի հեթանոսականը, փառաբանական հիմն է հնչեցնում առ հեթանոսականի այն գոյաբանական շերտերը, որտեղ մարդը վայրի գազանի պես բնության և՛ տերն էր, և՛ ծառան, երբ նրա մետաղալարի պես ձիգ էությունը պառակտված-ծռմոված չէր պայմանականության ունելիներով: Գուցուլների ներփակ խորհուրդն ու խորհրդատվությունը Փարաջանովը գեղարվեստական պայթյունի միջոցով դուրս բերեց համաշխարհային քաղաքակրթության ուղեծիր, բոլորովին այլ դիտանկյունից մեկնեց հեթանոսական ազատության միֆը:

Կարպատյան բլրապատ լեռների, չնաշխարհիկ ծեսերի և ավանդույթնե-

րի շուրջապարում գրկախառնվեցին այնքան տարբեր երկրներ և ժողովուրդներ, կեցություններ և փոխհարաբերություններ:

Այսքանը ֆիլմի ասելիքի՝ «ինչ»-ի մասին: Կարելի է վստահորեն ասել, որ ֆիլմի մյուս կողմը՝ «ինչպես»-ը, քնից ու հանգստից գրկեց այն ժամանակվա բազում վայ-կինոգետների: Մինչդեռ կինեմատոգրաֆիստների մի հոծ խմբի համար այն կինոլեզվի բացահայտումների շտեմարան դարձավ: Այն, որ Փարաջանովի կինոմտածողության ոճաձևը առասպելորեն արգասաբեր եղավ, կարելի է բազում օրինակներ բերել, բայց վճռորոշն այն է, որ ժամանակի համատարած անպտղության պայմաններում ծիլ էր տվել Բացարձակ արարումի մարգարտածաղիկը: Ստեղծանումի բերկրանքի հույսը տիտանական ճիգով բարձրացնում է ինքն իրեն: Հույսին խառնվում է Գույնը, և կատարվում է Լույսի յուրօրինակ խտացում:

Նա եկել էր առավելագույնս օգտագործելու ժամանակը (իհարկե երկրային), և ամենաչնչին հապաղումն իսկ կարող էր կործանարար դառնալ: Այլընտրանքը բացառված էր, և նա իրեն պարզված լեղին ըմպելու էր ցմբուր: Ըմպեց, որպեսզի Գողգոթան թիկունքում թողնելուց հետո նվաճածի հպարտությամբ հավաստեր. «Այն, ինչ տրված էր ինձ իբրև Տեսիլք, կյանքի կոչեցի: Ամեն ինչ կայացած է»:

Արևմուտքի կինոգետները ափ ի բերան քրքրում էին «Մոռացված նախնիների ստվերները» ֆիլմի յուրաքանչյուր կադրը: Աշխարհը գտել էր Փարաջանովին և գնահատում էր: Տիրական ձայնը կրկին հորդորում էր՝ քայլ արա՛: Հասել էր հաջորդ քայլը անելու աստեղային պահը: Եվ «մի գիշերում» հանրահռչակ դարձած Փարաջանովը, Հայաստանից ստանալով ֆիլմ նկարահանելու հրավեր, պատասխան հեռագրում հայտնում է. «Երջանիկ եմ, որ Հայաստանն ինձ վստահում է կապվել Սայաթ-Նովայի թեմային: Անհապաղ գալիս եմ»:

Շտապում էր Վարպետը: Ոչ միայն շտապում էր նոր ֆիլմ նկարահանելու, այլև խանդավառված մղվում էր դեպի ակունքն ու արմատները: Շտապում էր՝ զգալով ժամանակի նյարդայնացնող սղությունը: Այո՛, խորհրդային մակարտիզմը կրնկակոխ հետևում էր նրան: Վխտում էին չարի գործակալները, և Փարաջանովը ստիպված էր փրկություն փնտրել անընդմեջ ու անվրեպ արարելու էգիդայի ներքո:

Ինչի՞ց սկսվեց Փարաջանովը: Հայկական մանրանկար և արևելյան կենսափիլիսոփայություն: Շարժումը նպատակ էր նախանշում, նպատակը՝ շարժում: Այո՛, Փարաջանովը խախտեց կինոպատումի հանրաճանաչ կանոնները և շարժվեց զուգորդային-խորհրդանշական հոգեվերլուծության ճանապարհով: «Ստվերներ»-ում ձեռք բերվածը դիտարկվեց մեկ այլ հեռանկարում: Տենդագին փնտրվում էր այն, ինչը Նիկեյ Գրյունշտեյնը համարում է «հնարավորի արվեստ»: Որդան կարմիրից սերված էքսպրեսիվ շառագույնը (որը ֆիլմի գլխավոր կերպարներից է) մանրանկարչական կառուցիկության մեջ խորհրդանշիչ-պատկերն օժում է նախաստեղծ արտահայտչականության բացառիկ փայլով: Մարդկային սրտի ավշահյութից արարվում էր այն նախանյութը, որը տիեզերական քառսը ներդաշնակելու

փորձի հիմքում էր գետեղված: Ասպարեզ էին նետվել նաև մնջախաղային արվեստի ամենաճկուն տարրերն անգամ: Խաղարկվող աստվածաշնչյան պատկերներին (ինչպես հայկական մանրանկարում) ներհյուսվում են հեթանոսական մոտիվները: Փթբում է զարթոնքի մեղեդին: Ապրելու կամքին հակադրվում է մեղքի խարդավանքը: Եվ ահա՝ աշխարհից մեկուսացած բանաստեղծը կանգնած է մահվան հանդիման: Բանաստեղծի հեռացումը գետի այն ափը անցնելու պես է: Մահը կանգ է առնում, իսկ պոեզիան շարունակվում է: Մահ ոչ թե չկա, այլ չափից դուրս սուղ են նրա սահմանները: Հրեշտակները տեղափոխում են բանաստեղծի թափուր քնարը դեպի ո՞ր... դեպի մի նոր եզերք, մի նոր Սկիզբ:

Չեռքի անվրեպ շարժում, պարեգոտի ծալք ու թրթիռ, երկրաչափական մաքուր ու պլաստիկ ձևեր, և Հայտնատեսության խորանում կրկին երևակվում է Մարդը: Մարդու ներաշխարհի պատկերումը առաջին ինտենցիայում:

Պատկերների ստատիկ վիճակների համադրման, ֆիլմում գույնի վիրտուոզ օգտագործման ակունքների մոտ կանգնած Մամուլյանի, Էյզենշտեյնի, Անտոնիոնիի ձեռք բերածին Փարաջանովը հավելեց իր սրտածնունդ գույնը:

Փարաջանովը քայլում էր Գեղեցիկի նախաստիպի հայտածման ճանապարհով...

Նուռը գնալով փոխվում, փոքրանում, աղոտանում, դառնում էր աննշմար մի կետ, կրկին շիկանում, ընդարձակվում, պեծին տալիս: Վարպետը գիտեր, որ Նուռը աշխարհում (ղիցուք՝ հակատարածության մեջ) միայնակ չի կարող գոյություն ունենալ, որ նույն կողքին անընդմեջ գոյավորվում ու չքանում, չքանում ու գոյավորվում է Յեցը: Վարպետը գիտեր, որ (հերն անիծած), թեկուզ ինքնախաբեության գնով, հնարավոր է շրջանցել Նուռը, բայց բացառել Յեցը, անհնար է: Մի կերպ, մի ձև էր մնում միայն Յեցին դիմագրավելու: Յուցադրել այն՝ ի ցույց հանելով նաև կենսունակ-անկորչելին: Եվ Նուռը կեղևն էր փոխում...

Տեղյանն ասում էր. «Ահով, ահա, կանչում են քեզ, Յուլա՝ ցնորք Նաիրի, - Մի՞թե վերջին պոետն են ես, Վերջին երգիչն իմ երկրի»: Չարենցը տազնապած էր. «Գուցե սո՞ւտ է Նաիրին, Նաիրին-չկա... գուցե հուշ է միայն, ֆիկցիա, միֆ: Ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն...»: Սարոյանը տարակուսելով հարցնում էր. «...այս ի՞նչ է պատահել հայերիս: Թե՞ դա առասպել էր ու ցնորք, և Հայերն ամենևին էլ հայեր չեն, և նրանցից յուրաքանչյուրը ավարտվում է զուտ ինքն իրենով»:

Աշխարհում մի հայ էր ծնվել՝ Սարգիս Փարաջանյան անուն-ազգանունով, և, կյանք հորջորջյալ Չարչարանաց շաբաթն ընդմիջարկելով ոգու փառահեղ ֆիեստաներով, կարող էր այնուհանդերձ «ավարտվել զուտ ինքն իրենով»: Նա ապշեցնելու աստիճան իրատես էր, բայց նրան միշտ էլ ընդառաջ էր ելնում ակունքներից հեռարձակվող Տեսիլքը:

Կեղծիքն ու բռնությունը հավաստի էին աչք կուրացնելու աստիճան, բայց անառարկելի էր նաև փոխզիջման չգնացող արվեստագետի, այս դեպքում՝ ստույգ Վերծանողի կամքը: Եվ հենց այդ կամքն էլ, դուրս պրծնելով զիզզազ-

վող դավադրությունների շղթայից, երևակայության անկոխ տարածքներում փորձարկում էր ԴԱՐԴԸ՝ հասկացություն, որ չես թարգմանի աշխարհի և ոչ մի լեզվով:

«Կենսագրություն... Ես այնքան էլ լավ չեմ հիշում իմ կենսագրությունը: Ի՞նչ է իմ կենսագրությունը: Դա՛րդ: Սա՛ է նրա հավերժական ձևը»:

Սերգեյ Փարաջանովը ծնվել ու մեծացել էր ոչ հայկական միջավայրում, բայց արյան կանչը գորել է ու անառարկելի: Փարաջանով-Փարաջանյանը թռչչի պահին չէր կարող տրվել ինքնազննումի առանձնաշնորհներին: Դա պիտի կատարվեր հետո, շատ հետո. «Տարիների ընթացքում ես ավելի ու ավելի մեծ քնքշանք եմ տածում դեպի իմ հայրենիքը, որտեղ ես, դժբախտաբար, դեռ չեմ ապրում: Հայաստանն ինձ համար արվեստ ու պատմություն է: Իմ ընկերներն են, իմ ուրախությունները և մեր կորուստները...»:

«Իմ ուրախությունները և մեր կորուստները...»: Ինչեր չի անում արյան հանգույցը, և գուցե մեր ժողովրդի անթվակիր կորուստներով են պայմանավորված Փարաջանով արվեստագետի Գ-տաժոն ու Գ-յուտը: Աշխարհը գիտեր Փարաջանովին և հնարավորի սահմաններում փորձում էր սիրաշահել: Իսկ որտե՞ղ էր Սարգիս Փարաջանյանը: Այսօր արդեն հաստատապես կարելի է ասել, որ «Փարաջանովը» դիմակն էր, «Փարաջանյանը»՝ դեմքը: «Սերգեյը» կեղևն էր, արտաքին փայլն ու պերճանքը, «Սարգիսը»՝ միջուկը՝ ներսը նախրյան արևով փեռեկված ու կայունացած:

«Հայֆիլմ» կինոստուդիայի մոնտաժման սեյսակներում մնաց Փարաջանովի վերջին՝ «Խոստովանանք» ֆիլմի մի քանի հարյուր մետր նկարահանված նյութը: Իսկ հարցազրույցներում Փարաջանովը հավաստում է. «Ես պետք է ջանամ վերստեղծել մանկությունս ու պատանեկությունս...

...Պետք է տեսնել իմ տունը: Դա զարմանալի տուն է: Պետք է տեսնել իմ մորը: Նա արտիստիկ է... «Խոստովանանք»-ը իմ վերածնման իմաստն է»:

Անկասկած հուզիչ ու հետաքրքիր է մոնտաժման սեյսակում մնացած նյութ-մասունքը, բայց չէ՞ որ իբրև խոստովանանք է հնչում Փարաջանովի ողջ կինոստեղծագործությունը, և այդ ամենը (այս դեպքում առանց չակերտների)՝ «Մոռացված նախնիներ»-ից մինչև «Սուրամի ամրոց», ֆիքսվում է իբրև մեծ արվեստագետի վերածնման փաստ: Հաճախ է խոսվել Փարաջանովի մեծ արտիստականության մասին: Այդ արտիստականությունը երբեք չի շահարկվել տաղավարային փափկակեցության գաղջ անդիմության մեջ:

Յուրայի ժամանակներից լույս ընկած, գազանատամ սողուններ հիշեցնող, հատուկ աչքակալներով լոբբերը սադիստական սառնասրտությամբ հետևում էին, թե ինչպես անվերջ հրաժեշտի կամարների տակ կանգնած Վալետի դեմքը փոխակերպվում է մարմարե դիմաքանդակի:

Փարաջանովը մեկ սփոփանք ուներ՝ ապրողաց սպասումն ու անչափելի սերը: Փարաջանովյան սրտածն Նուռը փորձենք դիտարկել փիլիսոփայական ինտերպրետացիայի շրջանակներում. «Երջանիկ կյանք հնարավոր չէ. ամենաշատը ինչին մարդը կարող է հասնել հերոսական կենսությամբ է: Այդպիսի կյանք վարում է նա, ով ինչ-ինչ ձևով ու առիթով, բոլորի համար ինչ-որ կերպ լավ հանդիսացող բանի համար պայքարում է գերմեծ դժվարություն-

ների դեմ ու վերջում հաղթում, ընդ որում՝ վատ կամ բոլորովին չվարձատրվելով»:

Փարաջանովյան ողիսականի հեղեղատներում բազմիցս հոլովվող «Էություն», «Էաբանություն», «Էափոխություն» հասկացությունների կողքին անպակաս է եղել նաև «Էտապ» հասկացությունը: Ռուբեն Սևակի արձանած-հրեղեն տողե՞րն են արժարժված կառքում, Չանդրիից Այաշ տանող ճանապարհին, թե՞ Փարաջանովն է մրմնջացել անլուր տաժանակրության քավա-րաններում. «Ես խոյացա նվիրումիս տենդահար, Հոն ուր նիհար ճառագայթ մը կար լույսի, Հոն ուր սիրո վտիտ երգ մը կողողար, Հոն ուր դողդոջ ծիածան մը կար Հույսի...»:

Ժամանակը պտտվում է խելահեղ արագությամբ: Այսօր նա մեզ հետ չէ: Բայց երբ ապրում էր, դարձյալ մեզ հետ էր իր մենությամբ ու տառապանքով, մեծ արվեստագետի իր մեծ խիզախումներով: Հիմա մեզ հետ են նրա զարմանահրաշ ֆիլմերը, հայտնությունների փոխարկված նրա կոլաժներն ու ճեպանկարները: Հիմա միայն, երբ մեզ է հասնում ահագնացող աղետի դեմ նրա անպաշտպան էությունից ճառագող լույսը, փորձենք վերծանել նրա ապրածի ողբերգականն ու լուսեղենը: Քամյուական թիփազայի դռները այդպես էլ չբացվեցին Փարաջանովի դեմ, և նա անասելի զոհողությունների, նյարդերի, առողջության, ի վերջո, կյանքի գնով, ստեղծեց իր սեփականը՝ փարաջանովյանը: Տիրականորեն «հավաստեց կյանքը» և ձանձրույթից ճնկտացող մեր աչքերի առաջ ի ցույց դրեց կերպափոխությունների իր իրապատում հրաշքը: Բայց ի տարբերություն քամյուական «թիփազայի»՝ փարաջանովյանը բնակեցված չէր վայելչագեղ աստվածներով, որտեղ աստվածակերպ-տառապող մարդիկ բարբառում էին ոչ թե օշինդրի բուրմունքի մեջ, այլ անմռունչ հոգու շուրթերով հնչեցնում էին մարդկային պարզ հավատի փրկության հիմնը, անդադրում մաքառումի օրհներգը...

Երբ նա կար, մենք (աշխարհին հանճարեղ զավակ պարգևած հոր զսպվածությամբ, թե՞ որդու քամահրանքով) կարկամեցինք և չհասցրինք ասել, որ նա մերն է, մերը՝ ողնուծուծով: Եվ հիմա, երբ նա հավերժության ուղեկիցն է, մեղանշողի մեր ուշացածությամբ պարտավոր ենք ասել, որ նա մերն է: Իսկ ասել կնշանակի ապացուցել: Ապացուցել կնշանակի ճշտել մեր վերաբերմունքը նրա ստեղծածի հանդեպ: Հաստ լինենք նրա «Խոստովանանք»-ին պատասխանելու երախտիքով, որպեսզի անխամրելի և անխաթար մնա հիշատակը Օծյալի: «Ու ես հազար մահերից, Հարություն առնող, Անավարտ ժպիտներիս հետ, Նորից պիտի ծնվեմ, Մաքուր մոխիրներից»... Ալիսիա Կիրակոսյանի այս հաղթականչը Սերգեյ Փարաջանովի պարագայում ստույգ է պատճենահանելու աստիճան...

Կապտափայլ ֆոնին վարզում են փարաջանովյան հրեղեն նժույգները՝ իրենց ոսկեղեն թամբերին դեպի փրկություն ու հավերժություն տանելով հայ մարդու հույսը, տոկոնությունը և նվիրական երազանքները:

ՃԱՂԵՐԻ ՄԻՄՖՈՆԻԱ

Որպես հենարան, որպես աննավ թի
Վարպետը բռնեց ճաղերը բանտի:
Այդժամ ճաղերը դարձան ձիգ լարեր,
Ու ձեռքը փորձեց նորից արարել:

Շենշող շշուկը անշոշափելի,
Անսեր արերի սվավոցով սուր
Սպառնալիքով լի գալիս էր էլի,
Հետո գնում էր՝ չգիտեմ թե ուր:

Ծռծռում էին ճաղերը ճղծիմ,
Ծիծուների պես ճկվելով արագ,
Ծառեր ասելով ճաղերը կրկին
Բաժանվում էին լարերի բարակ:

Սերգեյ Փարաջանովը կյանքից հեռացավ 1990 թ.-ին: Զենց այդ 1990 թ.-ին էլ ծնվեց մի հայորդի, ով աշխարհահռչակ ռեժիսորին նվիրված պոեմ է գրել: Անհավատալի է, սակայն իրականություն, որ Զարություն Զովակիմյանը գրել է 375 տող պարունակող «Մեմոլոյան մետամորֆոզ» վերնագրով այս պոեմը, որտեղ Սերգեյ Փարաջանովը ներկայացված է որպես աշուղ Սերգեյ... Ներկայացնում եմ պոեմի վերջին հատվածները:

Լարված լարերից, լարերից բարակ
Արձագանքում էր անտուն մեղեդին,
Մեղեդին որպես սեր, սեռավարակ
Միշտ թափառում է մարմնից մարմին...

Մայրամուտից հետո լուսաբացից առաջ

Գիշերը որպես լուսավախ չղջիկ,
Ինչպես գիշատիչ գորշափետուր բու
Տարավ տղային թափառաշրջիկ՝
Իր ժամանակում տեղավորելու...

Տղան կգարթնի հաջորդ առավոտ
Ու կորոնի մեղեդի ու սազ,
Կծնկի դատարկ մոխրամանի մոտ,
Եվ չի հասկանա, որ կյանքն է երագ...

ԱՆՀԱՎԱՏԻ ԾԵՍ ԿԱՄ ՇԱՐԱԹՕՐՅԱԿ

Հավաքվել էին ահել ու ջահել,
Ու դատարանի որոշմամբ արդար
Սերգեյ աշուղին պետք էր ողջ թաղել
Նոր ամրոցի տակ՝ որպես հիմնաքար:

Ծիծաղում էին ահել ու ջահել,
Արքան իր գոտին վերև էր քաշում,
Պիոներները բերեցին բահեր,
Աշուղի համար եկել էր աշուն...

Բղավում էին ահել ու ջահել.
«Մա՛հ, մա՛հ, աշուղին, աշուղին՝ ցա՛վ, ցա՛վ»,
Հողի մեջ մտան ժանգոտված բահեր,
Աշուղի մաշկով ցուրտ սարսուռ անցավ:

Ու նրա հոգնած դատարկ ոսկրերում
Մեմուքյան մետրոն սլացավ նորից
Անվերջ գնում էր, գնում էր, գնում
Կարծես փախչում էր ուղևորներից....

Էլ չդիմացան քարերը անվախ,
Վերևից ընկան արքայի գլխին,
Շիրմաքար դարձան, վրան՝ մուրճ, մանգաղ,
Շաքաթոթյակը ավարտվեց կրկին:

ԱՆՎԵՐՋԱԲԱՆ ՆԱԽԵՐՂԱՆՔ

Անցան տարիներ, անցավ աշունը,
Չմեռների անցան, եկել է գարուն,
Բանտից հեռացավ Սերգեյ աշուղը,
Իսկ նրա սազը երգեց հետմահու...

Հիմա էլ չկա «Ո՛չ մուրճ, ո՛չ մանգաղ»,
Սակայն մրսում են արքաները նոր,
Վախենում են, որ կփլվեն անկախ,
Կիսաէլիտար ամրոցները կոր...

ՀՐԵՇՏԱԿԸ ՍՐՏՈՒՄ

Անտիկ իրերի առևտրական Իոսիֆն
Ամուսնացավ հարուստ վաճառականի
Դուստր Սիրան Բեժանովայի հետ,
Եվ հայ մշակույթը աշխարհին
Տվեց քեզ՝ օ՛ր, Փարաջանով
Սարգիս, եղբայր իմ հեզ...
Թիֆլիսի, մանթաշովյան շարքերի
Խորշերից հորդում էին գույներ,
Բույրեր և հնչյուններ ապշեցնող...
Լավագույն քո նկար-կադրերը
Վերարտադրում են հուշերը մանկության...
Թիֆլիսի ազգային լուսկոտներից
Կազմված կարպետը քոնն էր ընդմիշտ,
Դու ոսկերիչ, հնավաճառ, նկարիչ
Արտիստների ճակատամարտն էիր տանում:
Քո կյանքը դարձրիր բեմ փորձարարական,
Ուր ռեժիսորն ու արտիստը դու էիր:
Քո հորինած աշխարհը հիասքանչ է...
Օ՛ր, Փարաջանով՝
Մարդ հրեշտակը սրտում...
Փոքրիկ ծրարով մազերդ ուղարկեցիր
Ընկերոջդ.
Եթե չհասնեմ
Հայաստան, մազերս
Թաղիր հողում մեր...
Թիթեռի թևը, նուրբ ծաղկաթերթը
Ջարդարում էին կոլաժները, որ
Հասնում էին կնոջդ դատապարտյալի հեռավոր
Էտապներից:
Քեզ դիպել էր հրեշտակը սիրո
Իր նրբին թևով, երբ դեռ մանուկ էիր ժիր,
Եվ դա ընդմիշտ է.
Բոլոր-բոլոր ժամանակների համար:

«Գրական թերթ»-ի
2015 թվականի
մարտի 13-ի հա-
մարում տպագրվել
է բանաստեղծուհի
Անուշ Վարդանյա-
նի՝ Փարաջանովին
նվիրված «Հրեշ-
տակը սրտում»
բանաստեղծու-
թյունը:

ՄԵՐԳԵՅ, ՄԱՐԳԻՍ ՓԱՌԱՃԱՆՅԱՆ

Քոստոմները քեզ ասեցին՝ խաչ հանեցին
Ու նախանձի կոյուղու մեջ քեզ կեղտոտել փորձեցին
(Անոնք բոլոր՝ Արարատին նետուած քար):
Քեզ փնտրեցի Թիֆլիսի մեջ, այն թվին
(1989 փետրվար)՝

Եթե ցույցեր կային քաղաքին մեջ,
Հսկա ցույցեր հոգեհմա՝ ազատության կոչերով:
Այդ ցույցերուն մասնակից անձրևի տակ՝
Կգոչեին – Կմատլոպ Շենի ճիրիմի...
Տեղատարափ անձրևին տակ հասա այն տան՝
Պինդ փայտաշեն պատշգամբով, ուր ըսին թե
Կապրեյի դուն... հազար ափսոս:
Ներկա չէիր՝ սակայն հոգիիս մեջ մշտաներկա:
Կինոբեմի ճարտարապետ, երկիրը մեր՝
Հայաստանը, աշխարհներու բարձրացուցիր:
Թափառ կյանքով ապրեցար՝
Բայց Մայր Հողը քեզ սիրագործով գրկեց:
Դուն գործերովդ համբուրել ես
Թագադրված հուշարձանդ համբուրեցի...

2016 թվականին
Երևանում լույս է
տեսել հալեպահայ
գրող, հրապա-
րակախոս Թորոս
Թորանյանի
«Հուշերգություն»
բանաստեղծու-
թյունների
ժողովածուն,
որի 67-րդ էջում
Փարաջանովին
նվիրված բանաս-
տեղծություն կա:

ՅՈԹԵՐՈՐԳ ԵՐԿԻՆՔ

Պատի մեծ ժամացույցի փայտե տուփում Փարաջանովի տիկնիկն է ճոճվում, կախվել մնացել է օդում՝ սպիտակ սավանով պատված, ճախրանքի մեջ, իսկ թիկունքում հայելիներ են: Վարպետի վերջին կոլաժն է՝ «Փարաջանովը դրախտում»: Ստեղծվել է 1986 թվականին: Երբ նայում ես, ո՛չ երկինք, ո՛չ ընդերք. պարզապես երևանյան թանգարանի մի անկյունում տեղադրված Փարաջանովի դրախտը, հայելիների մեջ՝ նրա կողքին, նաև տեսնում ես քեզ: Անկախ այն բանից՝ նայողը սրիկա՞ է, թե՞ բարության մարմնացում, վարպետի դրախտում տեղ ունի: Սա արդեն հանճարի տարածքն է:

Ընդերքի ու երկնքի ժամանակները շոշափած անհատը մարդ արարածին տեսնում է երկնային կյանքում, ինչպես ինքն իրեն: Ներել-չներելու պայման չի դնում, դռները բաց են. հումանիստը չէ, մարդու մեջ արարչական գաղտնիքը տեսնողն է: Այդպիսին է հանճարների աստվածությունը երկնքի ու երկրի միջև՝ ուղղված մարդուն:

«Այն, ինչը Թբիլիսիում որպես անպետքություն նետվում էր մոռացությանը, նա հավաքել և ստեղծել է այս կոլաժները, որոնք միաժամանակ ազատության պոռթկում են, հավերժության գաղափար: Օժտված լինելով անսահման երևակայությամբ, բարձր ճաշակով և ներքին ազատամտությամբ՝ ստեղծել է այս ամենը: Կարող էր անպետք ապակուկտորի մեջ տեսնել աշխարհի գեղեցկությունը և մատուցել հենց այդպես. աշխարհի գեղեցկությունը հենց այս կտորի մեջ է», - ասում է Փարաջանովի թանգարանի գիտաշխատող Մարգարիտա Ազիզյանը:

Ժամանակի ընդգրկումը փարաջանովյան կոլաժներում և՛ առկա է, և՛ աներևույթ: Պարիսից մինչև իր կերպարը, սեփական սրտի կաթվածը, Հռոմուլոս և Հռեմոս առասպելական եղբայրների ողբերգությունից մինչև Անդերսենի ծննդյան օրը, արքայորդին, որ աստվածային պայծառացման հասավ, և հեքիաթի արքան, որ իրականությունը սև ու սպիտակ գույներով մեկնեց: Փարաջանովի արվեստում ժամանակը բաց է, պատմության հատվածները ինչպես ներս մտնում, այնպես էլ դուրս են գալիս՝ ազատ ու անկաշկանդ, սահմաններն ու գծերը աղոտվել ու ջնջվել են ինչպես երկրի վրա՝ շոշափելի աշխարհում, այնպես էլ երկնքում ու ընդերքի ժամանակի մեջ, և չկա կարմիր թելը, որից այն կողմ իբր չեն անցնում: Այդպիսին են բացարձակ անհատականության ընդգրկումը, ժամանակային և տարածական ընկալումը, ինչը և շոշափելի է, աներևույթ, անբռնելի:

«Փարաջանովի ֆիլմերի սցենարները մերժվել են, նրան չէին վստահում, քանի որ առանձնահատուկ էին, առանց երկխոսության և խորհրդանշաններով հարուստ ֆիլմեր էին, որոնք հասկանալի չէին շատ շատերին: Այդ չհասկացվածության մերժումը Փարաջանովին ստիպեց ստեղծել կոլաժներ՝ որպես ինքնաարտահայտման միջոց»:

Փարաջանովյան ֆիլմերից դուրս կա կինոժապավենի արձագանքն այլ եղջերափողի մեջ, որ կոչվում է կոլաժների ժամանակ ու ժամանակը կոլաժներով. այդ հսկայական ընդգրկումը՝ անցյալն ու ներկան, ուր հստակ

«Ազատա-
մտություն»
օրաթերթի 2009
թ. հունվարի
21-ի համարում
տպագրվել է
նկարիչ Ֆելիքս
Եղիազարյանի
(1947-2014)
Սերգեյ Փարա-
ջանովին նվիրված
«Յոթերորդ
երկինք» էսսեն:

նշված է ապառնին, տեղավորվել է երևանյան թանգարանում, որն ընդամենը երկհարկանի բնակելի տուն էր՝ նախատեսված մանեստրոյի համար: Երագում էր Երևանում ունենալ տուն, բակում՝ սիրամարգեր՝ փարաջանովյան ոճով ձևավորված: Սակայն չհասցրեց ինչպես շատ ոգեղեն, այնպես էլ այդ նյութերեն երազը իրական կյանքում շոշափել: Ասում էր՝ ես երեք հայրենիք ունեմ. ծնվել եմ Վրաստանում, արարել եմ Ուկրաինայում և պատրաստվում եմ մեռնել Հայաստանում:

Փարաջանովի ֆիլմերը համր չեն, պարզապես լուռ են: Նա չի դիմում բառի արվեստին, արտահայտվում է գույների, պատկերների լեզվով և ... փաստում է այն, ինչն անկարող է խոսքն ասել: Այդպես լուռ, սակայն բոլոր լեզուներով և ժամանակների բառային կոլորիտով խոսում են մանեստրոյի կոլաժները: Այն, ինչը արգելել են կինոժապավենով արտահայտել կամ մկրատել են, մարմնավորվել է կոլաժներում փշրված սպասքով, թղթերով, տիկնիկներով, երբեմն ամբողջական գործին ավելացրել է մի կերպար, մի դեմք, ստացվել է բոլորովին այլ՝ փարաջանովյան ըմբռնումներին բնորոշ կտավ, ինչպես «Խորհրդավոր ընթրիքը». այլ հայացքով է անհրաժեշտ դիտարկել հորիզոնին ճոճվող ժամանակը, հարկ է ծուռ մայես, որպեսզի շիտակը տեսնես:

«Հրեշտակի թևերը» կոլաժի մասին մա ասում էր, որ թևերից մեկն իրեն տվել է փառք, մեծություն ու ճանաչում, իսկ մյուսը՝ նսեմացում, նվաստացում և արժանապատվության ոտնահարում: Ահա այդ հրեշտակի թևերն են, որ խոնարհված են: Կոլաժներում իրեն ներկայացրել է մի թևով հուսահատված, մյուսը՝ կացնով հատված, կապկաված, թռիչքը կանխելու այլևայլ դավերով, բայց միևնույն է, մա ունեցել է ի վերուստ տրված թռիչքը, ճախրանքը: Եվ այս ամենն արարած Փարաջանովը լեզենդ է համարվում, իսկ ում շուրջը լեզենդ է պտտվում, մա անմահության վկայական է ստանում:

Մանեստրոն կոլաժներում կատարյալ է, որևէ թեթև ձեռք չի մկրատում տարածքը և չի կասեցնում ոգու ճախրանքը: Նրա բացարձակությունը ազատ է, լայնածավալ: Կոլաժները մանեստրոյի ամբողջական ժամանակն են, սահմանված անսահմանությունը: Ասում են՝ բանտում ճաշի ժամին հանկարծ վերցնում էր այլումինե գդալը, ծռմռում ու նետում սեղանին: Կալանավորները ձեռքից ձեռք են փոխանցում, քանի որ հստակ տեսնում են, որ արվեստի գործ է: Փարաջանովին և նույն անհունից բխածներին չեն բանտում, քանի որ նրանք, միևնույն է, ստեղծում են թե՛ ազատ ժամանակի մեջ, թե՛ ճաղերի հետևում:

Որպես չգրված կանոն՝ հանճարները մեծ են ժամանակից, ծավալուն, և ժամանակը նրանց հագով կարճ է ու համառոտ: Կյանքի կապանքների մեջ ու ճաղերի արանքում նրանք հասցնում են միայն իրենց բացարձակ անհատականության փշրանքները մատուցել մեզ մի տեսակ ծածուկ, ասես գաղտնագիր: Սակայն այդ փշրանքները ամբողջական հաց են, և այդ հացն ամեն անգամ կիսելիս ոչ թե պակասում է, այլ բազմապատկվում է: Թեպետ այն մեկ ընդհանուր անուն ունի՝ հաց, բայց անուն առ անուն ենք ըմբռնում, օրինակ, ինչպես այստեղ՝ «փարաջանովյան հաց»:

ՄԵՐԳԵՅ ՓԱՐԱԶԱՆՈՎԻ ՑՈՒՑԱՆԱԳԵՍԸ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ

Հաճույքով և հպարտության զգացումով եմ ողջունում իմ մեծ հայրենակից, ռեժիսոր և նկարիչ Մերգեյ Փարաջանովի (Սարգիս Փարաջանյան) ցուցահանդեսի բացումը Բեյրութի «Սյուրսոք» թանգարանում:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել Լիբանանում ֆրանսիական դեսպանությանը և մշակութային կենտրոնին՝ այս համատեղ ձեռնարկի համար, որը պերճախոս վկայությունն է երեք ժողովուրդների՝ հայերի, ֆրանսիացիների և լիբանանցիների դարավոր բարեկամության և մշակութային կապերի:

Փարաջանովին անվանում էին Մաեստրո և իրավամբ համարում XXI դարի ռեժիսոր: Փարաջանովի պլաստիկ արվեստը և նրա ֆիլմերը փայլուն կերպով հաստատում են այդ բնորոշումը:

Մաեստրոն հազվագյուտ հատկությունների և ցայտուն կուլտուրայի տեր մի անձնավորություն էր: Եվ այդ կուլտուրան երբեք չէր սահմանափակվում ազգային և էթնոտիկական շրջանակներում: Աշխարհը պատկանում էր նրան, և ինքը պատկանում էր ողջ աշխարհին:

Դրա կողքին նա միշտ կապված է եղել Հայաստանի հետ և պարծեցել է իր էթնոսով: Իր հողի նկատմամբ այդ սերն էր, որ հնարավորություն ընձեռեց նրան ստեղծելու իր անմահ գլուխգործոցը՝ «Նռան գույնը» ֆիլմը, որն իր ուրույն տեղն ունի ազգային և համաշխարհային մշակույթի գանձարանում:

Փարաջանովի արվեստը վաղուց՝ դեռևս նրա կենդանության օրոք, դուրս է եկել Հայաստանի սահմաններից: Նրա նորագույն գեղարվեստական լեզուն, պարադոքսալ մտքերը մեծ ազդեցություն են թողել և շարունակում են թողնել ոչ միայն ժամանակակից կինեմատոգրաֆի, այլ նաև արվեստի մյուս ժանրերի վրա:

Փարաջանովի մահվան տարում՝ 1990 թ., Երևանում բացված նրա թանգարանում, որը դարձավ մշակույթի սիրված օջախներից մեկը, ցայտուն կերպով երևում է Մաեստրոյի անվախճան աշխարհը: Այդ աշխարհում նկատելի տեղ է գրավում Արևելքը, որը Փարաջանովը սիրում և հասկանում էր: Նրա ֆիլմերից մի քանիսի սյուժեներում ընկած են արևելյան թեմաները: Գնահատելով մեծն Փարաջանովի տեղը և դերը համաշխարհային մշակույթում՝ կարելի է ասել, որ դրանք ճշտորեն համապատասխանում են նրա ազգանվան ծագումնաբանությանը: Փարաջանովը պատուհան է դեպի աշխարհ, պատուհան ժողովուրդների և մշակույթների միջև:

Սարգիս Փարաջանովը արտահայտել է զարմանալի և խորիմաստ մի միտք. «Արվեստագետը պետք է իմանա, թե երբ է մահանալու»: Մաեստրոն չի մահացել: Նրա ոգին և արվեստը անցան անհունության գիրկը և անմահացան:

Բեյրութ, 2000 թ.

2010 թվականին
Երևանում լույս է
տեսել արտակարգ
և լիազոր
դեսպան Արման
Նավասարդյանի
«Դիվանա-
գիտություն»
աշխատությունը,
որի 324-րդ
էջում «Մերգեյ
Փարաջանովի
ցուցահանդեսը
Բեյրութում»
հոդվածն է:

ԵՎԱ ՄԻ ՓԱՐԱՋԱՆՅԱՆ⁸¹

Որ ավելի շատ հասկացություն է, քան անձնավորություն:

Մի խենթ, որ վարդերի ճամփան մի կողմ թողած, բոբիկ ոտքերով քայլում է, քայլում կրակների, փշերի վրայով:

Մի սուրբ, որ անդադար ճգնում է խաչվել ու խաչվել:

Մի արտիստ, որ խաղում է անընդհատ, խաղում է բոլորի համար և ամենից շատ և նախ և առաջ հենց իր համար:

Մի մահկանացու, որ երբ էլ և ինչպես էլ մահանա, միևնույն է, ամմահ է:

Մի երջանիկ, որ միակն է, որ անդադար գնում է դեպի բարձունքը, անդադար ցած իջնելով:

Մի իմաստուն, որի նախ և առաջ ոչ թե ուղեղը, այլ հոգին է խելոք:

Մի զգայուն շնչավոր, որի ոչ թե հոգին, այլ ուղեղն է զգայուն:

Մի հրաշագործ, որ ոչնչից կարող է կերտել ամեն ինչ:

Հավերժական մի ճամփորդ, որի ճամփորդությունը ոչ մի պահ ճանապարհ չի ունեցել:

Մի զարմանալի բնավորություն, որ աշխարհին ընկեր լինելով, կարողացավ չունենալ ոչ մի ընկեր:

Մի մանուկ, որ հազար անգամ ծերացավ, բայց միշտ մնաց երեխա:

Մի ծերուկ, շատ ծերուկ շնչավոր, որը հազար անգամ մանկացավ, բայց միշտ մնաց ծեր:

Միակը, որի հետ ամենից շատ եմ ուզեցել շփվել, բայց, ավաղ, ամենքից քիչ եմ հանդիպել:

Միակը, որ ինձ ամենից ճիշտ է ճանաչում, չնայած ոչ մի պահ նրան չեմ բացվել:

Արվեստագետ, որի արվեստը խորթ է ինձ, բայց հպարտորեն խոնարհվում եմ նրա առաջ:

Ռեժիսոր, որ ավելի պոետ է, քան նկարիչ, դերասան, հնէաբան, հռետոր, իրավաբան, փիլիսոփա և քիչ, ամենից քիչ՝ ռեժիսոր:

Մի ուսուցիչ, որ չունեցավ ոչ մի աշակերտ, բայց ընդօրինակողներին թիվ ու դադար չկա:

Ջորեղ մի բնավորություն, որ ցավալիորեն փլվում է, փլվում ամեն պահ:

Մի մեծ շնչավոր, որը որքան էլ հուշարձանանա, մնալու է ամենից ավելի կենդանի:

Իմ բոլոր, բոլոր ծանոթներից ամենաերեսառած և ամենից շատ տանջված հավերժական մի արվեստագետ:

Մի անհանգիստ կատակասեր, որի լեզվին միաժամանակ տեղ եմ գտնում և՛ թույլը, և՛ մեղրը:

Մի իսկական թիֆլիսեցի՝ նրա և՛ կինտոն, և՛ դարաչոխելին:

Սերգեյ Փարաջանյան:

Սերգեյ Փարաջանյանը
նվիրված ծոցերգ
ուճի նաև մեր
լավագույն արվեստագետներից
մեկը՝ Դենրիկ
Մալյանը: Նրա
«Եվա մի Փարաջանյան» արձակ
բանաստեղծությունը տպագրվել է 1990թ.
Փարաջանյանի
ողբերգական
մահվանից
ամիսներ անց:
Կարդալով այն՝
համոզվեցի, որ Դ.
Մալյանը ոչ միայն
տաղանդաշատ
ռեժիսոր է, այլև
մեր ոսկեդեմիկ
հայերենին
գերազանց
տիրապետող
նրբաճաշակ
արձակագիր:

⁸¹ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1990 /4, էջ 55:



ՎԵՐՁԱՔԱՆ

Մի առիթով հանճարեղ գրող Հայնրիխ Հայնեն ի լուր աշխարհի խոստովանել է. «Իմ սրտով է անցել համաշխարհային մեծ ճեղքվածքը: Ահա թե ինչու ես գիտեմ, որ մեծ աստվածներն ինձ առատորեն շնորհներ են պարգևել ուրիշ մարդկանց համեմատությամբ և արժանացրել բանաստեղծի մարտիրոսական պսակի»:

Սերգեյ Փարաջանովին մույնպես մեծ աստվածները առատ ընծաներ էին պարգևել: Դրա մասին տեղյակ էր նաև ինքը՝ մեծանուն արվեստագետը, այլապես չէր գրի. «Նախանձեցի գեղեցիկներին, դարձա հրաշագեղ, նախանձեցի տաղանդավորներին, դարձա հանճարեղ»:

Փարաջանովը մի առիթով ասել էր, որ այնքան է ցնցված Ֆելիկսի մտածողությամբ, որ չի ուզում կարդալ նրա մասին գիրքը, թե նա ինչ է մտածում, ինչ է ասում: Այդուհանդերձ, քանի որ Փարաջանովը բազում անգամներ բանավոր թե գրավոր խոստովանել է իր և Ֆելիկսի հոգեհարազատությունը⁸², մեջբերենք տպավորիչ մի պատկեր, որով և ավարտվում է Ֆելիկսի գիրքը. «Այդ պահին ինձ մոտեցան երեք երեխա և ինքնագիր խնդրեցին: Սկսեցի թուղթ ու գրիչ փնտրել և հանկարծ զգացի, թե ինչպես մեկը քաշեց թևիցս: Շրջվեցի և տեսա վարդագույն թշկներով ու խարտյաշ հյուսիկներով մի աղջնակի: Երեխային հատուկ անկեղծ ու նույնիսկ փոքր-ինչ դաժան անմիջականությամբ նա ինձ ասաց. «Այս ի՞նչ է, Ֆելիկս, երբեք չե՞ս փոխվում»: Եվ, իր իսկ հարցի հանդեպ լիակատար անտարբերություն ցուցաբերելով, իր հիասթափանչ երկնագույն աչիկներով մայեց իմ կողքով, անորոշ ուղղությամբ...»⁸³:

Եթե Ֆելիկսի նկարագրած այդ վարդագույն թշկներով ու խարտյաշ հյուսիկներով աղջնակը տեսներ Փարաջանովին նրա կյանքի վերջին տարիներին, ապա վստահ եմ, որ, առանց հանճարեղ կինոռեժիսորի թևը քաշելու, մայելով այդ անսահման տառապած ծերունու դեմքին, կասեր. «Ի՞նչ է պատահել: Ո՞վ է քեզ նեղացրել: Երբ վերջին անգամ տեսա քեզ, այնքան էլ ծեր չէիր: Դու շատ, շատ ես փոխվել...»:

⁸² «Գարուն», 1970, № 1, էջ 81:

⁸³ **Ֆ. Ֆելիկսի**, Կինոարարում, Երևան, 1988, էջ 247:

Իրոք, Փարաջանովը կյանքի վերջին տարիներին շատ էր փոխվել: Բանտերում անցկացրած տառապաշաղ տարիները, իր արվեստի ու իր նկատմամբ դաժան ու ստորացնող վերաբերմունքը նրա տառապանքը հասցրին առավելագույնի: Այդ տառապանքը Փարաջանովը վերապրեց այլ կերպ, ոչ սովորական մարդկանց նման: Տառապեց, որպեսզի անցնի այն ճանապարհը, որը, ինչպես իռլանդացի հանճարեղ գրող Օսկար Ուայլդն է նշել, «տանում է դեպի արվեստի մեծագույն հայտնաբերումները»⁸⁴:

Նորելյան մրցանակից հրաժարված, համաշխարհային հռչակի արժանացած բանաստեղծ և արձակագիր Բորիս Պաստեռնակը (1890-1960) մահվանից մեկ օր առաջ իր գրչակից ընկերներին գրել է. «Իմ ամբողջ կյանքը միայն մենամարտ է եղել տիրապետող և հաղթանակած գռեհկության դեմ՝ հանուն ազատ ու կենսաթրթիռ մարդկային տաղանդի: Դրա վրա ծախսվեց իմ ողջ կյանքը»⁸⁵:

Եթե Բորիս Պաստեռնակի՝ վերը բերված տողերը վերագրենք Սերգեյ Փարաջանովին, կարծում եմ, արդարության դեմ մեղանշած չենք լինի:

⁸⁴ **Օ. Ուայլդ**, Երկեր, Երևան, 1980, էջ 437:

⁸⁵ **Բ. Պաստեռնակ**, Դոկտոր Ժիվագո, Երևան, 1990, էջ 701:

ՄԵՐԳԵՅ ՓԱՐԱԶԱՆՈՎԻ ԵՎ ՆՐԱ ՄԱՍԻՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

1. **Ա. Ա.**, Ռեժիսորի զինակիցները, «Էկրան», 1969, № 7, էջ 3:
2. **Աբրահամյան Լ.**, Այց կինոռեժիսորի արվեստանոց, որը տոնահանդեսի վերածվեց, «Մշակույթ», 1990, № 1, էջ 24-33:
3. **Աղամյան Ա.**, Ֆիլմ, որ դեռ չի նկարահանվել, «Սովետական դպրոց», 1988, մարտի 31:
4. **Աղամյան Ա.**, Նուռը, որն ունի սիրո գույն, «Հայաստանի Հանրապետություն», 1999, մայիսի 6:
5. **Աղամյան Ա.**, Ներսուն և դրսուն, «Հայաստանի Հանրապետություն», 1991, դեկտեմբերի 11:
6. **Ազատյան Ա.**, Անառողջ ազդեցություն կամ հիվանդագին ու չարաշահված տեսարաններ, «Նորք» ամսագիր, 2009, № 1, էջ 151-155:
7. **Ազրոյան Լ.**, Ժամանակի հետահայաց ուղիներում, Երևան, 2008, 320 էջ:
8. **Ալազոյան Գ.**, Սա Փարաջանյանն է, «Սովետական Հայաստան», 1967, օգոստոսի 6:
9. Յավուրյան Ա., Երևան, 1987, 29 էջ:
10. Յավուրյան Ա., (մահախոսական), «Կրթություն», 2007, նոյեմբերի 7:
11. **Ալեքսանյան Ն.**, Կենտրոն, որ հարազատ է Փարաջանովի ոգուն, «Ազգ», 1996, օգոստոսի 3:
12. **Ալեքսանյան Ն.**, Հավաքվեցին Փարաջանովի տանը, «Հայաստանի Հանրապետություն», 1998, օգոստոսի 18:
13. **Ալեքսանյան Ն.**, Պոետիկ կինոյի փառատոն Երևանում, «Հայաստանի Հանրապետություն», 1998, հունվարի 16:
14. Ակնարկներ Փարաջանովի մասին, «Գիտություն», 1998, մարտի 13:
15. **Այվազյան Ա.**, Օբյեկտիվ-18, Երևան, 1986, 118 էջ:
16. **Այվազյան Ա.**, «Նռան գույնը» Հայաստանում պիտի ստեղծվեր, «Հայաստանի Հանրապետություն», 2004, հունվարի 17:
17. **Այվազյան Ա.**, Եղած-չեղածը մի կյանք, Երևան, 2005, էջ 256-263:
18. Այվազյանական ընթերցումներ, Երևան, 2012, էջ 50:
19. **Աղասյան Ա.**, Կարեն Բալանթար: Տոհմիկ մտավորականն ու վաստակաշատ կինոգետը: Տե՛ս **Քալանթար Կ.**, Ակնարկներ Փարաջանովի մասին, Երևան, 2012, էջ 257-261:

20. **Աղասյան Ա.,** ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը 50 տարում, «Պատմաբանասիրական հանդես», 2009, № 1, էջ 288-301:
21. **Անգալադյան Ռ.,** Փարաջանով: Ստվերի և գույնի կոլաժ մեկ մարդկային սրտի գունածավարում, «Գարուն», 2001, ք. 6, էջ 35-42:
22. **Անգալադյան Ռ.,** Մշակույթը ոչ միայն ապրանք է, այլև ազգային արժանապատվություն, «168 ժամ», 2009, հունվարի 15-16, էջ 8:
23. **Անգալադյան Ռ.,** Ինչպես դարձանք չնկարահանված ֆիլմի մասնակից, «Սովետական արվեստ», 1988, № 5, էջ 18-19:
24. **Անգալադյան Ռ.,** Հայկական կինոն՝ համաշխարհային կինեմատոգրաֆի համատեքստում, «168 ժամ», 2008, մայիսի 15-16, էջ 5:
25. **Անգալադյան Ռ.,** Հայկ Գրիգորյանի էքսլիբրիսները կամ մեր նվաճումների նոր անունը, «Գարուն», 2004, № 2, էջ 94-96:
26. **Անգալադյան Ռ.,** Գնահատելու ունակությունը, «168 ժամ», 2010, մայիսի 27-28, էջ 5:
27. **Անդրանիկյան Ս.,** Հայկական գուգահեռներ. Փարաջանովը ինչպես որ կար, «Փակագիծ», 2004, մայիսի 14:
28. **Անդրանիկյան Ս.,** Նկարիչը կինոյում, «Կինոարվեստ», 2006, № 2, էջ 22-23:
29. **Անդրանիկյան Ս.,** Ինչպես նկարահանվեց «Նռան գույնը», «Կերպարվեստ», 2004, ք. 3, էջ 6:
30. **Անդրանիկյան Ս.,** Փարաջանովը՝ նկարիչ, «Կերպարվեստ», 2007, № 1, էջ 18-19:
31. **Անդրանիկյան Ս.,** Փարաջանովյան ուրվանկարներ, «Կերպարվեստ», 2004, ք. 3, էջ 6:
32. «Անգուգական Փարաջանովը» ցուցահանդեսը Փարիզում, «Ազգ», 2007, փետրվարի 14:
33. **Աննենսկի Լ.,** Սերգեյ Փարաջանովի մտքերն ու գույները, «Գարուն», 1973, № 10, էջ 47-52:
34. Անոնք, մենք և Պարաճանովը, «Յառաջ», Փարիզ, 1990, հուլիսի 28:
35. **Աշուդյան Կ.,** Յակով Իվանի Խաչիկյան, «Գրական քերթ», 2015, մարտի 27:
36. **Ասրեսյան Տ.,** Անհետացած քաղաքակրթության ժողովրդական արտիստուհին (Ականավոր դերասանուհի Սոֆիկո Միխայիլի Ճիաուրելու (1937-2008) հիշատակին), Cinemart, 2008, ք. 3:
37. **Առաքելյան Ա.,** Հերոսը և միջավայրը: Հայ կինոյի անցած ճանապարհից, «Կանթեղ» ամսագիր, 2003, № 2:
38. **Առաքելյան Ս.,** Սայաթ-Նովան կինոյում, «Էկրան», 1987, № 9, էջ 4-6:

39. **Առաքելյան Վ.**, Արինի ժպիտը (Հեյդար Ալիև և Սերգեյ Փարաջանովը 1968-ին հանդիպել են Նախիջևանում: Հ.Ալիևը արգելել է Փարաջանովին նկարահանումներ իրականացնել Հին Ջուղայի գերեզմանատանը), «Ազատամտություն», 2009, հունվարի 10, էջ 8:
40. **Առաքելյան Վ.**, Պանթեոն, առասպել և իրականություն, «Ազատամտություն», 2009, մարտի 3, էջ 6:
41. **Ասատրյան Հ.**, Կարլովի Վարիում հաղթեց իտալական կինոն, «Ազգ», 2004, հուլիսի 13:
42. **Ասատրյան Ն.**, Պոետիկ կինոարվեստի քուրմը, «Վրաստան», 2009, հունվարի 24, էջ 5:
43. **Ասատրյան Հ.**, «Փարաջանով» ֆիլմի համաշխարհային պրեմիերան տեղի ունեցավ Կառլովի Վարիի միջազգային կինոփառատոնում, «Ազգ», 2013, հուլիսի 9:
44. **Ասլանյան Ա.**, Փարաջանովի յուրօրինակ նվերը, «Եթեր», 2006, մայիսի 15-21:
45. **Ասլանյան Թ.**, Կինոբեմադրիչը սիրում էր գուշակություններ անել, «Հայաստանի գրուցակից», 2010, № 1, էջ 21:
46. **Ավագյան Ա.**, Սերգեյ Փարաջանովի նվերը Տոնինո Գուերային, «Հայաստանի Հանրապետություն», 2010, մարտի 17:
47. **Ավետյան Ն.**, Սի սիրո պատմության հետքերով, «Ժամանակ», 2007, մայիսի 9:
48. **Արաբաջյան Ս.**, Սերգեյ Փարաջանով, «Էլդորադո», 2004, հունվարի 15:
49. Արևելյան ինքնության անգիջող հեքիաթասացը, «Յառաջ», Փարիզ, 1990, օգոստոսի 31:
50. **Արայան Վ.**, Ընդամենը, Երևան, 2009, էջ 250:
51. Արևային քաղաքի լույսն ու ստվերը, «Անդին» ամսագիր, 2014, № 7, էջ 15-20:
52. «Արվեստը թույլ չի տալիս մեզ անասնանալ» (Փարաջանովի տուն-թանգարանի տնօրենի հարցազրույցը Նունե Հախվերդյանի հետ), «168 ժամ», 2008, նոյեմբերի 22:
53. **Արտաշես Արամ**, Սա է իմ հայրենիքը (Ռուբեն Գևորգյանցի ծննդյան 60 ամյակի առթիվ), «Ազգ», 2007, փետրվարի 23, էջ 6:
54. **Արփեն Ա., Անդրանիկյան Ս.**, «Հայ արվեստ», 2007, № 3-4, էջ 44:
55. **Բաբայան Գ.**, Դերասանուհին և Փարաջանովը, «Փակագիծ», 2006, փետրվարի 8:
56. **Բաբուռյան Հ.**, Նահանջ... դարձյալ առանց երգի, «Իրավական մշակույթ», 2008, մայիսի 31:

57. **Քաղալյան Ջ.**, Ես մահացա մանուկ հասակում, «Վրաստան», 2009, հունվարի 31, էջ 5:
58. **Քալայան Ռ.**, Սրտի ցավով ընդունեցի... «Երեկոյան Երևան», 1990, հուլիսի 25, էջ 3:
59. **Քալայան Ռ.**, «Փարաջանովի մասին ֆիլմ կարող է նկարել միայն Կուստուրիցան, «168 ժամ» 2013, նոյեմբերի 21, էջ 5:
60. **Քախչինյան Ա.**, Ֆաինա Ռանսկայան և հայերը, «Հայաստանի Հանրապետություն», 2001, դեկտեմբերի 4:
61. **Քախչինյան Ա.**, Հայերը համաշխարհային կինոյում, Երևան, 2004, 685 էջ: Փարաջանովի մասին տե՛ս էջ 16, 336, 337, 484, 626:
62. **Քախչինյան Ա.**, Անդադրում մտքի տեր, անդադրում մարդը: Կինոգետ Սուրեն Հասմիկյանի 80 տարին, «Ազգ», 2015, մարտի 20:
63. **Քախտամյան Ա.**, Այց կինոռեժիսորի արվեստանոց, «Երեկոյան Երևան», 1998, հունվարի 26:
64. **Քախչինյան Ա.**, Կոլաժային Վենետիկ՝ կոլաժների մեծ վարպետին, «Ազգ», 2014, հոկտեմբերի 3:
65. **Քակունց Հ.**, Փարաջանովի թանգարանը ևս դրամի կարիք ունի, «Այբֆեն», 2003, սեպտեմբերի 6:
66. **Քայբուրթյան Վ.**, Մարդը XXI դարից, «Խորհրդային Վրաստան», 1990, հուլիսի 26:
67. **Քարխուդարյան Վ.**, Փարաջանովի առաջին կնոջը եղբայրները սպանեցին, «Իրավունք», 2004, հունվարի 15:
68. **Քարխուդարյան Վ.**, Անազատ երկրի ազատ մարդը, «Իրավունք», 2001, մարտի 10:
69. **Քարսեղյան Լ.**, Փարաջանովի ֆիլմին ձեռք տալն անբարոյականություն է, «Հայկական ժամանակ», 2001, հոկտեմբերի 2:
70. **Քարսեղյան Օ.**, Սախարովի անվան հրապարակը Երևանում, «Երևան 7 օր», 2007, հունիսի 16-19:
71. Բացվել է Փարաջանովի ցուցահանդեսը, «Ազգ», 1995, նոյեմբերի 16 (ստորագրություն՝ Ն. Տ.):
72. **Քոչաջյան Ջ.**, Նա ֆենոմեն է, «Նոր հանդես», 2007, դեկտեմբեր, էջ 62:
73. **Քոնդարենկո Ա.**, Փարաջանովի մասին կուզենայի խոսել, «Կինո-տեսադ», 1996, № 3 (նոյեմբեր):
74. **Քերբեղյան Լ.**, Դարձյալ «Նռան գույնը» ֆիլմի մասին, «Հանդես գրականության և արվեստի», Թեհրան, 2005, ք. 12:
75. **Քեքարյան Մ.**, Սայաթ Նովան սպասում է, «Առավոտ», 2001, սեպտեմբերի 29:

76. **Բլեյման Մ.**, Նռան գույնը, «Էկրան», 1971, № 2-3, էջ 15:
77. **Բոլոնեյզի Ջ.**, Աշիկ Կերիբ: Սերգեյ Փարաջանովի հիշատակին, Վենետիկ, 1991, 118 էջ (իտալերեն):
78. **Բոյկո Ս.**, Վրաստանի, Փարաջանովի և արվեստի մասին, «Խորհրդային Վրաստան», 1990, նոյեմբերի 6:
79. **Բուրին Ս.**, Հավերժության քննիծաղը, «Էկրան», 1990, № 12, էջ 2:
80. **Գաբրիելյան Ա.**, Սերգեյ Փարաջանով-85, «Ազատամտություն», 2009, հունվարի 9, էջ 5:
81. **Գաբրիելյան Ա.**, Վախճանվել է հայտնի նկարչուհին (Գայանե Խաչատրյանի մահվան առթիվ), «Ազատամտություն», 2009, մայիսի 5, էջ 8:
82. **Գազդա Յ.**, Անդրեյ Տարկովսկու գիշերահավաքը, «Առագաստ», Գլենդել, 2003, հոկտեմբեր:
83. **Գազդա Յ.**, Սերգեյ Փարաջանովի մոտ, «Էկրան», 1971, № 1:
84. **Գալոյան Ս.**, Նա շատ բան տարավ մեզանից, «Ազգ», 1999, փետրվարի 18:
85. **Գալոյան Ս.**, Թակարդներ, Երևան, 2009: Գրքի 264-303-րդ էջերը նվիրված են Սերգեյ Փարաջանովին:
86. **Գալոյան Ս.**, Օրհնված եք դուք սեր, ցնորք ու ցավ, Երևան, 2007, էջ 261:
87. **Գալոյան Ս.**, Անվերջ բացահայտվող Փարաջանովը, «Ազգ», 2001, նոյեմբերի 16:
88. **Գալստյան Լ.**, Արվեստը բնորոշվում է արվեստագետով, «168 ժամ», 2009, մայիսի 12-13, էջ 10:
89. **Գալստյան Սերգեյ**, Անուններ էկրանի վրա, Երևան, 1984, 184 էջ:
90. **Գալստյան Սերգեյ**, Հրաշքներ, որ կատարվում են ամեն օր, Երևան, 1989, 112 էջ:
91. **Գալստյան Սերգեյ**, Սոֆիկո Ճիաուրեյին է..., «Էկրան», 2007, № 3, էջ 5:
92. **Գալստյան Սերգեյ**, Ֆրունգե Դովլաթյան, Երևան, 2007:
93. **Գալստյան Սիրանույշ**, Այլաբանության դրսևորումները հայ կինոյում, «Առանձնատիպ հայկական հայագիտական հանդեսի», 2004, ԻԴ հատոր, էջ 311-330:
94. **Գալստյան Սիրանույշ**, Հայտնի և անհայտ հայ կինոն: Հին ու նոր գնահատականներ, «Իրատես de facto», 2014, դեկտեմբերի 5, էջ 13:
95. **Գալստյան Սիրանույշ**, Այլաբանությունը հայ կինոարվեստում: Ար-

վեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2007, 22 էջ:

96. **Գալստյան Սիրանույշ**, Գեղեցկությանը սիրահարված մարդը. Սերգեյ Փարաջանով - 75, «Ազգ», 1999, մայիսի 11, էջ 6:
97. **Գալստյան Սիրանույշ**, Սերգեյ Փարաջանով. ինչպես առաջին անգամ, «Սինեմարտ», Երևան, 2008, էջ 35:
98. **Գալստյան Սիրանույշ**, Սերգեյ Փարաջանով: Այլաբանություն և այլախոհություն, «Հայ արվեստի հարցեր», Երևան, 2006, № 1, էջ 85-95:
99. **Գալստյան Սիրանույշ**, Իրականության «բազմախոստում» իրերը և նրանց շարժումը կինոյում, «Արվեստ և ժամանակ: Հայացք Գյումրուց», 2007, № 2-3, էջ 27-32:
100. **Գալստյան Սիրանույշ**, Հայացք մեր կինոյին: Պատմությունը և ներկան, Երևան, 2011, 238 էջ:
101. **Գալստյան Վ.**, Բալետն աշխարհի ամենագեղեցիկ արվեստն է, «Կինո», 2016, № 2, էջ 2-7: Արծվի Բախչինյանի հարցազրույցը Վիլեն Գալստյանի հետ:
102. **Գալստյան Վ.**, Մոռացված արվեստ, Երևան, 2006, 120 էջ:
103. **Գալուստյան Ա.**, Հայելի, Երևան, 2000, 200 էջ:
104. Գայանեն՝ Թիֆլիսից, «168 ժամ», 2009, հոկտեմբերի 10:
105. **Գասպարյան Ա.**, Սովետական կինոյի 60 տարին, «Սովետական Հայաստան», 1979, հուլիսի 20, էջ 4:
106. **Գասպարյան Ա.**, Փարաջանովին նվիրված հուշ-երեկո, «Հայաստան», 1991, մարտի 5:
107. Գեղարվեստական ֆիլմերի կատալոգ, Երևան, 1977, 158 էջ:
108. **Գևորգյան Ա.**, Աշխարհի գեղեցկությունից պակասեց ինչ-որ բան, «Եթեր», 2003, դեկտեմբերի 8-14:
109. **Գևորգյան Լ.**, Արտավազդ Փելեշյան, Սերգեյ Փարաջանով, «Հայք», 1993, հունիսի 12:
110. **Գևորգյանց Ռ.**, Մեր կինոն պետք է հաստատի իր հասարակական կարևորությունը, «Արվեստ», 1991, № 7, էջ 2-6:
111. **Գևորգյանց Ռ.**, Հրաշագործի աշունը, «Մենք մեր մասին», 2009, № 1, էջ 13-14:
112. **Գևորգյանց Ռ.**, Փարաջանով. կոլաժ երկուսի համար, Երևան, 2013, 212 էջ:
113. **Գյողակյան Ս.**, Մաեստրո տիեզերքը, «Ավանգարդ», 1992, հունվարի 14:

114. **Գյողակյան Ս.**, Ես ինձ արտահայտեցի մինչև վերջ, «Առավոտ», 1995, դեկտեմբերի 9:
115. **Գոլդշտեյն Լ.**, Սերգեյ Փարաջանովի կինոաշխարհը, «Կոմունիստ», Բաքու, 1988, հոկտեմբերի 4:
116. **Գրիգորյան Լ.**, Հրաշագործը Թիֆլիսից, «Էկրան», 1989, № 3, էջ 6-8:
117. **Գրիգորյան Լ.**, Ինչո՞վ է ամուր հայրենի բերդը, «Խորհրդային Հայաստան», 1990, հուլիսի 25, էջ 3:
118. **Գրիգորյան Լ.**, Բեմադրող նկարիչ Միքայել Առաքելյան, «Կերպարվեստ», 2006, № 2, էջ 36:
119. **Գրիգորյան Կ.**, Կինոյի «Հրաշամանուկը» (ակնարկ ֆրանսիական ժամանակակից կինոյի լեգենդներից մեկի՝ Լեոս Կարաքսի մասին, ով 2007 թ. Երևանում կայացած «Ոսկե ծիրան» կինոփառատոնի պատվավոր հյուրն էր, «Հայաստանի Հանրապետություն», 2007, հունիսի 12:
120. **Գրիգորյան Կ.**, «Ժամանակի սուրբը»՝ Սերգեյ Փարաջանով, «Հայաստանի Հանրապետություն», 2009, հունվարի 10:
121. **Գրիգորյան Կ.**, «Ոսկե ծիրանի» նոր ֆիլմերն ու ծրագրերը, «Հայաստանի Հանրապետություն», 2009, հունիսի 11, էջ 4:
122. **Գրիգորյան Ս.**, Մոռանում եմ ինձ պարտադրել, որ տարեց մարդ եմ (Տիգրան Մանսուրյանի ծննդյան 70-ամյակի առթիվ), «TV-ալիք» շաբաթաթերթ, 2009, մայիսի 25-31, էջ 3:
123. **Գուբենկո Ն.**, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության կոլեկտիվին, «Խորհրդային Հայաստան», 1990, հուլիսի 25:
124. **Գուգուշվիլի Ե.**, Հալածականը, «Վրաստան», 1991, հուլիսի 25:
125. **Գուլակյան Հ.**, Դարը մեր մեջ, մենք՝ դարի, Երևան, 2006, էջ 5-14:
126. **Գուերա Տ.**, Փարաջանովի թաղումը (արձակ բանաստեղծություն), «168 ժամ», 2008, նոյեմբերի 13:
127. **Գուրգադյան Գ.**, Տիեզերքը և մարդը, Երևան, 2009, էջ 148:
128. **Գևորգյան Ռ.**, «Փարաջանով. վերջին կոլաժը» ֆիլմի պատմությունը, «Հայաստանի Հանրապետություն», 1999, մարտի 4:
129. **Դանելիա Գ.**, Փարաջանովը ինձ համար մրցանակ էր սահմանել, «Հայաստանի գրուցակից» շաբաթաթերթ, 2009, փետրվարի 7:
130. **Դանիել Երաժիշտ**, Ստեփան Լուսիկյան, Երևան, 2012, էջ 5:
131. **Դանիելյան Մ.**, Փարաջանովը Ամերիկայում, «Հայաստանի Հանրապետություն», 1999, դեկտեմբերի 11:
132. **Դանիելյան Ս.**, Բրավո վրացիներին, «Առավոտ» 2014, հուլիսի 12, էջ 7:

133. **Գաշտոյան Ռ.**, Առաջին հանդիպումը Սերգեյ Փարաջանովի հետ, «Պոլիտեխնիկ», 2004, հոկտեմբերի 30:
134. **Գավթյան Վ.**, Լեզիտիմ կատակներ լրջանալու պահին, Լոս Անջելես, 2012, էջ 138:
135. **Գաքեայան Կ.**, Պարաճանով Սուրբ Ղազարին մեջ, «Յառաջ», Փարիզ, 1988, սեպտեմբերի 16:
136. **Գարբինյան Հ.**, Հայ թառարվեստի կադրին, «Երաժշտական Հայաստան», 2006, № 4, էջ 77:
137. **Գարչինյան Ս.**, Թիֆլիս: Հայկական ճեպանկարներ, Երևան, 2013, էջ 156, 180:
138. **Դյոմին Վ.**, Գնաս բարով, վարպետ, «Երեկոյան Երևան», 1990, հունիսի 26:
139. **Դոլուխանյան Ա.**, Շարլ Ազնավուրը բանաստեղծ, Երևան, 2002, էջ 83:
140. **Դովլաթյան Մ.**, «Նռան գույնից» հետո ես «Հայֆիլմ» կինոստուդիայում ոչ մի առավել հաջողված ֆիլմ չեմ տեսել, «Արվեստ», 1990, № 3, էջ 23:
141. **Դովլաթյան Ֆ.**, Փարաջանովը Սայաթ-Նովային մաքրեց աշուղությունից, «Գարուն», 1970, № 1, էջ 70-72:
142. **Դովլաթյան Ֆ.**, «Նռան գույնը» տարբեր ընկալումներով, «Բազին», Բեյրութ, 1974, № 4, էջ 50-51:
143. Դպրոցական մեծ հանրագիտարան, գիրք 2, հ.1, Երևան, 2009, էջ 457:
144. **Դումիտրու Մ.**, Սերգեյ Փարաջանովը և հուզական վիճակի ազատ արձակումը, «Ազգ» օրաթերթ, 2002, նոյեմբերի 26, էջ 6: Ռումիններեն բնագրից հայերեն թարգմանությունը՝ Մ. Մանուկյանի: Դումիտրուի նշված հոդվածը ռումիներենով 1973-ին լույս է տեսել «Արգես» թերթի 2-րդ համարում:
145. **Եղիազարյան Ֆ.**, Յոթերորդ երկինքը (էսսե՝ նվիրված Փարաջանովին), «Ազատամտություն», 2009, հունվարի 21:
146. **Եղիազարյան Ֆ.**, Ժամանակը կոլաժների մեջ, «Ազատամտություն» թերթ, 2009, մարտի 12, էջ 7:
147. Ես ներքին թռիչքի մարդ եմ (հարցազրույց Ռոման Բալայանի հետ), «Մենք մեր մասին», 2009, № 1, էջ 43-47:
148. **Եսայան Խ.**, Շատ մեծ տպավորությունների տակ եմ Ս. Փարաջանյանի «Նռան գույնը» ֆիլմից, «Էկրան», 1969, № 10, էջ 3:
149. **Եսայան Ա.**, Սարգիս Փարաջանյանց: Կյանքի չարն ու բարին կշռողը, «Հայոց աշխարհ», 1999, մայիսի 5:

150. Երագում էր «Արա Գեղեցիկ» և «Սասունցի Դավիթ» նկարահանել, «Հայաստանի աշխատավորուհի», 1990, № 7, էջ 28:
151. **Երեմյան Ռ.**, Սերգեյ Փարաջանով («Մի քանի ակնթարթ Ջոկոնդայի կյանքից» շարքից), «Դպիր» ամսագիր, 1995, № 9-10, էջ 50-54:
152. **Երեմյան Ս.**, Ս. Փարաջանյանը զարմանալիորեն ճշմարտացի է, «Էկրան», 1969, № 12, էջ 4:
153. **Ջախարյան Ա.**, Հարցազրույց Ս. Կարեյանի հետ, «Հայկական ժամանակ», 2010, ապրիլի 6:
154. **Ջախարյան Ա.**, Պետք է գար ու ասելիքն ասեր, «Հայկական ժամանակ», 2014, մարտի 26, էջ 6:
155. **Ջարգարյան Յ.**, Այդ Իգիթյանը..., Երևան, 2008, 427 էջ:
156. **Ջաքարյան Ռ.**, Չհատուցված մեղքի զգացումով, «Գարուն», 1999, № 6, էջ 27-28:
157. **Ջաքարյան Ռ.**, Փշե պսակով մարդը, «Audio-Visual Courier», 1999, № 1:
158. **Ջաքոյան Գ.**, Առասպել արարողը, «Խորհրդային Հայաստան», 1990, հուլիսի 25:
159. **Ջաքոյան Գ.**, Բոլորս պարտք ենք նրան, «Երեկոյան Երևան», 1990, հուլիսի 25:
160. **Ջաքոյան Գ.**, Սերգեյ Պարաճանովի գործերու ցուցահանդեսը Երևանի մեջ, «Լրաբեր», Լոս Անջելես, 1988, փետրվարի 20:
161. **Ջաքոյան Գ.**, Փարաջանով. վերջին կոլաժ, Կինոսցենար, 1996:
162. **Ջաքոյան Գ.**, Ինչպիսի լեզվով պետք է խոսեն հայկական ֆիլմերի հերոսները, «Գարուն», 1985, № 2, էջ 76-82:
163. **Ջեյթունցյան Պ.**, Խոսք թատերագետ Ռազմիկ Մարոյանի «Նռան գույնը և Փարաջանովի լեգենդը» գրքի մասին, «Համայնապատկեր», Գլենդեյլ, 2001, № 3, էջ 24-25:
164. Ջրույց Սերգեյ Փարաջանովի հետ, «Էկրան», 1969, № 5, էջ 4:
165. Ջրույց Սիլվա Կապուտիկյանի հետ, «Էկրան», 1976, № 3, էջ 11:
166. **Ջուրիկյան Ռ.**, Հարևանի «Բարյացակամությամբ», «Ազգ», 1994, փետրվարի 10:
167. **Էդոյան Հ.**, Փողոցի բաժանվող մասուն, Երևան, 2006, էջ 69:
168. **Էլիավա Լ.**, Փարաջանովացում, «Չվենի մցեբրոբա» (վրացերեն), 2008, նոյեմբերի 7:
169. **Թաթիկյան Շ.**, Շռայլ էր, ինչպես ապրիլյան երկինքը, «Առավոտ», 1996, հունվարի 27:

170. **Թաթևյան Շ.**, Դե՛ երգիր, Սայաթ-Նովա, «Երեկոյան Երևան», 1990, հուլիսի 25:
171. **Թաթոյան Ռ.**, Ուկրաինան «Փարաջանով» ֆիլմը ներկայացրել է «Օսկար» մրցանակի, «Ժողովուրդ», 2013, սեպտեմբերի 19, էջ 7:
172. **Թահմիզյան Հ.**, Դեմքեր, դիմակներ, Երևան, 1980, 156 էջ:
173. **Թահմիզյան Հ.**, Կինոռեժիսորներ, դերասաններ, հ. 1-2, Երևան, 1978-1984:
